



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1931

9 May.

19 NOV 2011

Վ.

Գ. ՄԵՍՅԱՆ

891.99

Մ-64

# ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

891.99

Մ-64

00.ԽԵՂ.Գ.Մ.Մ.Ի

1931

28.06.2013

19128 19389



Հ. Մյասնիկյանի անվան տու. երտա. «Զարյա Վառառկա»-ի.

Գտավելը 427.

Գլամիլիս ք 697

Քառակա 1500.



ԳԵՎՈՐԳ ՄԵՍՅԱՆ.

891. 99

Ը-64

## ԽԱՎԱՐԻ ՄԵԶ

I

Ով գիտե յերբ եր շինված Մարիամ աքոր սրա-  
հը և քանիսին եր մաշել նա: Կտրի ճակատին շարած  
քարերը, վոր մի ժամանակ զարդարում եյին նրան,  
իբրև նորահարսի գլխի սարք՝ այժմ թափթփվել եյին  
մեջընդմեջ ու մացածները տեղահան յեղել տակից  
բած խոտերից: Սեացած ոճորքն ավելի եր կոացել  
ու կոթնել տակի հսկա սյունին, վորի ճակատից ժա-  
մանակն ու ծուխը աշխատել եյին ջնջել շինող վար-  
պետի շնորհքը, Գրադեատ չեր յեղել նա, վոր իր ա-  
նունը թողներ սյունի վրա—նախշեր եր արել կեռ ու  
մեռ, համաշափ շրջանների մեջ:

Կլոր քարերից շարված նրա պատերի արանքնե-  
րում իրիկունները հաճույքով ձըտվտում եյին ծղրիտ-  
ները, ու ճրագի մրոտ լույսի հետ մի խորհրդավոր  
տիրություն փոռում նրա անկյունների կիսափակարում:

Միակ բնակիչ Մարիամ աքիլը նույնպես մոռա-  
նում եր այդ պահին իր շուրջը, ու ծղրիտների նման  
տարվում իր կես ուրախ, կես տխուր յերգով, վոր  
յերգում իր անվերջ, կրկնում անձանձիր.

Զանեղ մատաղ, քու ջանիդ,  
Անումիդ մատաղ, անումիդ...



ZUUR AAM. CCP

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ցերեկները՝ ճախարակի տակ գունդունում եր նա  
բարակ ձայնով նույն սրահի խարխուլ տախտին, վո-  
րի շինողը, լուսահոգին, պակաս հիշողություններ չեր  
խառնում իրա յերգին: Բայց նրա հիմնական վիշտն  
ու ուրախությունը իր մինումարն եր—Սերգոն: Հնա-  
մաշ ինսիրը չեր ծածկում ամբողջ տախտը. ենքան վոր՝  
ինքը նստած եր վրան, ճախարակն ել հետք, մնացած  
տեղերը բաց եյին զանազան մեծությամբ:

Նա նստած եր հիմա, աչքը ձախ ձեռքի մալան-  
չի բերանին ու ճախարակի միալար ճըռինչն ական-  
ջումը: Տեսնում եր, թե ինչպես իր պտղունցից դուրս  
է սողում բարտկ թելը, մալանչը հալվում բռնի մեջ  
կամաց-կամաց, կուռը յետ եր տանում, վոստովը տա-  
լիս թելը, ու նորից սկսում մանել Պառաված ճախա-  
րակը ճըռնչում եր որորվելով, իրկի ծայրը բռուում եր  
միապաղադ. նորից եր սկսում հալվել մալանչը, նորից  
եր դուրս սողում նրա յերեք մատների արանքից թե-  
լը ու նորից նրա հետ բարձրանում Մարիամ աքոր  
յերգը.

Զանիդ մատաղ, քու ջանիդ,  
Արենդ մատաղ, արեիդ...

— Ես ե, ես ամիսը վոր դուրս գա, ես մեկել ա-  
միսն ել դա ու գնա՝ ամտոր կանցնի, աշունքը Սեր-  
գոս կդաս...

Հաշվում եր եսպես նա ամեն որ, որական մի  
քանի անգամ, բայց չեր ձանձրանում դրանից, ինչ-  
պես վոր չեր ձանձրանում իր յերգից:

Սերգոն Մարիամ աքոր վորդին եր՝ հեռու աշ-  
խարհքում, ինքն ել չգիտեր տեղը: Նրա գնալուց հե-  
տո մի անմեղ բանով հիվանդացել, մեռել եր մյուս

վորդին, Գրիգորը, վորի մասին դեռ չեյին ել գրել  
Սերգոյին: Դիակի վրա տանուտերն ու գյուղի իշ-  
խանները խոստացան, սիրտ տվին Մարիամ աքորը,  
վոր գեղովի թուղթ կշինեն, կուղարկեն թագավորին,  
թե ել ուրիշ պահող չունի Սերգոյից բացի, ու նրան  
կադատեն դուլուղից: Յոլորին հավանական թվաց այս  
միտքը, դրական կարծիք հայտնեցին բոլորը, Մարիամ  
աքիրն ել հավատաց, միսիթարվեց իրան-իրան: Բայց  
թաղելուց հետո, յեկան քելեխը կերան, ցրվեցին ա-  
մենքն իրենց տաները. ել վոչ վոքի միտը չընկավ վոչ  
Մարիամ աքիրը, վոչ ել նրա Սերգոն:

Ես ու են, շատերը խորհուրդ տվին Մարիամ ա-  
քորը, թե «արգա գրել տու», «պիսերին տես»: Բայց  
գե, ինչնվագ տեսներ: Մի անգամ իր յերկու հավերից  
մինն եր մորթել, տարել. մի ուրիշ անգամ ել՝ մի  
ըստիլ\*) թաղա հարած կարագ, վոր մանածի հախումն  
եյին բերել: Համն ու կարագը տնտղելիս ասել եր՝  
«Լավ կլի, վոր բանն ինձ հասնի ենպիսի մի թուղթ  
գրեմ, վոր քարը ճղի, անց կենառ. բայց թե սա ել  
եր կողմից եր խորհուրդ տվել՝ «ըստարշինին տեսնել  
վոր գործը շարժի»:

Ուշնել եր Մարիամ աքիրն ել նրան. Հանգստա-  
ցած յեկել նստել տանը, աչքը գցել, թե հրես Սերգոն  
մի որ պիտի ազատվի ու գա իրա դուռը բաց անի:

Ուրիշ անգամ ել, մի բան չեր ճարել, վոր յերեսին  
կալնի, գնա հարցնի, թե ինչ դառավ Սերգոյի բանը:

Ուրիշներն ել եյին խորհուրդ տվել ստարշինի  
մասին, վոր առանց տեսնել բան չի գուրս գալ...

\*) Գրվանքու:

բայց թէ Մարիամ աքիրը ինչ պտեր ասիլ նրան։  
Թոխվա Սհակը իրենց սանհերն եր, ճի՞ն, պապական։  
իրա հալը չգիտե՞ր, ինչ ուներ, վոր ինչ տար։ Մի  
անգամ ասել եր. «Սանհեր Սհակ, դու Սերգոյիս ա-  
ղատիր, թող գա մի տարի դռանդ զուլուղ անի»։

Սրանից գենը ինչ կարող եր անել, կամ ինչ  
խոստանալ Մարիամ աքիրը։

Քելեխն ուտելուց հետ շատ ժամ ժամանակ անցավ։  
Գրիգորի մահի տարին համարյա լրանում եր, բայց  
գեռ Սերգոյիցը մի խարալ չկար։ Հիմա Մարիամ աքի-  
րը ել նրա ազատվելու մասին չեր մտածում. գիտեր,  
վոր անտեր անտիրական ազատվել չի լինում, հաշվում  
եր միայն նրա ծառայության մնացած ժամանակը։

Ճախարակի ձայնը նորից բարձրացավ։ Առաջին  
դրած խախալի միջից մին-մին բաժանվում ու հատ-  
նում եյին նրա ձեռքում ձերմակ ու քնքույց մալանչ-  
ները։ Ճախարակի յետեր, մի ուրիշ խախալի մեջ յեր-  
կու կծիկ ու վստեր կային։ Թանի ամիս և հա, նա  
մանում ե, մանում վործից ազատ ժամանակը, առանց  
շտապելու, խնամքով ու հոգատար։ Գառան բուրդը՝  
գրվանքա-գրվանքա ինքն եր բերանի պատառից  
կտրելով՝ առել։ Նա ինքը գդում եր, ինքը մանում ու  
ինքն ել պետք ե գործեր։ Թեկն ասես արբեշում լինի  
— բարձկ, փափուկ։

— Մատաղ սրտ տիրոջը, ամեն թելը վոստովը  
տալիս մտածում եր Մարիամ աքիրը ու, ասես թե,  
իր մի մասն ել խառնում եր միշտ թելի հետ ու մա-  
նում, փաթթում վստին։

Շուտ-ջուտ կանգնեցնում եր ճախարակը, առաջ  
քաշում վստերի խախալը, մին-մին ձեռքն առնում

վոստերն ու կծիկները, ծանր ու թեթև անում, իրար  
տալիս, համեմատում, վոր տեսնի, թէ վորքան կլինի  
մանածը, վորքան կլինի պակասը։

Հետո, նորից խնամքով դարսում եր նույն խա-  
խալում, ինչպես վոր առաջ, նորից գնում ճախարակի  
քամակին ու մանում։

Ես անգամն ել վոր կշոեց ձեռքով, հետո նայեց  
իւկի վրայի կիսատ վոստին, առաջին մալանչին ու  
մաքով ել հիշեց, թէ վորքան բուրդ և մնացել գգելու՝  
զգաց, վոր բավական ե, կլրացնի ամբողջ չուխացուն։

— Յերեք ըստի ու կես կլինի մանածը. մնում ե  
կես ըստիլը, են ել կպրծնեմ մինչև հունձը։ Ոչովի-  
չմ տալ ըրեխուս չուխան, վոր մանելիս շանիծեն։  
Վոնց վոր մանել եմ յես, ենպես ել կմանես մնացածը։  
Կարմիր արևի տակ մանում եմ, վոր կարմիր արևի  
տակ մաշի։ Հնձից հետո ել կիննեմ, վոր արևով գոր-  
ծեմ, կտրեմ։ Կծալեմ, դնեմ բոխչումը, մինչև վոր կգա  
զուլուղից, կձևեմ, կարեմ ես մատներովս ու հազցնեմ։

Նրա աչքի առաջով անց կացավ ամբողջ ամառն  
այդ մի քանի խոսքերն ասելիս։ Նա աեսնում եր, թէ  
վոնց և հինում նրա չուխան Շամամ աքոր հետ, վորը  
վողջ գյուղում ամենալավ հինողն ու գործողն եր և  
խոսք եր տվել ոգնել երեխու չուխան հինելիս։ Նա  
գործելն ել տեսավ, նրա կտրելն ել։ Յերբ վոր ասաց  
«կձեւեմ», թվաց, թէ իրա առաջին կանգնած և Սեր-  
գոն ու ինքը շալը բոնած՝ վերցնում ե նրա հասակի  
շափսը...»

— Ուհ, բոյիդ մեռնի քու մերը, Սերգո ջան,--  
հանկարծ խոսեց մտածմունքների միջից ինքը,--ես  
դանովը նի չի մտնիլ.

Ճախարակն ելի շարժվեց. Մարիամ աքիւն ելի  
աչքը ձախ ձեռքի մատներին՝ բաց արավ կուռը, մի  
մեծ աղեղ զծեց ողի մեջ իր գլխի վրա ու նորից սկսեց  
որորվել ճախարակի հետ, ու նրա ճռնչոցին խառնեց  
իր անվերջ ու աննման յերգը.

Զանիդ մատաղ, քո ջանիդ,  
Անումիդ մատաղ, անումիդ...

## II

Այն տարին, վորի աշունքը պետք և Սերգոն  
գար՝ ամառը գյուղի գիննվոր յեղած տղաներին ել հա-  
վաքեցին, տարան:

Վոնց վոր մի անգամից մի թալան ընկնի: Գյու-  
ղում աղմուկ, իրարանցում իրար խառնվեց, ու, հըն-  
ձատեղից, գութանից, տանից ու չոլից հավաքեցին,  
ճանապարհ դրին դեպի քաղաք:

Թոռ վոչ վորի հավատ չեր դալիս: Բայց նշանա-  
կած որը, վոր պաշարը մեջքներին կապած ջահեների  
խումբը գյուղից բաժանվեց՝ նոր գյուղն իրան զգաց,  
վոր հա, սա հանաք չի: Վոնց վոր մի ջաղացի ջուր  
կտրես վերելոց, ենպիս ել գյուղի թշոնը կտրեց:

— Ես ինչ խաբար եր,—հարցնում եյին իրար:  
— Ասում են խառնվածքություն ե, վալլահ...  
— Ես ինչ խաբար ա, —հարցնում եյին գգրին:  
— Եշի անգամումը քնած եք. զուռնա յեն փը-  
չում, նոր եք հարցնում ինչ խաբար ե—պախոտ ա,  
պախոտ:

— Պախոտ...

Տերկարացնում եյին նրա յետերից, գլխները շար-  
ժում... հասկանում:

Պատմում եյին իրար, բացատրում, յենթադրում,  
թե՝ հնչից կլինի պատահած եղ «պախոտը», բայց  
դարձյալ մի պաղ անտարբերություն նստած եր դեռ  
նրանց ներսը. ասես թե չեյին հավատում դեռևս ի-  
րենց ասածներին, ու նոր գալիք պատերազմի պատ-  
կերը նրանք ձեռում եյին իրենց տեսած ու լսած պա-  
տերազմների վրա:

— Հացը կթանգանա, գարին կթանգանա...  
— Մի խոսքով՝ ապրանքը կթանգանա:  
— Ունեցողի աչքը լուս, առուտուրականի աչքը  
լուս:  
— Թող Զաղարանց Ոսեփին ուրախանա, վոր հի-  
նը նորին կոխած ա. ամբարները լիքը:  
— Տեսնաս քյասիրի ու մշակի համար վհնց կլի.  
գործ կրացվի, թե...  
— Ե՞ս, ելի վայը տարել ա քյասիրին ու աշխա-  
տավորին, վոր վոչ տանն ունի, վոչ չոլումը. ինչ  
պտի բացվի, ելած աշխատանքն ել կկտրվի, հացը  
ձիավոր կրառնա առաջներիս, կտրալ չենք յետերից  
հասնենք:  
— Կոռն ու բեգառը չի կտրվիլ...  
— Զահելներին կքշեն, տանեն գյուլի բերանն  
անեն—մեծն ու յերեխան կմնան տանը, դուռը յերե-  
ներին փակ:  
— Դե հնա ասացեք կոյիվը մեր մեջքովն ա ելի:  
— Բա վհնց ես զիտում, թագավորն ինքը պտի  
գնա կովի, թե իրան տղան:  
— Մալադից Սիմոն, —հեգնեց միկետան Ասա-  
տուրը, գյուղի վաշխառուներից մեկը, —թագավորը  
յանդիշա, վոր առանց քու կամքի կոյիվ ա սկսել. ել

չի գիտում վոր քամակիցը յետ կդառնաք դու ու Ստեփանը՝ կոխվը կխափանվի:

— Ինչի՞ չես մասխարա դցիր վեգու ալչու յա—  
վոչ տղադ են կոխվ աարել իմի պես, վոչ ել թե եգուց  
երեխադ սոված ա մնալու...

— Բա նոր ես գիտում, վոր կոխվը մեր մեջքովն ա  
անում խեղճ ու նաշարի, —խառնվեց Ստեփանն ել, —  
քեզ ինչ կա, արադիդ կեսը ջուր պտի դառնա, 12  
կապեկանոց տրիցետկան ել մին մանեթ: պլոկի, քա-  
նի կարաս...

Բայց ուրիշների հետաքրքրություններն ել այլ  
ուղղությամբ եր, սրա համար ել սկսված վեճը չխո-  
րացավ միկիտանի հետ:

— Տեսնաս վճը կողմի վրա յա վեր կենում կոխվը:

— Ո՞վ կիմանա թագավորի միտքը:

— Դու ասա, Յապոնի վրա չըլի...

Կասկածներ տարան, յենթադրություններ արին,  
թե ում վրա կլինի ես կոխվը, բայց մի շարթից հետո,  
վոր քաղաքից վերադառները պատմեցին ավելի  
շատ բաներ՝ այն ժամանակ ել հարցնում եյին իրար.

— Ախալեր, մյագյամ ավստրի ազդ ել կա. սերբի  
յել կա...

— Իմացած չեմ, վալլահ: Ելի լեմար իմացած եմ,  
ինգլիզն ու ֆուանգսուզն իմացած եմ, Յապոնը իմա-  
ցած եմ, ամմա ավստրին՝ ըսկի, իրան որումը, ով ա  
իմացած:

Մի քանի շաբաթ ել վոր անցկացավ, արդեն  
ամբողջ գյուղը, կանայք ու յերեխաններն ել գիտեյին  
դաշնակից ու հակառակորդ կովողների անունները:  
Տարորինակ չեյին հնչում այլևս դրանք:

Գյուղը թաց դատարկ՝ կանայք, յերեխայք ու  
ծերերը միջին նստած:

Շնահաջոցը կտրվել եր: Գյուղի կենդանության  
նշանը գզը ու քոխվի յերեխակի ձայնն եր, վոր  
բեգյառի յեր հանում սրա ու նրա սայլը, սրա ու նրա  
ձին ու լծկանը:

### III

Գյուղն ականջը ձենի յեր պահում հիմա, թե  
վոր թաղումը, ում տղիցն եր մի գիր գալիս, վոր հա-  
վաքվեն գլխին, կարդացնել տան, նորից կարդացնել  
տան, մի ճիշտ, մի հաստատ տեղեկություն իմանալու  
կովիցը, թե յերբ ա վերջանալու: Այդպիսի հատ ու  
կենտ ուշացած նամակները շաբաթներով թարմու-  
թյուն եյին պահպանում՝ պտտվելով թաղեթաղ:

Ամեն զինվորի տեր խնդրում եր, տանում, կար-  
դացնել տալիս, մեջն իմանում ու նորից սուրբ-սուրբ  
բերում հանձնում տիրոջը, մինչև վոր մի ուրիշին մի  
նոր նամակ գար:

Նամակներ չստացողների համար շշուկներ եյին  
ծնվում գյուղի հակառակ ծայրերում, խորհրդավոր  
պատմում եյին իրար այդ շշուկներն ու զգուշացնում  
ուրիշներին չպատմելու:

Այդ զգուշացումներն ավելի արագ եյին պտտվում  
ամբողջ գյուղի բերաններով, թեև մի պահպած տագ-  
նապով, սակայն՝ անզսպելի կանացի մի ներքին հա-  
ճույքով:

Առաջին դժբախտությունը գյուղին պատահելուց  
հետո՝ ամբողջ գյուղը նոր զգաց մոտեցող սարսափի

մեծությունը, վորը բոլորից ել մինչույն հեռավորության վրա եր գտնվում:

Յեկող նամակներից մեկում ընկերները գրել եյին, թե Զաքունց Ստեփանը սպանվեց. Եղ լուրը չպահվեց գուղտնի ու Ստեփանի ալեոր ծնողներն ամենից առաջ սգվորներ դառան գյուղումը:

Այդ լուրը կանգնեցրեց բոլորին տագնապի դոանը և սարսափով նայում եյին, թե յերբ պետք է բացվի իրենց առաջ ել:

Առաջ գյուղում միշտ վախենում եյին նամակի ուշանալուց, նամակ չգալուց իսկ հիմա յեկող նամակներից ավելի եյին վախենում: Մի քանի ամիս եր ընդամենը, ինչ Ստեփանը գնացել եր, և հիմա լուրը յեկավ:

Այդ լուրը կտորեց Մարիամ աքոր ծնկները, ել չեր կարողանում տաւից զուրս գա նա: Ստեփանի մոտ մոտ ամենից շնուր նա լաց յեղավ: Իր սեծ վիշտը հիշելով՝ լաց եր լինում նրա համար ու ինքն իր սե մտքերից վախում, սարսափում:

— Ելի ջուրը տարած Ստեփանի մերը տեղը մինս ել ունի, վոր անունը տալիս ա, բա վոր...

Ու խեղդվում եր զրանից հետո և վերջացնում.

— ... Իմ լեզուս պապանձվի, Սերգո ջան, իմ լեզուս պապանձվի...

Ամեն ծեզի, ամեն ժամաժանքի, մի-մի գույգ մեղրամոն ձեռքին՝ մոտենում եր, կպցնում սեացած թարեքին ու չոքում նրա մոտ գեպի բաց լուսամուտը: Աչքերն արցունքը լիքը՝ բարձրանում եյին հայացքի հետ նրա կոները, ու մնում քարացած: Սմկած պողոները դողում եյին ջղաձգորեն ու լսվում եր նրա շշունջըն ընդհատ, ընդհատ.

— Աստված ջան, աստված ջան, անումիդ մեռնեմ, աստված ջան...

Ել դենը շարունակել չեր կարողանում, ել վոչինչ լրացնել չեր ուղում. ամենակարողը պետք ե հասկանար նրան, թե ինչ ե հայցում իրենից, ում համար ե աղոթում:

Սակայն ասես թե, այն, ինչ վոր նրա շրթունքները չեյին կարողանում շարունակել, այն, ինչի մասին մտածելիս ինքը ցանկանում եր, վոր պապանձվի ու իր լեզուն չկարողանա ասել՝ նրա սիտքը չեր պապանձվում ու դիտմամբ առաջ եր գնում, բայց Մարիամ աքիրը սարսափած՝ խառնում եր այդ սոսկալի մտքերն իր անզոր աղոթքով.

— Դու աշխարհն խաղաղություն գցես, գու թագավորների սիրառ վողորմ գցես, ով յերկնային թագավոր...

Ու ինեղձ Մարիամ աքիրը, վորի հույսը գյուղում պիսերն ու քոխվան եյին, գյուղից դուրս՝ աստծուն եր ուղղում իր աղոթքները այն միամիտ մտքով, թե կամ՝ աստված կա, վոր կարող ե խաղաղություն գցել աշխարհս, կամ թե՝ կարող ե վողորմ ընկնել թագավորի սիրառ, յեթե միլիոնակոր Մարիամ աքիրների արցունքներն ու աղոթքները նրան հասնեն: Բայց նա իր մտքի խավար տանջարանից յելնելու մի հնար պետք ե գտներ: Նա չգիտեր, թե ինքն անտեղյակ և աշխարհիս ու բնության որենքներին. նա չգիտեր, վոր մարդիկ են «ամենակարողներն» ու նրանց ստեղծած պայմաները: Արա համար ել բռնում եր նա իր համար միակ ճամբան – ցանկանում իր անզոր աղոթքով շարժել մի չեղած զորություն... և այս անորոշու-

թյունը թմրեցնում եր նրան, և իր լուռ հոսող մռքերի հետ նորից լսվում եր առաջվա կերկերվող ու գորովալի շշունջը.

— Աստված ջան, աստված ջան, քու անումիդ մեռնեմ, աստված ջան...

#### IV

Հարվածը Մարիամ աքորը հասավ այն բողեյից, յերբ քոխվան իրան են խոսքն ասեց:

Վոնց վոր ոձից խայթված, ինչ վոր հին թագենաված կասկածներ ուներ ու վատ մտքեր Սերգոյի մասին, վորոնցից վախենում եր՝ այժմ վոտքի եյին կանգնել զինված նրա դեմ. ել ով եր կարում ցրել նրանց:

— Պատահական խոսք եր, աքիր, զնամիշ ելին անում, թաղ ու թառակ վրա յեկած, բայց ով եր կոռողանում համոզեր: Ուրախ կլիներ ինքն եւ յեթե համոզեյին. բայց չեր լինում: Միշտ քըքրում եր նրա ներսը այն միտքը, թե նա մի բան գիտեր, վոր ասեց.

— Թե չե ինչո՞ւ պետք ե եղածս աներ: Թագավորն ել անպարտք չի լինում. ինչ անենք, վոր ինքն ել պարտ թող ուրիշ բան տաներ, թող հագի շուրերը հաներ, բերանի պատառը խլեր, տար, սաղ գեղը գիտեր, ինքը չեր գիտում, վոր են Սերգոյինն եր, ինչո՞ւ եղածս դանակով տվալ սիրտը պատահց ու մեջը աղով լցրեց:

Մղկտում եր, մղկտում եսպես խեղճ պառավը որ ու գիշեր ու հովություն չեր գտնում: Չեյին կարողանում հանգստացնել հարևանները նրան, չեյին կարողանում հավատացնել, վոր Սերգոյին բան չի պատահել վոր ոչով վոչինչ չգիտե նրա մասին:

— Տանում եր, թող ելի տաներ, աշքը կրխեր, ամմա են խոսքը նա ինչո՞ւ ասեց. թե մի բան չկա, մի բան չգիտեր՝ են խոսքը նա վճնց ասեց...

Լալիս եր, լալիս, լալիս. աշքերն աղբյուրներ եյին դառել, արտասուքը չեր կանգնում — հոսում եր միալար:

#### V

— Զենդ աստված կտրի. ելի ձենը վեր արավ, — ասացին, ինչպես ամեն անգամ, գոներին նստուած կանայք, ու տեղներից վեր կացան, յերբ հնչեց գզիր Ալեքի ծանոթ ձայնը: Նա մի թաղից մյուս թաղն եր անցնում, մի անից՝ մյուսը. վորի կտրից, վորի ոըռնից, վորի լուսամուտից, որվա վոր ժամն ել լիներ, ծղրտում եր, վեր կացնուժ-տեղից՝ ու հայտնում, ում ինչ պետք եր: Ել վոչ վոք չեր հիշում, թե նրանից առաջ ուրիշ գզիր ե յեղել են գյուղումը: Յեթե նրա նոր հասակակից ծերերին ել հարցնեյիր, թե՝ «Ալեքը քանի՞ տարի յե, գզիր ե»: կասեր. — «Ալքս բաց եմ արեւ Ալեքը զզիր»:

Նրա հրամանի ամեն մի խոսքը բարձր եր, զիս պարզ այնպես վոր մյուս թաղերումն ել լսվում եր նույնությամբ, բայց ելի նա կրկնում եր յերկրորդ, յերրորդ անգամը ամեն մեկին ու մտրակը ճոճելով, շների հետ վիճելով անցնում մյուսներին: ■

— Երեկք շամբթի որը քանդաք պիտի գնալ... Քանի կենում, մոտենում եր նրա սաստկացող ձայնը, վորի մեջ մի սպասնալիք կար, մի ահ, վոր համակում եր փոքրին եր մեծին ել...

— ... Ում վրան վոր սեղաբիմկա կա, ում վրան վոր բեզյառի թռվջի կամ, մանրածմխս կմա,

վորտեղից վոր ահազիր արեք, եգուց... Արտասանում եր մի շնչում, մի քիչ արանք տալիս ու նորից նույն վորոտացող տոնով, ինչպես սկսել եր՝ վերջացնում...  
— ... Վոր իրեքշաբթի որը անպատճառ քաղաք պիտի գնալ... գուրենատի հրաման ա, թէ չե կաշի-ներդ կմաշկեմ...

— Մեռած Ալեքի ձենը ամմա գյուռ ահամ, — կատակում եյին հասակավորները:

— Գյուռ ասես թողաս, Պարսեղի եղը վոր նրա տեղը խուանչի, հավատա ձենը մեզ չհասնի, ամմա եղ փուչը վոր սկսում ա՝ ըստեղ իրար խոսք կարում չենք հասկանա:

— Հենց ել զուլուղին հաստատ ե. մին տես թէ ամեն խոսքը քանի անդամ ե ասում:

— Վոր հաստատ չըլի եսքան տարի իրա տեղը կմնա՛. — Այսպես գյուղի ամեն մասում, վորտեղ լսփում եր նրա ձայնը հասակավորների զրուցն ել եր իրենով զրադեցնում մի պահ:

Քանի մոտենում եր նրա ձայնը, ենքան եղ մասսի յերեխաների խմբերը նոսրանում, անհետանում եյին, իսկ շնչերի խմբերն ու հաջոցն ենքան խտանում եյին Ալեքի շուրջը, կանայք կոները կծկած մոտենում եյին դեպի նա.

— Ա. աղա, Ալեք, եղ ինչ հրաման ա...

— Բաշվեցեք կորեք, վրա եր պրծնում պատաս-խանի տեղակ ու շարունակում:

— Գուրենատի հրաման ա, ով վոր եգուց... Աչքներից ծածկվելուն պես՝ ձեռքները չում եյին Ա-լեքի թիկունքի յետեկց.

— Բըհ, առ ե, հողեմ գլուխդ...

Ալեքի ձայնը բարձրացավ մոտիկ հարեանների դռներին, հետո յել նրանից դենը, հետո ավելի դենը, քանի գնաց նվազեց ու բոլորովին կտրվեց գյուղի հեռավոր ծայրում...

Հետեւյալ որը կրկնվեց նույնը, ինչ վոր շատ անգամ եր յեղալ—ինչ վոր լավ ծանոթ եր գյուղին:

Պղինձ, կուժ, բաժինքի կարպետ ու խալի յեր, վոր Ալեքի ուսն եր բարձրանում ու հավաքվում գյուղի կանցելյարումը: Դութանի շղթա, խոփ, կացին, կանանց գլխի սարք. մի խոսքով, ում տանն ինչ կարելի յեր գտնել ավելի արժեքավոր տիրոջ համար՝ բերվում եյին:

6928-5

VI

— Քովիսա Սհակ, բա իմ հալը քեղ այան չի՞ւ: — Պրծի, ա պառավ, ինչ անում ես արա, զրավախտը չի, եսոր հազար մի բան ուսնենք:

Մարիամ աֆիրը մին ել կրկնեց իր ասածը, մին ել ասեց, ինչ վոր ասել եր:

— Հեքիաթ լսելու ժամանակ չունեմ, ա պառավ, պրծի, ասեցի քեզ, — բարձրացրեց ձայնի շեշտը քոիւվան:

— Ցես քեզ երեկ չասեցի հազիր արա ոխտը մանեթ իրեք շահին:

— Ասացիր, քե մատադ, ասեցիր, ջանիդ մատադ, Ալեք ջան, դե վոր...

— «Ին վորը» են ա, վոր յա ձեղ համար իմ ասելը, յա մին շուն են չոլումը հաշած:

— Ինչի՞ քե մատադ, ինչի՞ պահուստու



— Իե պլրծի, տեսնում ես, վոր սրանք հայեվար հասկարողը չեն, — դարձավ քոխվան այս անգամ արդին զգբին ու յերկուսով մտան տուն, նրանց յետեկից ել Մարիամ աքիրը՝ ձեռները կծկած:

— Ի՞նչ անեմ, թող ինչ վոր ճարեն, տանեն, հալրաթ մեր տերն ել աստված կնի, մտածեց ու մաց կանգնած իր տան շեմքում:

Թարեքի պղնձե ամանները զըրնգոցով հավաքվեցին. Ալեքը պղնձե փարչն ել վերցրեց տախտից, կուժը հողե յեր, տախտի քեչան՝ հին:

— Ել ուրիշ ի՞նչ ունեմ, բեր, սա թամամիլ չի:

— Վոսկով լիքը սանդուղներ, — պատասխանեց Մարիամ աքիրը դառնացած, — հրեղ տունս, հրեղ՝ դուք, տարեք, ինչ վոր ունեմ:

Ալեքը վարժ ձեռքով ու հմուտ աչքով պրատեց քունջ ու պուճախը. արժեք ունեցող մի բան չգտավ: Մին ել աչքերը չոեց պառավի ծալքին:

Ալեքը վոր դիմեց դեպի ծալքը՝ Մարիամ աքորը վոնց վոր թե կայծակը շանթի: Նոր հիշեց ու սիրառ լըքքաց: Առաջ ընկավ, բայց ծնկները թուլացան ու ընկավ ծալքի ու Ալեքի վոտների արանքը:

— Զանիդ մատաղ, արևիդ մատաղ, Ալեք ջան, սանահեր Սնակ, թողիլ մի, քու շանըդ մատաղ, քու դունըդ մատաղ, թողիլ մի...

— Ա պառավ, դրադ կաց, ասում եմ...

— Զե, չե, թողիլ չեմ, Ալեք ջան, թողիլ չեմ, մազերս կոխ տու, երեսս կոխ տու...

— Իմ փայ խաթաս գտել եմ յես համ, — մոռաց Ալեքը ու յերեսին խաչակնքեց:

Վոր կողմով նա ձեռքը մեկնում եր գեպի ծալքը՝ ծնկների վրա ընկած պառավը վրա յեր ընկնում, խտում ջուխտ ձեռքով, փաթաթվում նբա՛ կռանը, վոր չթողնի:

Ալեքը մի բոպն մնացել եր անգործ գրության մեջ, թեև ուրախացած, վոր կարողացավ վիսի ընկնել: Քոխվան դեռ պարզ չգիտեր, թե եղ ի՞նչ բան եր, ի՞նչու եյին Մարիամ աքիրն ու զգիրը իրար հրհում: Ենք մինչ Մարիամ աքիրն աղերսանքը գեմքին՝ մին գոխվա Սնակին եր զիմում, վոր չթողնի, մին Ալեքին, վոր չանի՝ զոխվի ու զգրի հայացքները հանդիպեցին իրար: Նա զգաց, վոր ինքն անգործ և մնացել, մի բան պետք ե անի, զգաց, վոր ինքն իշխանավոր ե, իրավունքի տեր, և այս գիտակցությունը հարկադրեց նրան միջամտել իրեն վայել ձեռվ՝ քոխվայավարի. և նա ինքն իրեն հաշիվ չտալուվ, արդյոք կատարվող պատկերի հասկանալուց, թե չհասկանալուց՝ գոռաց Ալեքի վրա.

— Տո հայվան, հայվան ողի, քեզ ել ասեմ, պլրծի.

... Ել աչք չհասավ. Ալեքը վոտքով մի կողմ շըպրտեց իր առաջ սողացող պառավին, Մջեց ծալքը, ու դեռ ու դեռ ածելով պատառութած տեղաշորերը՝ տակից դուրս քաշեց մի թոփ գետնագործ շալ:

Պառավը ծըվծվաց ու նորից վեր թռավ տեղից գլուխն ու կուրծքը քանդած, ծարս կացավ գեպի Ալեքի ձեռքի շալը, վոր խլի, բայց մտրակի կոթի ծայրը ավելի շուտ դիպավ Մարիամ աքոր բաց կըծքին, բան թե նրա ձեռքը իր գործած շալին: Հարվածից քամակի վրա փռվեց պառավը, իսկ զգիրը արագ ձեռքը փոխ տվավ ու շալի կապած թոփը դրավ մյուս

կուն տակին: Սհակի աչքերը չովեցին, ու նրանց սկզբի արտահայտող զարմանքը՝ զայրութի փոխվեց:

— Տո ախմախ հարամղաղա, — ճշաց նա զզրի վրա. — ինձ ել ես արածացնում դժւ. եղ շալի տեղը առջ չեցիր գիտում, վոր կոտրատած աման չաման ես հավաքում ինձ համար. Հ՞ը լ:

— Միտս եր, զիսիշ չի անմշւ. իմ տեղակ վոր են սև շունն ըլի՛ պոչը կկորցնի, վմսց անհմտ:

— Քարն ու քացախը ջանդ անես. յես քեզ «զիմիշ» շանց կտամ, հալա կաց դու: Ըստիւ վոսկոռ եր քցել:

— Տանիլ միք, ձեր ջանին մատաղ, ձեր վոտի հողին մատաղ. երեխունս ա, Սերգոյինը. առաջ ինձ սպանեցեք, մեյիդը տարեք, հետո եդ. յես սաղ զլխով թողիլ չեմ ըրեխուս չուխան ես տանից դուս տանեք, — նվկում եր պառավը լացակումած:

— Քու խաթրու յել ըստարշինիս աչքիցն եմ ընկնում, ըռադ ըլի գիխիցս, ասում եմ, ա պառավ, մեծ կնիկ ես, թե չե, աստված վկա յա, յես ինձ խաթր եմ հատ:

— Հստարշինի վոտին ել մատաղ, քունին ել. հավաքեցեք տունս, տեզու, տարեք, ինչ ունեմ. մենակ եդ մինը տանիլ միք, ըրեխունս ա, ձեղ մատաղ...

Սանհեր Սհակ, եհե սանհեր Սհակ, քու ջանին մատաղ, երեսս կոխ տու, ծծերս կոխ տու՝ եղ բանն անիլ մի, քո վորդուն մատաղ.. Ա տղա, մի փեշը մեռոն ենք բերել ձեր տուն, բա նրան ել խաթր չկա. բա եդ բան ա, վոր դու անում ես:

— Ա կնիկ, ինչ ա անում Սհակը, մինն ել իմանա են դոլիցը, կասի՛ «ես ինչ ա անում Սհակը»: Քու անտեր խարջը տալ չես:

— Կտմմ, քե մատաղ, կտմմ, ընչի չեմ տալ...

— Դե բեր, ուր ա, դուն տվիր, Սհակն առավ վմէ. տեր մեղա քեզ աստված...

— Դու տուր, սանհեր ջան, դու տուր իմ տեղակ, ձեռքիս շահի չունեմ, ձեռք բռնի, հենց կսիրես են կանանչ մեռոնը, վորդկերանցդ արկը: Յես ինձ վրա թողողը չեմ, մինն երկուսով կհասցնեմ, լավություն շատ ես արել ես մինն ել արա:

Սհակը զիտեր, վոր «լավություն շատ ե արել» և ստացել ե մինին յերկու յել ու չորս ել. հիմա յել գուցե գեմ չլիներ Մարիամ աքոր բաժին խարջը անցկացնել ընդհանուրի արանքում (քիչ եր գոյանմւմ ավել գցած կոպեկներից) ու հետո հանել նրանից կըրկնապատիկն ու յեռապատիկը, բայց թե նման հարմար առիթ մեկ ել յերբ պետք ե պատահեր: Շալը լավն եր. աչքը տեսավ՝ խելքը գնաց: Վողջ գյուղը վոտքի տանս եր տալիս նա ամեն որ. ուրիշների տըներից քիչ թոփեր չեր դուրս տվել ու ծախծինել իր ուզած մարդկերանցը, իր ուզած գներով: Բայց սա ուրիշ տեսակ շալ եր, ասես մատներ չեյին գործել այլ մաշինա: Ափը մատների արանքն առավ, տընաղեց, «յուֆ» արավ մտքումը, իրան պահեց, վոր գլուխը շշարժի հիացմունքից գետնագործ եր, բարմկ խամ. ասես թե թուղթ լիներ:

— ... Դու տուր, դու տուր իմ տեղակ, սանհեր Սհակ, վախիլ մի...

— Եղա, ելի՛. թագավորի խազնան Սհակինս ա, վոր ումը պակասի՝ Սհակը տա: Տվածներս ել վըզ են գնում, մին եմ տվել ու տասմը... վեր ածա եդ աման չամանը, դարձավ նա Ալեքին: Ես ինչ ա, վոր սրա

Համար կրակդ վեր ես ածում գլխներիս. վոր ծախեմ, անտեր տալացականիդ կեսն ել չի բռնիլ... Ախպեր, զարմանալի յա ես շան խալխիս քանը, կասես թե Մհակը իրան համար ա հավաքում, իրան տալացուկն առջում, թագավորի խարջն ել չեք տալ...

— Ասիլ մի, քեզ մատաղ, դա ըրեխունս ա, ծառու չեմ արել, վոր քսան մանեթ ել տան՝ ծախու չի:

— Հա, «վոր քսան մանեթ ել տան», — կրկնեց հեղանանքով քովիսան, — մեծ-մեծ բրթում նո. բռնի քսան մանեթը, թաթիղ են զնում: իրան մտիկ, իրան խոսքերին. են ել մթամ աղաչանք անելու տեղակ ա, թե ա քոխվա, ա շուն, ա գել վեր կալ, մի քանի մանեթ հաշիվ արա, յոլա տար—եստեղ գլխիս հարսանիք ա սարքել... Հարամա ձեր միջին ըստարշինա կենալն ել ու մատադ ուտիին ել...

— Զե, չե, քոխվա ջան, ասիլ մի, բա յես իմ ըրերեկ եմ արել՝ անջաղ գլուխ քերել. տասն անգամ գրումը զրել եմ, զրկել իրան. վոր գա, ինչ նսեմ:

— Ա կնիկ, զե զոռով ասիլ մի տալ ե... բա ըսկի աշխարքիս հալը տեսնում չես գու, վոր արինը գալիս ա, թե մարդ խեղդի. մւր ա տղար, մւր. թող մին տեսնանք հլա նա ընտեղից յետ ա գալին, վոր նոր նրա չուխի մասին մտածես, ախր դե... տեր վորումած աստված...

— Վնյ, վնյ, ա տղա Սհակ, եղ ինչ ասիր...

Դողդողաց Մարիամ աքոր պառշներն ու աչքերը լնացան:

— ... Լեզուդ վժնց զորեց ա տղա, բա դու վորդու աեր չես, եղ ինչ ասիր ինձ, եհե Սհակ...

Մարեց, ընկավ:

Քոխվա Սհակն ու գղերը ժամանակ չունեյին, շեք տվին ընկած պառավի վրայով ու դուրս յեկան:

Հարմանները Մարիամ աքորը յետ բերին, բայց հանգստացնել չկարողացան: Երան թվաց, թե իր վորդու դիակն են դուրս տարել իր տանից. — հալբաթ մի բան գիտեր, հալբաթ մի խաբար ա յեկել իրան վրա, վոր ասեց, — լալիս եր Մարիամ աքիրը:

Զուր անցան հարևանների գնալ կալն ել, միջնորդությունն ել. վոչ քոխվա Սհակին կարացին կոտրեն, վոր չուխացուն յետ տար, վոչ ել թե Մարիամ աքորը համոզեն, վոր Սերգոյին բան չի պատահել ու հանգստացնեն, Շալը ներկել տվավ Սհակը իրան համար, կարել տվավ ու հագավ:

— Ամեքդ ձեզ համար կացեք համա... զուռումսաղեր, խոսացնել միք տալ ինձ, թե չե աստված վկայա, գիտում չեմ, թե ինչ կանեմ, — վրա յեր պրծնում քոխվան, պառավի մասին ամեն մի ակնարկ անողի:

— Մրտներդ ցավում եր, շուն ու շան... զեե բերանս ինչ ա գալիս... են վախտը ջիբներիցդ կհանեյիք մինը նրա տեղը մին շահի տայիք, վոր ասեյի հա, ցավում ա. թե չե Սհակը տալուց յետո՛ մի լոխդ ել լավ մարդ եք դառնում:

Հենց այդ եր պատճառներից մինն ել, վոր Սհակի մոտ քաշվում եյին խոսել պառավի մասին:

Մինչև հիմա յել Մարիամ աքիրը ապրում ե են գյուղումը, վորտեղ քոխվա յեր Վայիսանց Սհակը: Ամբողջ գյուղը—մեծից մինչև փոքրը—ճանաչում ե նրան: Մազերը խճճած, ցնցոտիների մի խուրձ հաղած, ծիծաղը միշտ դեմքին՝ հանդիպում ե նա ամենքին, մտնում ե ամեն մի տուն ու հրավիրում իր Սերգոյի հարսանիքին, վորը ճանապարհին ե, գալիս ե: Կողքից կախած տոպրակում ամեն ինչ կդանեք: Հավաքում ե ու լցնում թել ու փալաս, չթի կտորտանք, ու ցույց տալիս ամենքին Սերգոյի հարսանիքի շորացուն: Նա ամեն որ, ամենի մոտ թիզ անելով չափում ե ու ձեռում Սերգոյի չուխան, վոր ինքն երգործել: Թեև ուղեցին խել իրանից, պատմում եր նա, բայց ինքը գնաց իեղղեց եղ մարդուն (անունը չերտալիս) ու խեց յետ բերավ:

Ամբողջ գյուղը սիրալիր ու կարեկցանքով ընդունում եր ու կերակրում նրան:

Սմեն անգամ, գյուղամիջում նրա յերեացած ըռպեսին՝ զրույցը նրա շուրջն եր դառնում ու նրա պատճուի:

— Սհակի վմբ մինչ ես ասում, — վերջացնում եյին զրույցը, — հալալ հորը տղան ա:

— Բա զուր են Վայիսանց ասմամ, — ավելացնում եյին մյուսները, — քանի Մարիամ աքոր տուն ա քանդել. հաշիվ կա:

## ՎԱՍԻԼ ԱՂԱՆ

Սայլերի քարվանի ծայրը դուրս յեկավ գյուղից ու ձգվեց թրիկոցով ու ճռոպավ: Ասես վագոններ լինեյին իրար կպած—իրենց լծկաններով, գոմեշներով:

Սայլերի միջին՝ որորվում եյին նրանց լնգլնգոյի հետ, կանգնուած սայլապանները, ճիպոտները ձեռքներին, սոխն ու հաց բերաններում:

Զվարթ աղմուկն ու աշխույժ շարժումը ընդհանուր ուրախությունն եյին հայտնում:

Պատահորդները չեյին ել հարցնուած, գիտեյին, ուր են գնում. սայլապանների փոխարեն՝ կանաչ թարմ ճյուղերով մինչև ճաղերի ծայրերը հյուսած սայլերն եյին պատասխանում:

— Եղ ա դուք ել գնացիք, տեսնանք մենք յերբ ենք կարում դուրս գանք:

— Այ տղա, բոստանները վերջանալու յեն, դեռ մեր երեխերը կանաչ քչկ չեն տեսել:

Գյուղից հեռու՝ սայլերի շարանն սկսեց կարձանալ, փոքրանալ գաշտերի տարածության մեջ: Ճամբան յերկար եր, մի բանով պետք ե կարձացնեյին: Զըույցը, հանաքն ու սրախոսությունը թեժացան: Հասակավորները թողին իրենց սայլերը փոքրերին ու իրենք հավաքվեցին Առուշանի սայլը: Ուշացողները

« այլի կողքովն եյին գնում, ուշքները լարած պատմողի բերանին: ինչ մտքներն եր ընկնում, նրանից եյին պատմում, ինչ աչքներովն եր ընկնում՝ նրանից եյին խոսում:

— Տղեք, են ինչ ա,—ասաց մեկը, ցույց տալով հեռուն:

— Վ՞երը,—հարցրին իրար հետ մի քանիսը, յերեսները դարձրին այն կողմը, աչքներին հուպ տվին, ձեռքները դրին ճակատներին:

— Հրեն ե, են կանաչը...

Հեռվում, գաշտի խորության մեջ կասես թե մի կանաչ փափախ եր ցած դրած, վոր հազիվ եր նշմարվում նստած կապույտ մուժի մեջ:

Խոսքը վասիլ աղի առն ու բաղի մասին եր, վոր ուռած՝ կանաչին եր տալիս շըջապատի ծղնուացած ամայության մեջ: Խոսակցությունն ել դարձագայտ կողմը:

— Հեյ զիդի վասիլ աղա, մի զլուխը բարձրացնի հրմա:

— Բարձրացնում ա ինչ անի, անջաղ կտրվեց ծուխը, նրա են...

— Ամմա հախ դատաստան եր, համա...

— Հախ չեր, ասում են...

— Գմնց չեր հախ...

— Նինց չեր հախ, վոր նա, ասում են, մեկել թափադների թայը չեր. խոճմտանքով եր, աշխատավոր ու հալալ...

— Հալալ ե՞ր...

— Վոր հալալ եր, Գեղա, ենքան կարողությունը վորտեղից եր նրան:

— Աշխատել եր:

— Հալալություննիվ, յանի:

— Բա հարամություննիվ:

— Հալալությունով հարստություն կլի, արա:

— Բա հարամությունով կլի:

— Ե՞ր ես գիտում ե՞գ: Վոր հալալությունով աղաթ ըլի՞ քեզանից ել հալալ. ինչի՞ չես հարուստանում. կարում չես թե մի լուծդ թամամ պահես—մի գլուխ թայը պակաս, թայը պակաս: Հրեղ, Առաքելը. հալալ չի՞: Դրանից ել հալալ ու աշխատավորն ո՞վ ա: Տեսել ես, վոր դրա չուխան ու շալվարն իրար ըուստ գան: Մինչեւ մինն իրար ա զցում, հագնում, են մեկելը հալից ընդհում ա. մեկել մինչեւ են ա իրար անում: Են մեկելն ա մաշվում: Ներկել տախն ել հոլ երազ ա—ով ա տվել զբան երկու մանեթ: Իսկ վասի՛ աղմն. հեռու չեր հո, մտներդ ա: Դովլաթը չոլերովն եր անցել—«Հարուն—Ղարունի» տեր եր, շան տղան...

— Յավաշ, բա մեզ տանում ես նրան թայ անում: Մեր տակոին կերած ա. են ինչ նա յա՝ հիմքը հաստատ ա ըլել. գաջ ու կրի պատն ու սև ցիսի պատը մին կլի: Մենք ցեխապատն ենք, նշա թե կուզես, անցեխ, չոր պատը, են ինչ նա յա՝ գաջ ու կիրը, հերը հարուստ ա ըլել պապը՝ հարուստ: Ինքը ուսում առած, խելքը՝ շատ:

— Ուսում առած, խելքը շատ: Ուսումն ու խելքը պետք չի, թող նրա հողերի կեսը իմն ու քունն ըլեր՝ ուսումներս ել կշատանար ու խելքներս ել:

Տեսնում ես հիմա տղան, Բագրատ աղան: Ուսումը շատ չեր, վոր հոր գովրին շներ եր խաղացնում, ըսլուժի անում, են ինչ հիմա յա, ասում են, ա-

և այլի կողքովն եյին գնում, ուշքները լարած պատմողի բերանին: Ինչ մտքներն եր ընկնում, նրանից եյին պատմում, ինչ աչքներովն եր ընկնում՝ նրանից եյին խոսում:

— Տղեք, են ինչ ա, — ասաց մեկը, ցույց տալով հեռուն:

— Վորը, — հարցրին իրար հետ մի քանիսը, յերեսները դարձրին այն կողմը, աչքներին հուպ տվին, ձեռքները դրին ճակատներին:

— Հըն է, են կանաչը...

Հեռվում, դաշտի խորության մեջ կասես թե մի կանաչ փափախ եր ցած դրած, վոր հազիվ եր նշմարվում նստած կապույտ մուժի մեջ:

Խոսքը Վասիլ աղի տան ու բաղի մասին եր, վոր ուսած՝ կանաչին եր տալիս շրջապատի ծղնուածած ամայության մեջ: Խոսակցությունն ել դարձավ այդ կողմը:

— Հեյ զիդի Վասիլ աղա, մի գլուխը բարձրացնի հրմա:

— Բարձրացնում ա ինչ անի, անջաղ կտրվեց ծուխը, նրա են...

— Ամմա հախ դատաստան եր, համա...

— Հախ չեր, ասում են...

— Վճնց չեր հախ...

— Նհենց չեր հախ, վոր նա, ասում են, մեկել թափադների թայը չեր. խղճմտանքով եր, աշխատավոր ու հալալ...

— Հալալ ե՞ր...

— Վոր հալալ եր, Գեղն, ենքան կարողությունը վորտեղից եր նրան:

— Աշխատել եր:  
— Հալալություննվ, յանի:  
— Բա հարամություննվ:  
— Հալալությունով հարստություն կլի, արա:  
— Բա հարամությունով կլի:  
— Նոր ես գիտում եղու կոր հալալությունով աղաթ ըլի՝ քեզանից ել հալալ, ինչի չես հարուստանում. կարում չես թե մի լուծդ թամամ պահես—մի պլուս թայը պակաս, թայը պակաս: Հրեղ, Առաքելը. հալալ չի: Դրանից ել հալալ ու աշխատավորն ով ա: Տեսել ես, վոր դրա չուխան ու շալվարն իրար ըուաստ գան: Մինչև մինն իրար ա գցում, հագնում, են մեկելը հալից ընդոււմ ա. մեկել մինչև են ա իրար անում, են մեկելն ա մաշվում: Ներկել տախն ել հոլ երազ ա—ով ա տվել զբան երկու մանեթ: Իսկ Վասիր աղման. հեռու չեր հո, մտներդ ա: Դովլաթը չոլերովն եր անցել «Հարուն—Ղարունի» տեր եր, շան տղան...

— Ցավաշ, բա մեզ տանում ես նրան թայ անում: Մեր տակոին կերած ա. են ինչ նա յա՝ հիմքը հաստատ ա ըլել. գաջ ու կրի պատն ու սև ցիխի պատը մին կլի: Մենք ցիխապատն ենք, հա թե կուզես, անցեթ, չոր պատը, են ինչ նա յա՝ գաջ ու կիրը, հերը հարուստ ա ըլել պապը՝ հարուստ: Ինքը ուսում առած, խելքը՝ շատ:

— Ուսում առած, խելքը շամատ: Ուսումն ու խելքը պետք չի, թող նրա հողերի կեսը իմն ու քունն ըլեր՝ ուսումներս ել կշատանար ու խելքներս ել:

Տեսնում ես հիմա տղան, Բագրատ աղան: Աւառումը շատ չե՞ր, վոր հոր գովրին չներ եր խաղացնում, ըսլուժի անում, են ինչ հիմա յա, ասում են, ա-

մեն քաղաք մտնողի ըռաստ ա գալիս: Տղեքը մաս-  
խարա յին անում. թե՛ «Բազրատ աղա, տափ չես տա-  
լի, տափ, վարենք»:

«Ել աղա չկա, ասում ա, հիմի կի դիմ ննդիրնիր  
ինք, մի արտսի պապիրոսի փուղ չունիք...»  
Ծիծաղեցին:

— Բա սուտ ա տամեմ Ակովը. թող հարստանա  
ելի՛ հոր նման — հալալությունով, ուսումով ու խելքով:

— Զե՛, գե հարուստ չկա վոր... Յես խղճմտանքի  
վրա յեմ ասում, հալալության վրա: Ոչ վոր նրան  
ճանաչում ա, նա յա ասում, թե մարդը վոչ նոքարի  
հախ կա կտրած, վոչ ել թե թողած, վոր մի հարամ  
մաղ իրա դովլաթին խառնեն:

— Հավատաս վոչ. են առաջ եր, վոր բեյիններո  
են հալել, թե ով վոր հալալ ա ու ասսու ձամբումը  
նա յել հարուստ ա:

— Իմ կարճ ինելքովը, ամենից հալալ դատաս-  
տանն են եր, վոր արին: Նրանից հալալը վոչ տեսած  
եմ, վոչ ել թե կըլի:

— Վասիլ աղի են... (հայհոյում ե) հողը նրա  
ընչին եր պետք, Վարողն ուրիշը, ցանողն ուրիշը,  
հնձողն՝ ուրիշը: Ըսինց չի, Մակի:

— Մակին նրա ինչին ա խաբար: Այ, սրան  
հարցրեք նրա մասին: Խոսի յե, այ տղա, Դանել, —  
իրեցին Դանելին:

— Դանելի բերանը թափուր ա, վոր խոսի. տես-  
նում չես, չանան ուզում ա, թե կրնկնահան ըլի տնա-  
քանդի...

— Քորթ վոր Դանելը լավը կիմանա:

— Դե վոր հալալություն ու խղճմտանը ասա-  
ցիք, — բերանի անկյունները լիզով մաքրելուց ու վի-  
զը ձգելուց հետո, սկսեց Դանելը, — թողեք մի բան ել  
յես ասեմ:

Սայլերը թրիկ թրիկալով, ճիպոտի ու մարտ-  
կանց աղմուկն իրար խառնված՝ բավական հեռացել  
ելին Վասիլ աղի տան հավասարությունից, իսկ Դա-  
նելը սայլի մեջ կանգնած, ական ամեն մի թրիկոցի  
հետ գլուխ տալով ու ընդհատելով իր պատմությունը՝  
շարունակում եր.

— Վասիլ աղիցը յես մի բան տեսա, նոր, նըա-  
նից հետո իմացա, թե ինչ մարդ ա նա:

Իմ նրա տանը կենալիս վ սխտն եր: Ասած ա—  
խոսքը ժամանակը կըաշի: Տարվա ես վախտն եր: Կա-  
լերը նոր պրծել ինք: Երկու սել լծել տվակ, ճամբու-  
դրավ մեզ դեպի Բոխչալու, վոր ինքն ել քայտինե-  
րիցս ձիով գա: Սերմ փոխելու յինք գնում: Իրիկունը  
ժամաժանքին հասանք Մոլլա-Ահմազլու: Քոչը վեր եր  
գալի: Ենպես եր, վոր շունը տերը չեր ճանաչում: Տասը  
տեղով գալիս, իրար միջով անց ին կենում տավարն  
ու վոչխարը: Ասեցինք հեռանանք նդ քոչի բերանից,  
վոր գիշերը ապրանք չըտանիլ տանք: Գեղի  
միջովն անցկենալիս մի պառակ թուրք, անունը Հա-  
սան, առաջներս կտրեց.

— Ես Վասիլ աղի սելերը չեն, — հարցրեց:

— Հա, ասինք, Վասիլ աղինն են: Ցեղներիցն  
եր ձանաչել:

— Բա մըր եք գնում ես վախտն, — ասաց, — վեր  
յեկեք, յեղները դուս արեք. ամոթ չի մեզ համար, վոր

ևսպես անժամանակ թողնենք անցկենաք, գնաք ապրանք տանել տաք:

Վեր յեկանք, յեզները դուրս արինք: Հենց եղ ժամանակը վասիլ աղան ինքն ել յեկավ վրա հասավ: «Խուշ, բեշ» արին սրանք, իրար ձեռք տվին. ձիուց վեր բերին վասիլ աղին: Դու մի ասիլ ես թուրքի տղան նրա տանը չորան աւ Մարտը տուն տարավ մեզ, սամավար զցեց, չայ սարքեց, ինչ վոր ձեռքովն եկավ, պատիվ տվավ, մի խոսքով, հավ մորթեց նրա համար... Հաց ուտելուց հետո ուզեցինք յեզները կապոտենք սելերիցը, ես հասանը թե—կապելը պետքը չի, ես կողմի վրա արեք, թողեք գնան արածեն, արխային կացեք, ըստեղից մի մազ չի կորչիլ:

Մենք ել եղ կողմովն արինք—մի խոտ տեղ եր—ապրանքը ձեռաց կշտացավ ու նստեց: Մենք ել փաւաներս գլխներիս քաշեցինք, քննեցինք:

Սուսվոտը վեր կացանք, թե սելերը լծենք—մի կարմիր աշառ կար—տենանք՝ աշառը չկա: Դեռ աշառ, դեռ աշառ—աշառը տափը ծակեց նի մտավ: Զկա ու չկա:

Վասիլ աղաս ես թուրքի յախան բռնեց:

— Ա՛ թուրք, — ասաց, — յեկ գլխիս ոյին մի խաղա, յես երեկվա յերեխան չեմ, յեզս յետ բեր, թե չ փիս կլի:

Թուրքը մնաց ցամաքված:

— Աղա, — ասաց, — եղ Բնչ ես ասում, մեղ մարդ չես հաշվիւմ: բա մենք շուն ենք, քու ասելովը, բա, մարդ մարդու դոնաղ կանի, բերի տուն, առաջին հաց դնի ու նրա յեզը գիշերը գողանա՛: Ասսու խաթեր, բեյարում մի անի ինձ ես գեղումք. ամոթ ա, ով իմանա:

— Դե ես կտեսնես բեյարուով, — թեք նայեց նրան վասիլ աղան: Յես գիտամ, զա ընչի աշըղ ա. տղիդ համիկցն յերկու վոչխար յետ հմ քաշել չեմ...

— Չե, վասիլ աղա, աստված, յերկինք, Բնչ հախ, Բնչ վոչխար... յերդում ա ուտում թուրքը, քարերը կծում, յերկինք զցում—հավատացողն ով մ:

— Դե լավ, — ասեց, — Հասան, ես ա կտեսնանք: Ու ձին նստեց, մաթրաղեց, հայդա:

Մի սհաթ չանցած, տեսնենք ուրյադնիկին ու յերկու ստրաժնիկի առած, յեկավ:

Տղերք, յես տեսա, դուք վոչ տեսնեք:

Վասիլ աղան մատը մեկնեց Հասանի վրա ու ռուսերեն նի կոտրատեց: Տավարի նման, վիզը ծուած մնացել ա կանգնած ես խեղճ Հասանը, չի իմանում Բնչ են խոսում, չի իմանում՝ գլուխն ինչ պտի զա:

Մաթրաղները քաշեցին—վոնց վոր կատաղած դուշը մի ճուտի քրքրի—տալիս են, վոնց են տալիս, մաթրաղը մաթրաղին ա զիպչում: Ես խեղճ պառավը բառանչում ա անասունի նման—մվ ա անգան դնողը:

— Ասա, — ասում են, — վիրտեղ ա աշառը, մեր ես տարել, վոր կողմը զրկել: Կսպանենք, թե վոր ես սհաթիս տեղը չասես:

Կրացել ա, ընկել վասիլ աղի վոտերը, երեսը տափերն ա քսում, արտասուքը թոլ անում, աղաչանք անում: — «Վասիլ աղա, աստվածդ կսիրես, աղատիր ինձ ես կրակից, յես քու աշառին խաթար չեմ...»:

Վասիլ աղան քացի ա տալիս երեւին, զըցում ստրաժնիկների առաջը: Սաղ գեղը յեկել ա, ցեղ կապել, մվ ա կարում մոտ զա, մի խոսք ասիր: Դե, ջանն աղիկ ա՝ մաթրաղների տակին չոքե-չոք մտնում

ա շան ըունը, մտնում ա հավաբունը, վոր բալքի կարենա ազատվի նրանցից—յետեիցը հասնում են, քաշում, դուրս գցում ու նորից տալիս: Յերես, մերես, և ա տվել երես, արնակոլու ա ըլել: Յետ են գառնում մին նմուտ, գալիս խոսում վասիլ աղի հետ ու նորից սկսում:

Շատ վոր թակեցին՝ ուրյադնիկը ձեռքով արավ, թե կանգնեցիք: Ստրաժնիկները կանգնեցին:

— Ա՛ Հասան, — առաջ կացավ ուրյադնիկը:

Հասանը՝ գլուխը, յերեսը, միբուքը կարմրած, ձեռները պլոկված, չոքեց նրա առաջ: — Հիմի դու միտք կանես քու միջումը, թե վկա չկա, բան չկա. ես ա թակեցին պրծան, անց կկենան գնան, Խելքդ չկտրի եղբանը. մինչև վոր բոլորը մին մին չասես քու բերանովը, մինչև յեզը յետ չտաս՝ քեզ պրծնիլ չկա: Վասիլ աղան վոր ասում ա, կնշանակի դրուստ ա. մենք չենք թողնի, վոր սրա նման մարդու յեզը մին դյադա ուտի: Պառավ մարդ ես, յեկ անպատիվ մի դառնա, ես մարդու յեզն իրան տու, խոսք եմ տալիս պլատակոլը վոչնչացնեմ, Վասիլ աղան ել գանգատից ձեռք քաշի, բաց թողնենք քեզ: Թե, չե, պետք ա կոներդ քամակիդ կապեմ, թուռէշ բերդը: Են իեզն թուրքի պառամին ել մի կողմից ա իրան կտրատում, աղաշանք անում, մաթրաղների բերանն ընկնում—չեն հավատում, բան չի դուրս գալիս: Թակը մին ել վոր նորեցին՝ Հասանը ձեռքերը բարձրացրեց—դե ջանն ազիդ ա:

— Յավաշ, — ասեց, — ուրյադնիկ աղա, տամ գրա յեզը, ախակեր: Վասիլ աղա, — ասեց, — տամ յեղի, տամ.

յես եմ դողացել, յես եմ տարել, սպանիլ միք տա ինձ, տամ, տամ...

Ստրաժնիկներին կանգնեցը ին: Վասիլ աղան դառավ ուրյադնիկին թե՛ ռտեսմը: Յերկուսն ել ծիծաղեցին: Մենք բոլորս մնացինք սառած, թե ես ինչ բան եր, այ տղա:

— Ա՛ Զոհրա, ա Զոհրա, — ձեռքով արավ Հասանն իրա կնկանը, — գնա մեր Զեյրանը քշի գա:

Պառավը գլխի չընկավ, շշկվեց ու, մինչեւ մենք ել գլխի կընկնեցինք, թե ինչ ա ասում Հասանը՝ նա ինքը վեր կացավ, գլուխը կարմրին տալով վազ տվավ դեպի տան քամակը, ստրաժնիկներն ել յետեցը: Դոմի ենտեղ եր, նի մտավ գոմը, ու մին ել տեսանք ենտեղից մին սիպատակ յեղ դուրս յեկավ: Յեզ, ինչ յեզ, Առուշան, վոր մեր ես քարվանումը նհենց յեզ չկա: աչքահուլունքը ճիտն արած, ըղորթ վոր մին ջեյրան

— Վասիլ աղա, — ասեց, — քո յեզը հո սրանից լովը չեր: Եդ մին յեզն ունեմ յես, եդ մինն ել դու տար, թե կարաս դրա տմագն ուտես: Դու երկու գութան հս լծում, յես մենակ եդ մի յեզն ունեմ: Դրանով եմ պահում իմ տունն ու չփլաղ քյուլփաթա: Տար, յերը գիտես, յես եմ դողացել յեղի: Հո, հո, Զեյրան ջան, — առաջներս արավ յեզը: Գնա, մաղիդ հաշփուը մին խեր տեսնի Վասիլ աղան քեզանից, թե վոր նրա յեզը քու տերն ա տարել: Թե ու չե՝ անմեղ եմ յես—արուն դառնա աշխատանքդ ու մենակ դու մնաս նրա դուանը, վոնց վոր մենակ ես իմ գուանը... թե, տար, Վասիլ աղա, ել ասելու բան չունիմ: Թե աշխարհքում արգարությունը կա, կտեսնենք մի որ ել քո վերջը ու սրանք ել կիմանան, թե ով ա ում յեզը տարել:



Վասիլ աղաս իրան ուսում եր:

— Տն, հարամզագա, ի՞նչ նամազուլ ես անում,—  
վրա պրծավ,—դու մի գող թուրք ըլես, յես՝ աղնիվ,  
պաշտանի դվարյանին, համարձակվես յերեսիս եղակոս  
խռով... կոներդ բամակիդ կապել կտամ, Սիրիը դես  
թողնել տամ հո. լակոտներիդ եմ մեղք գալիս, թե չե...

Թողինք Հարանի ձեռքը ծոցումը, արտասունքը  
թոլ անելիս, յեղը լծեցինք, զնացինք: Սերմը փոխե-  
ցինք, սելերը բարձած յեկանք տուն մի յերկու որից  
հետո: Յեկանք, ամմա ի՞նչ ըլի, վոր լավ ասեք, տղեք:  
Մի ասիլ, անտեր աչաս, դոնչդ կրոնես, թուռշ արո-  
տիդ վրա գաս տուն: Ուրախացա իմ միջումը, ասի՝  
մարդի հալալ ապրանքը չկորավ, կտանենք յետ իրան  
կտանք: Ամմա ի՞նչ անի ես քու հալալ վասիլ աղադ:  
Իրիկնապահն եր. ել չթողեց եգու լուսանա. կանչեց  
ի՞նձ իրան մոտ, ձեռքը դրավ ուսիս, թե՝

— Դանել ջան, աբա, քեզ եմ հավատում մենակ  
իմ բոլոր նոքարների միջից: Են անտեր աչառը փա-  
խել ա, յեկել մի հալ պահենք անի, թե չե խայտա-  
ռակություն ա...

Են ել մտածում եմ, թե լավ մուշտուղւուղ եմ  
ստանալու Հասանից: Դու մի ասիլ Վասիլ աղաս ի՞նձ  
ուրիշ տեղ ա ուղարկում:

... Հացդ կուտես, Դանել ջան,—ասավ,—ու վոնց  
վոր ըլի, գիշերս հասնես քաղաք: Եկուց ծեզին հենց  
բազար պաხս մանի, վոր քեզանից առաջ մարդ շըլի  
մտած: Կծախես, ինչ գնով ել ըլի ու յետ դառնաս.  
թե չե, վոր աչառի գալը ձեն ու ձուն ընկնի, եկուց  
խաբարը հասնի թուրքին՝ Վասիլ աղի գլուխը կտրած  
լավ ա, քանց սաղ մնացած, խայտառակ կդառնամ:

Զերից հանեց, մի մանեթ ել վորդ տվավ, թե «ես  
ել քեզ ճամբի խարջուղ» ու հատն ել պնդացրեց,  
թե՝ «համա, Դանել, վոր քերանդ ճաքել ա ես մասին,  
իմացիր, վոր ինձանից պրծնիլ չես»:

Ասեցի, դե մարդ ա, ելի, ամոթ ա համարում  
հալքաթ իրա անումին, կծախի իրանը, ու թուրքի  
յեզն ել յետ կտա տիրոջը մի հանգով: Բան չունես:  
Աշառը տարա ծախեցի. նրա փողը, հինգ թումանը  
ջերը գրավ, թուրքի Զեյրանն ել լծեց մինչև վերջ:

— Դու յել եղքանը գիտեցած, սուս կացմը—  
նկատեցին չորս կողմից:

— Սուս կացման: Բա վոր մատը վրաս թափ  
ափած ըլեր, թե ըհրանիցդ բան չդուրս գա՝ կարայի  
ծպուտ հանեմ...

— Տակովն եղա իմաց չտվի՞ր Հասանին:

— Յալշաշ, Վասիլը երեխա յեր, վոր գիխի ըընկ-  
ներ: Կոներս կապել կտար. Հասանի որինակն աչքիս  
տուաջին չեր: Որինքն ել եր նրանն են վախտը, պրիս-  
թափն ու ուրյադնիկն ել ըդհենց հեշտ-հեշտ խոսում  
եք հմի:

Ամմա ես յետի վախտը, վոր թագավորությունը  
ուսւ եկավ, պրիսթավ, մրիսթավ փողմիշ ելավ՝ ապ-  
րածները ես քու Վասիլ աղիս կոներն ել կապեցին:  
Խարար արին չորս կողմի գեղերին, թե, աբա, ով ի՞նչ  
ունի Վասիլ աղի գեմ, գա: Յեկան: Հասանն ու իրա  
տղան ել եկան—Սյոյունը: Ե՛, վոր տեսնեյիք, մին  
հարսանիք եր, մին թամաշա: Ինչ վոր կապված լեզու  
կար, բացվել եր Վասիլիս առաջ: Վասիլն ել գառել  
եր, վոնց վոր քիթկալ տված, կապած մողի. Իհզուն  
քիփ կտրվել եր: Պատմեցին նրանք Զեյրանի պատ-

մությունը: Հարցըին նրանց, թե՝ բա վկա, մկա եդ  
մասին իսկի, վոր մինը խարար ըլի: Յես ել մի թիթե  
երած տեղեր ունեյի Վասիլիցը, յես ել եյի եղտեղ:  
Հասանը մնացել եր անառունի պես դես ու դեն մտիկ  
տալիս, ում եր ճանաչում, վոր ում անումը տա: Առաջ  
կացա ծիծաղելով, ասի՞ յես խարար եմ: Վասիլը վոր  
ինձ տեսավ, մթնեց: Պատմեցի մին-մին, ինչ վոր կար.  
դրուստ ա ասում, ասեցի, Հասանը, աշառն ել յես հմ  
տարել ծախել, փողը բերել, Վասիլին տվել:

— Միտ ա, ասի, Վասիլ, հինգ թումանը: Միտ ա,  
ասի, Հասանի թակն ու նրա պառավի արտասուն-  
քը՝ ես նրա պատասխանն ա:

— Արեք, ինչ կարում եք, ինչ ձեռներիցդ գա-  
լիս ա, զոռը ձերն ա եստեղ,—ասեց,—յես ենտեղ,  
քաղքումը կիսում ձեզ հետ որինքի տռաջ... Հասա-  
նին տվեք իմ յեղները:

— Հալա դռւ յես հաթեթա տալիս,—ասի, — ան-  
նամուս. նվ գիտա, չգիտա, յես հո լավ գիտամ քու  
տակն ու գլուխը: Գնա, ասի, հա, քաղքումը կտեսնաս:

Ես Հասանն եւ մնացել ա բերանը բաց, աչքերը  
չոեւ չի իմանում, թե յես նվ եմ, վորտեղից գուս յե-  
կա են հաղաղումը, ուզում ա, թե ձեռքերս պաշխ:

— «Քյիմ սյան,—ասում ա, — այ, ալլահ սյանա  
եռմյուր վերան»... Տանդ,—ասի,—մի անգամ հաց եմ  
կերել մի զիշեր քնիլ, Հասան քիշի, յես նրա արա-  
բաչիներից եմ են վախտվա:

Սրա նման շատ ուրիշ պատմություններ ել կար,  
մինը մինից բեթար:

Հասանին իրավունք տվին Վասիլ աղի ապրան-  
քից մի լուծ իրա հավանած յեղ ջոկելու: Մնացածիցն

ել սրան-նրան տվին —ում վրկել եր, ումնից՝ խլել:  
Իրան դրկեցին քաղաք. են դրկելն եր: Նա հենց գի-  
դում եր, թե ես, վոր ըստեղ որենքը փոխվել ա, քաղ-  
քումը հինն ա մնացել, ու ինքն ել պետք ա գանգատ  
աներ: Գնաց: Հողերը բաժանացին կողքի գեղերին.  
տունն ու բաղն ել—են կանանչն եր, վոր երևում եր՝  
տվին տասն աղքատ տղի, վոր վոչ կենալու քոխի,  
վոչ ել մի թիզ վարելու հող ունեյին: Ապրում են հի-  
մա նրանք ենտեղ հալալ ախպոր պես, ու ոխնում  
սարարի հորը:

Վասիլ աղիցն ել զե հիմա մենակ են շաշն ա  
մնացել—Բազրատը, են վոր ասում եք ամեն քաղաք  
ստնողի փեշից բոնում ա, արադի ու պապիրոսի փող  
ու զում:

## ԶՈՐԱՀԱՎԱՔ

Վոնց վոր մի քնած մարդու կողքը ծակես միամիտ տեղը, վեր թռչի՝ վեր թռավ ենպիս զյուղը միանգամբ:

Կալ ու կուտի ժամանակ, աշխատանքի յեռ ու ղեռին՝ հայտնեցին, թե զորահավաք եւ

Սփրթնեցին մարդիկ պատերին կպած թղթերի առաջ են գյուղում: Զսպված մի վախ կար մեջները, վոր չեր թղթնում հարցնեն, նույնիսկ, թե ի՞նչ բան եր այդ:

Հաստ ու կենտ ժպտուն դեմքեր միայն հանդիպում են նրանց գյուղամիջում:

Կոմսոմոլներն են:

— Ես ի՞նչ խաբար ա, ձեզ մատաղ...

Ել դենը հարցնելու ուժ չունեն: Թուքը կուլ են տալիս, ծկրակում...

Սպասում են պատասխանի:

— Վոչինչ... «փորձնական զորահավաք»: պետք առաներն ու ձիաները զնան:

Նետում են անփոյթ նրանց:

— Տններս քանդվեց, ասա... ել փորձնականն զիրն ա:

— Ասում են թունդ կոիվ ա, — միանում ե խոսակցությանը նրա կողքին կանգնածներից մինը, — ինքն ել համ տղա ունի, համ ձի:

— Յերեք որից հետ կգան բոլորը — ձիանն եւ տղերքն ել...

— Զհաննամին ձիանը, տանում են, տանեն, ամմա, վոր մեր Արշակին տանեն — կկտորվենք: Տանն յերկու շարթվա հաց ունենք: Եդ ա մեր ես տարվա կալը:

Զի հավատում: Զեն հավատում: Դես ու գեն են վազվազում, Խստագույն կարգադրություններն ավելի յեն արմատներ տալիս նրանց կասկածներին: Յնչ ցանկալի յե ուրիշներից լսածը, վոր յերեք որից պետք ե յետ գան, և չի ցրվում նրանց միջի կասկածը: Բազուն պահված մի վախ սարսափեցնում ե մտքի մի անկյուննից:

914 թվի սարսափը ցցվում ե նրանց մաքի առաջ, և հարց են տալիս իրենց՝ «վայ թե»...

Գյուղը գազազել ե, դառել վոնց վոր մի քացալ տված փեթակ:

— Վոր կոիվ չըլի՝ բա ըսհենց սաստիկ կըլի: ասում են, ով իրիկունս ենտեղ չըլի՝ չորս տարի բերդ ա, ով ձին պահի՝ երկու տարի: Բա սա պովիրիկի ըսեխ ա, բա սա սուսա ա:

— Ի՞նչ ես խոսում: Վոր կովի բան չըլի, եսպես կալի ու գործի վախտը կհավաքեն:

— Թամամ կոիվ ա:

Երեկ քաղքից մի մարդ ա յեկել (անունը չի ասում) — ձայնը ցածրացնում ե խորհրդավոր — ասում են հաստատ կոիվ ա:

Կես ժամկա ընթացքում տները դատարկվում են: Ամեն կողմից մարդկանց շարանը ձգվում ե դեպի գյուղի խորհրդի շենքը՝ մարդկանց մի շարժուն լիճ կաղմում:

Պատերին կպած դեղին թղթերից մի յերկուսը  
ձեռքին՝ լուսվյան նշան՝ և անում գյուղխորհրդի նա-  
խագահը:

— Ընկերներ, — մուրճի նման հարգածում են նրա  
խոսքերը բազմության ականջին, — յերկու ժամանակ ըն-  
թացքում գեղի բոլոր ծիաները պետք եւ հավաքվեն  
թեմիորհութեց: Բոլոր պահեստի գինչորները մինչև  
32 տարեկանը, պետք եւ ներկայանան իրենց բիլեթ-  
ներով: Հայտարարված եւ փորձնական զորանավաք...

Կանգ և առնում մի փոքր, ասածն ավելի ազդու  
դարձնելու համար, ու շարունակում նույն կտրուկ  
առնուի:

... — Խուսափողները կենթարկվեն պատասխա-  
նատվության Հանրապետության որենքների ամբողջ  
խստությամբ:

Գյուղի կոմսոմոլիան վոտքի յեւ Շաբժուն, զվարի.  
ասես թե հարսանքատեր եւ հարսանքատանը — կարդա-  
պություններ ե անում, կարգադրություններ ե կատա-  
րում:

Հո չեն գնում — վազում են:

Գյուղամիջում հանդիպում են իրար նրանք  
մինը փողոցի վերին, մյուսը՝ ներքին ծայրից: Ցերկու  
ձեզընթացների նման հանդիպում են նրանք մի վայր-  
կյան. թեք ժպիտ նետում իրար անխոս, ու հեռանում  
արգ:

Ժպտում են նրանք նույնպես, յերբ հանդիպում  
են հներին, հաօակափորներին — սրտաճաք վախեցած  
հայրերին...

Ես ծիծաղը նրանց միամտության վրա յեւ, նրանց  
կասկածների վրա:

— Հը, կոփվ ա, Ունան ապեր, — ժպտում ե նա,  
— աղադ կոփվ են տանհւմ, Մինաս ամի... Մենք ել  
ենք գնում:

Նետում ե կոմսոմոլը, նրանց կողքով անցնելիս  
անփոյթ, ուրախ... Նրա ծիծաղը, վոնց վոր շեկ յեր-  
կաթից ցայտող կայծեր՝ խանձում են Ունան ապոր ու  
Մինաս ամու գեմքերը, ու, չեն իմանում հանաք հա-  
մարեն այդ, թե սպառնալիք:

Մի ժամ հետո գյուղը դատարկվեց. վոնց վոր մի  
շաղացի ջուր կտրես վերեից — գյուղի թշոցը կտրվեց  
հնակես: Աղմուկի քարվանը ձգվեց գյուղից դուրս, փո-  
փի թողնելով իր յետեռում:

Մարդ, ձի, ձիավոր, ծիծաղ, զրույց...

Տնակ են անում իրար, տնազ են անում ձիերին...

— Ձիդ պերվի նոմեր ա զրվելու, Առուշան...

— Զարբազանի ձի յա խկական մեռածի ձին, —

Վրա յեւ բերում մի ուրիշը աչքին հուալ տալով:

Առուշանի ծիծաղն ել ե զալիս, պաշտպանվելու  
տեղ չկա:

Նրա ձիու մեջքին մի թիզաչափ վերք կա. Նըս-  
տել ե զբուշ գավակին ու հաղիվ ե պահում իրան, վոր  
վայր չընկնի յետելի վրա:

— Առուշան, քու հունարդ քյանդիրբազից շատ ա,  
վոր կարում ես դրա վրա կենաս, — վրա յեւ բերում մի  
ուրիշը:

Ծիծաղից որորվում են Առուշանի շուրջը, բայց  
չեն ձեռք չեն քաշում նրանից:

— Եղ եք ասում, բա վոր հերը կես ճամբա յեկավ  
հետը, — ավելացնում ե մի չորրորդը, — Առուշան, ասում  
ա, վոր ձին տանելու ըլեն՝ իմաց արա:

Ծիծաղը համազարկ ե տալիս նորից, Առուշանն  
ել հետները, բայց նա շախը չի կորցնում, բացած  
կաշվե գոտին, վոր մտրակի տեղ ե ծառայում շըմ-  
փում ե ձիու փորի տակով: Զին գլխով ու պոչով բո-  
ղոքում ե Առուշանի դեմ, իսկ սա խրախուսում ե,  
վորպես պատասխան:

— Դեան, զոաթ, գեան...

— Ստեփան, — դարձան հիմա ել ուրիշին, — քու-  
ձին ել ահ ունի:

Ծիծաղն ավելի թնգեց: Ստեփանի ձին ավելի  
տարորինակ եր. նրա առաջի վոտը կոտրված ու ծուռ  
կպած եր — գերանդի յեր ածում գնալիս:

Հավաքատեղին հռուռ չեր. հազիվ մի ժամկա ճա-  
նապարհ: Իրանք ել չնկատեցին, թե վոնց հասան:  
Ձնահալոց ջրերի նման, շրջակա բարսը գյուղերից հո-  
սեցին սիանքամից զեսպի այդտեղ — հայ, վրացի, ոռու,  
հույն, ոս... Գալիս են ու խառնվում լայնացող մարդ-  
կանց ու ձիերի ծովին:

Բոլորի տրամադրությունը բարձր ե. ամենն ու-  
րաք ե իրենավարի: Ուրախության կեսը զարմոշկան  
ե. Զգում ե նվազողը նազանքով մինչև ծայրը, ինչքան  
վոր միտակվում ե կուռը. ծոճովում ե հետը վոգեռ-  
ված. ուրիշները տափն են թակում վոտքները, նույն-  
պես վոգեռված. մինն առաջ ե վազում բազմությու-  
նից վեր ու վար անում կրընկների վրա ու շղբում  
վոտները իրա տակից: Յետեից յեկող բազմությունը

զարդարված ծաղիկներով, յերգում ե քայլի համաչափ  
դարկի հետ՝

Սամաշին-կա, մամաշին-կա,  
Դուշին-կա, Նատաշին-կա...

Յերգի հետ հյուսվում ե զիլ ու նույնահանգ սու-  
լոցը բազմության միջից: Վոտքերի գովյունն ավելի  
ուժեղ ե թվում խմբական յերգի գաղարից հետո:

Раз, два, раз, два... չափ ե տալիս մեկը ու  
վերսկում ե զիլ ձայնով մի ուրիշը բազմությու-  
նից, ընդհատված յերգը.

Три де-рев-ни два села  
Восем девок о-один я,  
Куда дев-ки, ту-да-а я.

Միախառնվում ե բազմության յերգը, վորի տակ  
կորչում ե գոփյունը՝

Де-е-вки в лес, я за ними.  
Девки сели и я с ними...

Ра-зго-ва-ри-ва-ю...

Թամաշավորներն ավելի շատ են, վորոնց մեջ  
զերակռողը մանկական ամբոխն ե՝ ամեն ինչին ար-  
ձագանգող, ամեն ինչն ընդորինակող: Այստեղ ել նա  
զինվոր ե յերեակայում իրեն. քայլում ե նրանց յեր-  
գի տակար հետ, յերգում ե նրանց ձեռվ, մի մի փայտ  
ուսներին...

Մի այլ տեղ մի ուրիշ խումբ ե յերգում: Մտե-  
րիմ կռները հյուսած իրար ուսերի վրա՝ յերգում են  
մեղմ ու մելամաղձոտ:

Մի մասը պարում ե այլ տեղ շրջան կազմած:

Մի ուրիշ խումբ ել վոչ յերգում ե, վոչ պարում...  
Սրախոսում են նրանք, հանաքներ անում: Տնաղը մեծ

մասն և բռնում նրանց զրույցի: Միծաղից աղիք և  
կտրվում. փորները բռնում են, սրբում աչքերի ար-  
ցու լաքները, բայց ծիծաղը չի դադարում. մինը պըրծ-  
նում ե, մյուսն՝ սկսում:

Թամաշա անողներ ինչքան ասես: Կատարյալ ժո-  
ղովրդական մի տոն:

Այս ընդհանուր ժխորի հետ զուգընթաց յեռում  
և գործը. շրջկոմը վոտքի յե իր ամբողջ կազմով: Նա  
ցուցակներ և կազմում, չափում, ստուգում, համեմա-  
տում, ընդունում, մերժում—ձիերը ջոկ սայլերը՝ ջոկ  
մարդկանցը՝ ջոկ: Մյուս որը ծեփին պետք և ամեն  
ինչ պատրաստ լինի, վոր կարգին, սարքին ճամբա-  
դնեն թիֆլու—թե չե, ինքը շրջկոմն ել նկատողու-  
թյան կենթարկվի, վոչ համապատասխան դյուրաշար-  
ժության համար:

Մի արձակ հրապարակ հատկացված և ամբողջ  
շրջանի ձիերին: Հետաքրքիր տեսարան: Միանգամից  
ճանձով են անում աչքիդ առաջին—յես հինգ հարյուր  
ասեմ, դու հաղար ասա, ձիապոչ: Ինչ ձեի ու գույնի  
ուզես:

Շրջկոմի շենքի դռան արանքից ծկրակում են մի  
քանի հոգի:

Սրանք կալանավորներն են—կարգադրության  
զանցառուները... աղաչում են դրսի ընկերներին, միջ-  
նորդել, մի կերպ ազատելու այդտեղից:

— Հը՝ վանես, քեփդ. ինչ ես անում եղանեղ...

— Չիս մի սհաթ յետ գցեցի:

— Արտեմ:

— Յնո ել եմ են անտեր ձիու: Համար:  
Վոշինչ, զիսչացեք մի քանի որ, ել չեք անի:  
Ծիծաղում են ներսից եւ դրսից ել:

Մյուս որը ավելի հանդիսավոր ճամբա ընկան,  
քան թե յեկել եյին: Զահեները վորպես զինվորացու-  
ներ եյին գնում, հասակավորներն ու անչափահասնե-  
րը՝ վորպես ձի ու սայլ տանողներ: Քարվանը ձգվեց  
յերկար, յերկար... իրար խառնվեց զուռնան ու դուլը,  
շվին ու գարմոշկան: Փոշին կծիկ կծիկ բարձրացավ  
դուրս յեկող խճուղու վրա ու արագ շարժվեց առաջ:  
Վոնց վոր առաջիդ փախչող մի պարանի ծայր—քանի  
զնաց կարճացավ, քանի գնաց՝ հեռացավ ու հորիզոնի  
վրա թաղվեց մշուշի մեջ: Միայն փոշին ու աղմուկը  
մնաց մեր յեկեակայության մեջ... գնացին:

Լուր յեկավ հետեյալ որը զյուղերը, թե տղերքը  
քաղաքումն են. կարծես թե ուրիշ տեղ պետք և լի-  
նեյին: Դեռ ևս շշուկով պատմողներ կային հաստատ  
կովի մասին: Յերկրորդ որը վերադարձողներ յեղան  
ձիաներով. յերրորդ որը բոլոր ձիանները:

— Բա տղերքը:

— Քեֆ են անում, թամաշա յեն անում:

Մի որ հետո յեկան իրանք, բոլոր զինվորները:

— «Պրոբնի յար» աշխարքս թափվել առ թիֆլիս.  
մի որումը բոլորին զրեցին, պովերկա արին: Գնաց-  
ինք թատրոն, գնացինք կինո, հաղար մի բան շանց  
տվին, պահ, պահ, պահ... քաղաքը վոնց վոր մի հար-  
սանիք:

Գյուղում նորից կոմյերիտները շտապ կարում են  
փողոցները, հանդիպում ժպտով նույն մարդկանց.

— Հը՞, Ռւհան ապեր, կոիվ չկա՞...

— Հը՞, Մինաս ամի, աղադ կոիվ չտարան...

Ժպտում են Ռւհան ապերն ու շինաս ամին և  
հիմա լայնասիրտ.

— Հա, քեզ մատաղ. դե, մենք թնջ ենք հասկա-  
նում, պարզ ա, վոր գուք մեղանից լավը գիտեք—ձեր  
խելքը մերից կտրուկ, ձեր միտքը՝ մերից լուսավոր:

Ժպտալով թողնում, անցնում ենրանց կոմյերիտն  
ինչպես առաջ:

Ու կոմյերիտի ժպիտը հիմա շիկացած կայծեր չի  
փոռում նրանց վախկոտ դեմքերին՝ այլ գարնան արկի  
կենսատու շողեր:

## „ԴԺՈԽՔԻ ՃԱՄԲԱՆ“

Այս անունով եր հայտնի գյուղումն այն ճամ-  
բան, վոր գյուղամիջով ձգվում եր ցածից վեր՝ Դհուխ  
Պողոսի անից մինչև Պատառ Ակորի տունը:

Առանց այն ել շատ առիթներ եյին ունենում  
գյուղացիք հայհոյելու իրենց պապերին, վոր յեկել  
եյին գյուղ գցել այդ քարի ճակատին, ուր սատանան  
ել չեր ապերէ, բայց հայհոյանքն ավելի զվարթ եր  
համբան» եր:

Բոլոր հայհոյանքների միտքն այն եր, վոր ի-  
րենք հող չունեն, զրկված են ու քարի ու ժայռի յե-  
րեսին դեմ առած՝ ուղղում եյին հաց պոկել նրանից,  
ապրուստ ունենալ:

Յեկ քանի շատանում եյին բնակիչներն այդ  
գյուղում՝ այնքան սակավանում նրանց հողը, քանի  
սակավանում եր հողը՝ այնքան դժվարանում նրանց  
ապրուստը, այնքան ծաղկում հայհոյանքը:

Յեկ այդ բոլորի պատճառը, նրանց կարծիքով  
միայն իրենց պապերն եյին, վոր գյուղ եյին հիմնել  
այդտեղ:

— Գեղ գցող շան տղա... կրծտում եյին ատամ-  
ները...

— Ա, քու առաջին բահ վեր դնողիդ են կարկա-  
ժը նզոված...

Զանգակի նման ամբողջ որը թակում եյին այս խոսքերը, մոտիկ հարևանների ականջներն այդ ճամբից ու գյուղացիք հայհոյանքի միջից դառնացած պատմում եյին կցկոուր, թե ինչն եր պատճառը, վոր յեկան նրանք, փախած ճանձի նման կպան այդ քերծի ճակատին, քար քարի վրա դրին ու գեղ զցեցին:

— Բախրի ման յեկող վորսկան, ուր ես, մի քյալաղ հիմի ել բարձրացնես... միտք եյիր անում, վոր թոռդ բախրի տեղ մոշահավ ել չի տեսնելու հատեղ... միտք եյիր անում, վոր նրա երեխուն հաց ու մածուն ա հարկավոր, ու քու վոտքով զնացած տեղովը՝ նա բարձած սել պտի տանի մի որ...

Պատմությունը կարև եր, բայց պարզ. գյուղ զցող պապերը վորսկաններ եյին՝ վորսատեղ եյին ընտրել, թոռները հիմա ռանչպարներ եյին՝ անհող:

— Մինն ասեր, բա դու չբեզարեցիր մինչեւ եստեղ հասնելը, ա խոր գնաս դու, վոր վեր ընկնեյիր մի սառն ազբը դրազի, են լեն ու բոլ տափերի մատ քոյսիդ շինեյիր, վոր քեզանից հետո յեկողն ել քեզ մտիկ տար, կողքիդ վեր ընկներ... Բա, հնքան աշխարքը կթողնեն, — ցույց եր տալիս նախանձով լի, հողի սոված ռանչպարը դիմացի փարելահողերի լայնանիստ ծովը, — գան մանեն ես լեռ ու ծմակի ծոցը, հը:

Աւ այս պատմությունները կը կնվում եյին շարունակ, միշտ համեմված դեռ չլսված հայհոյանքով, միշտ զայրացած ըոպեյին, յերբ սայլի ակն եր դեմ ընկնում, կամ սամին կոսրած՝ սայլն եր գլորվում, կամ մի ուրիշ փորձանք պատահում այդտեղ գյուղամիջում, «Դժոխքի ճամբում»:

Յերկար չեր այդ ճամբան, յերեսունից-քառասուն սաժեն հաղիվ, վոր խուրջինի պես միացնում եր գյուղի յերկուսի բաժանված թայերն իրար հետ, վոր խուրջինի պես բաժանում եր գյուղի յերկու մասերն իրարից:

Նրա յերկու ափերով ձգվում, բարձրանում եյին յերկու հաստ քարե պատերի ճակատներին՝ ճամբից, պատատերերի խնամքով թիկն եյին ավել փեշը-փեշին քսվող հսկայական քարեր, վորուցից ամեն մինչ վրա մի լուծ յեզ կնստեր ազատ, ու, վորոնցով ավելի յեր նեղացել, առանց այն ել շատ նեղ «Դժոխքի ճամբան»:

Գարնանը, յերբ հաճախակի հեղեղները սրբում, տանում եյին ամբողջ տարվա ընթացքում յերկու կողմից թափված, նրա խորդ ու բոլով լցնող աղբը՝ նա կմախքանում եր, մերկանում ու ավելի նմանվում եր չորացած առվի հունի, քան ճամբու — մարդ թագնվեր չորացած առվի հունի... Այդ ժամանակ, ասես նրա խորշերում, չեյիր գտնի... Այդ ժամանակ, ասես թե, այդ յերկու պատերն իրար մոտեցել են ու չես հազարտա, թե միջովը մի բարձած ձի կարա անցնի, ուր մնաց թե սայլ: Բայց հաստատող ու կենդանի վկաները — վոր դա սայլի ճամբա յե—քարերի յերեսին զանազան ուղղությամբ գծված մեխերի հետքերն եյին, վոր մեացել եյին անսառների վոաքերից:

Սրանցից դուրս, պատերի ճակատներին կոնած քարերն ել եյին ժապում, աչքով անում, թե ճիշտ է քարերն եյին անցնող սայլերի վրա, վոր դաշել եյին անցնող սայլերի սոնիները:

Տարվա մեջ յերկու ըրջանում սոսկալի յիր այդ ճամբան, մեկ ամառը՝ խուրծ ու խոտ կրելիս, յերբ

սայլավարը մերթ աջ, մերթ ձախ գոմշի կողքն եր պո-  
կում ճիպոտի հարզածներով, վոր շեղի ակն ու սռնին  
սպառնացող քարերից, յերբ չոքեչոք եյին անում աժ-  
դահա գոմեշները սայլի գլխին՝ կրակ կտրած սայլա-  
պանի ծղրատցի ու գովասանքի տակ, յերբ ճիպոտի  
ու շոլտու շրմփոցների հետ պապում եյին մերկ սա-  
լերի յերեսով ձգված 2—3 զույդ անասունների վոտ-  
քերի տակից թոշող կայծերը, մինչև վոր սայլը հաս-  
ներ Պոտ Ակորի դուանն ու հոսցից որորվող կենդա-  
նիները կանդ առնեյին, շունչ առնելու: Մեկ ել՝ վոր  
ավելի սոսկալի յեր՝ ձմեռը, յերբ ցերեկվա հալոցից  
հոսող ջրերը կանդ եյին առնում այդտեղ գիշերը, բըս-  
նում սալի ամբողջական յերեսը, հետո յեկողները  
բարձրանում մեկմեկու շալակ, ուռցնում այդ նեղ անց-  
քը, ուր ել վոչինչ չեր յերեռում, բացի կապտավոն  
սառուցից: Այս ժամանակ այդ ճամբան բացի իր սո-  
վորական անունից՝ կոչվում եր և «Սատանի ճակատ»:  
Յեվ իրավ վոր, ահն ու սարսափը պատում եր գյու-  
դացոց, յերբ անասունների ջրի վախտը գալիս եր:  
Վերի թաղն այդ ճամբով պետք ե ջուրը տաներ իր  
ապրանքը: Հիմա յել սալերի տեղ, սառուցն եր գըծ-  
մծվում պայտերի ու մեխերի տակ, կովերն ել եյին  
պայտվում ձմեռն այդ ճամբի համար: Զիավորն այդ-  
տեղ իջնում եր ծիուց, լղար ապրանքատերը բռնում  
եր ականջը, կժկորն իջեցնում եր ուսից կուժը. բայց  
և այնպես տարի չեր անցնում, վոր չհամարեյին, մատ-  
ները ծալելով, թե քանի՞ յեղն ու կով ե ճղատվել  
այդտեղ, քանի՞ մեջք կոտրվել, քանի՞ վոտք ու կուռ  
դուրս ընկել... իսկ ջարդված կժերի հաշի՞վը. վոչ վոք  
չգիտեր:

Նզովում եյին նրանք շարունակ այդ ճամբան,  
տանջվում, չարչարվում նրա յերեսից, ֆլասվում ամ-  
բողջ տարին, հայնոյում գյուղի հիմքը զցողին, մե-  
ղադրում կառավարիչներին. բայց ամեն մեկն իր վը-  
նասից հետո, այլ ևս մտածել չեր ուղում դրա վրա:  
Համարում եր նա իր մեջ, վոր ինքն արավ իր բա-  
ժինը, պրծավ ու ափելորդ ե դրանից հետո մտածելը  
այդ մասին: Ուրիշներն ել սպասում եյին, թե յերբ  
հերթն իրենց կհասնի ու հասնելուց հետո, նրանք ել  
վարդում եյին մյուսների նման, մտածում նրանց հո-  
գեբանությամբ:

Վոչ վոքի մտքով չեր անցնում, թե կարելի յէ  
արդյոք վորմե կերպ աղատվել այդ չարիքից:

— Մեր ճակատին, գե են ա, եսպես ա գրած,  
ափսոս ել ա մեր քանդվածին, (չեյին ասում միը գե-  
ղին) լավ ճամբան. շան պես պետք ա չարչարվենք,  
մինչև վոր սատկենք մի որ:

Ասում եյին այսպես գյուղամիջում իրար, ամեն  
մի նոր վնասից հետո:

Ճիշտ ե, մի քանի քոխվաներ մտածել եյին այդ  
ճամբի շնելու մասին, ու հիշում եյին նրանց անուն-  
ները, բայց հայնոյանքով եյին վերջացնում միշտ,  
վորովհետև բանը վերջացել եր հասարակական փողեր  
ուտելով ու ելի մնացել եր «Դժոխքի ճամբան»՝ դժոխ-  
քի ճամբա, «Սատանի ճակատը»՝ սատանի ճակատ:

Գյուղում՝ քոխվացներն ել եյին լավ հասկացել  
այդ մեծ չարիքի արժեքը գյուղացիների համար ու  
դրա շնորհիվ կարողանում եյին հասնել իրենց նպա-  
տակին:

Ամեն անգամ նոր քոխվի ընտրությունից մի շանի շաբաթ առաջ, ընտրելին բարձրաձայն հայտնում եր իր կարծիքը գյուղամիջում.

— Բա մենք քոխվա ուսմենք, բա մեր գեղը տեր ունի... Բոյախչու տղա Սիմոնը, են ա աչքը գցած, թե վնդատեղից պտի ոքու շահի ձեռքն ընկնի, վոր կուլ տա, բեղերը սրբի զրադ կաղնի: Մենք վոր խալի ըլենք, ձեզ եմ հարցնում,—յերկարացնում եր խոսքը, դուխն որորելով,—Պուատի տան տակը նհենց կլի... բա նա իրեք հարուր տան ճամբա յմ... ըմմ, ըմմ,— մռում եր ինքնաբավական,—մի որումը, մի որումը դրսում. ելը յետեկցս անեմ, առաջ ընկնեմ, պատի մինը մի կողմը, մեկելը՝ մյուս կողմը շպրտել տամ մի սաժեն, վոր սելի մինը վերեից, մինը՝ ներքելց շրխակի դան, իրար կողքով տան անց կենան, մեր յեզն ու գոմեշն ել թակվի վոչ... Թող, շատ չեմ առւմ, մի շաբթով, մենակ մի շաբթով իմ ձեռքս ընկնի իրավունքը:

— Այ մեր իսկական քոխվացուն, իմացաք. այ մեզ պետքական կառավարիչը. դա յա, նիկոլն ա, վոր կա, — տաքացնում եյին պրոպագանդը հավաքույթի կենտրոնում՝ նիկոլի թասը ճաշակողներն ու, ընտրությունն ապահոված եր:

Ընտրվում եր դա յել. անցնում եր դրա ժամանակն ել, ու յերբ մի որ հարցնում ես դրա մասին.

— Նիկոլը, — պատում ե, — տունն ապահած քանդի նրա. Սիմոնը՝ հազար փառք եր. նա ուղար ճուտերն եր ուտում. սա՝ մերը ճուտերովը...

— Իսկ ճամբն:

— Բան չունիս, — ձեռքը թափ եր տալիս:

Մի հանդամանք ել կար, վոր դժվարեցնում եր այդ դժվար խնդրի լուծումը: Ճամբի ափերի աջ պատը վերից վար՝ Արքամ ապորն եր, ձախը՝ Խեչանինը: Նրանք արդեն հասակով մարդիկ եյին ու նույն գրությամբ ել ստացել եյին իրենց հայրերից: Մի բան թե փոխվել եր, այդ այն եր, վոր նոր ու նոր վեմեր եյին պատերի ճակատներին ճամբի կանգնեցրել նրանք պատերի ճակատներին յերկու կողմերից, վոր սայլերի սոնիները չքանդեն պատերը. Ի՞նչ քանդեն, բերդի պատերից ամուր եյին ու հաստ:

Յերկու հարևաններն աչքով պահում եյին իրար: Հենց վոր մինը մի քար եր կանգնեցնում, մյուսն ել յերկուսն եր կանգնեցնում իր պատի յերեսին: Յեթե մնկը մի քանի քար եր դնում իր պատի վրա, մյուսը՝ ավելի յեր բարձրացնում իր կողմը: Նրանք թեև իրար հետ հաշտ եյին, սակայն լավ եյին հասկանում, վոր յեթե մի որ այդ ճամբի բախտը գնովելիս լինի լայնացնելու մտքով՝ պետք ե տուժի այն հարևանը, վորի պատը թույլ ե ու չնչին մյուսի համեմատությամբ: Այս պատճառով ել նրանք յերկու հակառակորդ պետությունների նման՝ հակառակորդին սաստելու և իրենց խաղաղությունն ապահովելու համար՝ զինվում եյին շարունակ:

Յեկ հենց այս եր պատճառը, վոր յերկու այգին ել թեև առանց պատի ու չափարի եյին մյուս յերեք կողմերից՝ այդքան ամուր ու խնամքով պարսպված եյին այդ կողմից:

Շատ եր պատահել, շատ քոխվաներ ու ճամբա լայնացնող «կամիսիաներ» եյին յեկել Խեչանի ու Արքամի պատերին գեմ ընկել:

— Ով վոր զոչակ ա, թող մոտ գա, մի քար տեղիցը ժամ տա, սա մի որվա, տառը տարվա պատ չի:  
Հարյուր տարի յա ես պատն եստեղ. քարերը մամուա-  
կալել են սրա միջումը... արունս շաղ կտամ...

Ես նույնն ել մյուսն եր ասում, Խեշանը. ամեն  
մի քարի համար տասը վկա կանչում, հաստատելու,  
թե եղ պատը վոր ժամանակվանից ե:

Թե վոր վկաները չելին ոդնում, նրանից հետո,  
իրիկունները մեկ-մեկուց թագուն քոխվի բարեկամ-  
ներին եյին տեսնում, մոտը դրկում, վոր զուր տեղը  
վաս բանի պատճառ չդառնա, անեծքի տակ չընկնի  
խալխի պատճառվէ: Սրանց հետ զուգընթաց սկսում  
եյին ճանապարհորդել զեպի քոխվի առևն՝ արադի  
շներն ու ուրիշ փեշքեներ: Յեվ ամենահամառ քոխ-  
վեն անգամ հեշտությամբ թեքում եր այդ հզոր  
ուժի առաջ, ու քնում եր «Դժոխքի ճամբի» խնդիրը:

— Յես հո չեմ կարող մարդու հարյուր տարվա  
պատը քանդիմ ճամբի համար, մալը չեփո կամիսան  
վեռել ա. զակոնն ել չի տալիս բաղը քանդելը...  
մարդն ենքան վկա յա բերում... ինչ ա, ուզում եք  
ձեր խաթեր յիս բերթը մանեմ. չեմ կարող.

Յեվ պարզ ե, վոր հարցը փակվում եր սրանով  
ու ամեն ինչ վերջանում:

Իրանք, առանձին-առանձին նստած միտք անե-  
լիս, թե ինչին և թե Ապրին՝ անարժեք, բեյխեր եյին  
անվանում եղ «բաղերը»:

— Վոր ուրիշինն ըլեր, ինձ տային՝ տերություն  
չեյի անիւ—ասում եր ինչանը:  
— Ենդեր անեմ, թե սա բաղ ա... գանգատվում  
եր Ապրին:

Անունն եր բաղ. բայց ի՞նչ բաղ: Ապրի ապրո՞  
բաղի ներսը հազիվ մէ չվան լիներ: Նրա կենարունը  
բոնում եր կալը, վոր իսկի կալսելու յել չեր պետք  
դալիս: Ճիշտ ե, մի շարք քարերով շրջապատված եր,  
դալիս: Ճիշտ ե, մի շարք քարերով շրջապատված եր,

Կալի չորս կողմում, աղատ մնացած տեղը բռնել  
եյին յոթը հատ ընկուզենիներ, վորոնց գասավորու-  
թյունը հիշեցնում եր Մեծ Արջի համաստեղությունը:  
Նրանց արմատների ցանցը բավականաչափ հող չգլո-  
նելով իր տակը՝ ամբողջովին թաղվելու համար, շու-  
լալեր եր գետինը հսկա ոձի նման, այստեղ-այնտեղ  
դուրսը թողնելով իր գալարները՝ քարերը գրկած: Ել  
ուրիշ վոչինչ չկար այստեղ: Յեթե պատահեր, վոր  
յերբեմն-յերբեմն մի քանի շարք կարտոֆիլ եյին ցա-  
յիքին-յերբեմն մի քանի շարք կարտոֆիլ եյին ցա-

ըի դնչերով:

Են ինչ լինանինն եր, իսկի այդքան ել չկար:  
Նա, ճիշտ ե, «բաղ» եր ասվում, իսկ ասվում եր, վո-  
րովիետե իր նախնիների ժամանակ տրված եր իրք  
բաղատեղ, բայց դե ի՞նչ բաղ, ի՞նչ բաղատեղ, յերբ  
վասելու ջուր չունի: Մի քանի հատ վորձատու-  
զյուզը խմելու ջուր չունի:

Յերբ մոռացվում եր այգիները քանդելու կամ ճամբան լայնացնելու վտանգը—իսկ սա լինում ե շատ հաճախ—Ապրին ու Խեչին իրար կողքի նստած զրոյց ելին անում: Հիշում եյին, ընդգծում, թե իրենք սաղ գեղութն ամենից մաղբունն են (զրկվածը) բազի կողմից: Բայց յերբ առաջարկում եր գեղը նրանց ուրիշ տեղ, բաղի համար, թեկուղ և շատ լավը, ճամբան լայնացնելու համար,—լսել անդամ չեյին ուզում:

— Իմ հեր Ռւհանը, վոր պատահն ուսերին գա, ելի չեմ տա, — ասում եր Ապրին: Խեչանն ել նույնն եր ասում կամ դրա նման մի բան:

Թալիսման եր դառել գյուղի համար եղ ճամբի շինելու խնդիրը. ու եղ թալիսմանը հալելու համար գյուղի մի մասը սպասում եր, վոր հրաշք պատահի, մի չտեսնված ույժ յերեան գա, վոր կարողանա գլուխ բերել, իսկ մյուս մասը՝ անհնար եր համարում և այդ հրաշքը—գյուղի հավիտենական ճակատագիրը համարելով, վորը յերեք չի փոխվելու:

Բայց տարիներ անցան. ուրիշ աշխարհներում շատ բաներ փոխվեցին ու եղ գյուղումն ել փոխվեց:

Փոփոխություններից մինն ել այն եր, վոր այժմ գյուղում յերկու տեսակ զրոյց եր լսվում—հների ու նորերի, մեծերի ու ջահելների. Ամեն մինը մյուսին չեր հավանում ու ամեն մինն իր հիմնավոր պատճառն ուներ: Յեթե ուզենայիր իւսանալ, թե ովքեր են հիմա գյուղի կառավարիչները, ծերերն ասում եյին ափսուանքով.

— Ոչով. ով կա՞մ, վոր ով կառավարի. գեղը ջահելանոց ա դառել մինը պահի, նրանց խելքի բերի, նրանք ուզում են գեղ պահեն:

Եփսոսանքով հիշում եյին նրանք հին որերը, գովուած Ավմանի ու Նիկոլի քոխվայությունը (վորոնց հայհոյել եյին իր ժամանակին), թե «վախտն են վախտն եր, մեծ ել կտր, փոքր ել. ամենն իր տեղն ու պատիվը գիտեր... գեղն ել գեղ եր են ժամանակը»:

Թե վոր գեղի սարք ու կարգի մասին եյին խոսում — ջաղացի, կամրջի, ճամբի կամ այլ բաների կարգի բերելու մասին հեգնական ժապում եյին ելի հները ու առածով վերջացնում. Շնորհոր հավեր են դուս յեկել, յերկաթի ձգան են ածում: Թող յեղած կարգն ու կանոնը շքանդեն, նրանց նորը իրանց կինաւ:

Ու բանդվում եր գեղը նրանց զրոյցներում ամեն որ, վոր ժամի ու պատարագը փողմիշ արին, կնունքն ու հարսանիքը վերացրին, ոծած զիանին՝ ավարա արին...

Են ինչ ջահելներն եյին, իրանց գործը գիտեյին. ավելորդ ել եյին համարում նրանց բան հասկացնելու համար ժամանակ կորցնելը: Իրենց անելիքներովն եյին փոփորված նրանք, ու լավ եյին հասկանում թե գործի գժվարությունը և թե իրենց անփորձությունը:

— Վոչինչ, սիրո եյին տալիս իրար տղերքը բջիջում, թող խոսեն, ինչքան ուզում են. աղաթ ա, վոտավորը միշտ ձիավորին անազ կանի: Կառփորենք. գործը մեզ կսովորեցնի. կենտրոնի հրահանգները մեզ ճամբա ցույց կտան:

Մի աղունքվա որ ել—հները չեյին ել իմանում, ինչ որ ե դա—ջահելները կրակ եյին կտրել. պատիվ աղունքություններ եյին տեսնում: Բջջի վորոշումը բերաստություններ եյին տեսնում:

րին գյուղիստիքի լայն ժողովը՝ ժողովս ել հաստատեց իր վորոշումով, վոր անպատճառ անմահացնել ամեն տարի այդ որը գյուղի համար մի նշանավոր գործով. և հիմա խոսվում եր այդ բանի մասին, թէ ինչ անեն, ինչ շնորհ գյուղի համար, վոր արժանի լինի վորոշմանը:

Վերջին ժողովը նշանակված եր կիրակի որը, վորտեղ պետք ել լսելին ամբողջ գյուղի կարծիքն ու առաջարկությունները գյուղի պակասությունների մասին, ինչ անելիքի մասին: Ամբողջ գյուղին հայտնված եր, վոր ընդհանուր ժողովին բոլորը պետք են երկա լինեն: Կարգադրված եր չութվորներին ել, վոր այդ որը խափանեն իրանց ցանը ու ժողովի գան:

Գյուղի մեջ մի քանի տեղ, պատերի ու սյուների ձակատներին խմբով կպցրած թղթեր ել կային, վոր հայտարարում եյին:

«Կիրակի որը, նոյեմբերի օ. ին, ընդհանուր ժողով կա: Բոլոր ձայն ունեցողները, տղամարդ թէ կին, պարտավոր են ժողովի գալու»:

Յեվ, ձիշտ վոր, ժողովը խիստ բաղմամարդ եր, ներսը անհնար եր. մի մասը պետք ել դուրսը մասը:

— Դուանը, դուանը, — ձայն տվին այս ու այն կողմուց, — ես ջամհաթը եստեղ չի տեղվարի. դուանը, ձղպի տակին:

Այդ ցանկությանը վոչ թէ զեմ չեղան, այլև քանի գնաց, լայնացավ բազմության մեջ: Ո՞վ եր տեսել եսքան մարդ — ինչ զատիկ, ինչ ծաղկազարդ, վողջ գյուղն այնտեղ եր:

Յեվ ժողովը բացվեց դուրսը, համիկին ժամի դուանը, մեծ ընկուղենու տակ:

— Հընգներներ, — լսվեց սկացած բազմության վրա զիմացի փոքրիկ բարձրութից նախազահ թերվանդի ձայնը նվազ:

— Սուս, սուս կացեք, սուս... քաշում եյին իրար թեց, փեշից... ձեռքը չհասած տեղը՝ ձեռնա-փայտերն եյին գործում սրա ու նրա ծոծրակին, թի կունքին, փափախներ տեղահան անում — լոեցնում եյին:

Ու պապանձիկց ամբոխն անմիջապես:

— Հընգերներ, — այժմ ավելի պարզ ու հնչյուն լսվեց նորից նախազահի ձայնը, — ժողովը հայտարարում եմ բացված: Ես մեծ ժողովը նվիրված ե Հոկ տեմբերյան Հեղափոխության որերին և մեր հորվասրակարգում մի կարևոր հարց կա միայն դրված — ինչով անմահացնենք ես մեծ տարեղարձը մեր գեղի համար: Ձեզնից ամեն մեկը լավ գիտե գեղի ցավերն ու պակասությունները. թողեք ամեն մեկը մտածի ու ասի, թէ ինչ անենք մենք ես երկուիրեք որը, վոր պակասեցրած լինենք եղ ցավերից մինչ ու մինը: Ի՞նչ զործ անենք, վոր արժանի ու սաղական լինի եղ որվա համար ու մշտական հիշվի մեր մեջ: Հիշում եք լին, թէ ինչ եր ձեր որն ու ապրուսող Հոկտեմբերից առաջ, Նեկալայ թագավորի ձեռքին: Են ժամանակ ել զուք շատ գործեր եյիք անում իրար հետ, հասարակությամբ, բայց ուրիշի համար, թագավորական հրամանով, կոռ ու բեզյառով կատարել: Մեր տերը մենք ենք, մեղ ուրիշ հրամայող

Հիմա վոչ եղտեսակ հրաման կա, վոչ ել թի կոռ ու բեզյառ: Ես ժողովը մերն ա, մենք ենք կազմել մենք կարող ենք վորոշել են, ինչ վոր ուղում ենք կատարել: Մեր տերը մենք ենք, մեղ ուրիշ հրամայող

չկա, ինչպես առաջ: Մատածեցեք հիմա, ու ձեր մտածածն ասեցեք, ինչ անենք:

Լոռությունը փշրվեց և նրա փշրանքները բաղմության մեջ դարձան շշունջներ, զբույժներ... աղմուկ—նրանք մտածում եյին: Շատերը՝ անմիջական սպավորության տակ, փոխանակ առաջարկի մասին մտածելու, գովում եյին նախագահին.

— Ցենում ես, ինչ տղա դուրս եկամվ...

Շատերն արդեն վեճի եյին բոնվում հարկանաերի հետ, զոր չեյին համաձայնում իրենց առաջարկներին:

Փողովականները, ասես զինավարժանքից հանգրստի հրաման լսած զորամաս լիներ. մոռացել երքիչ առաջվա լոռությունը:

— Ասաջարկություններ արեք, հընդերներ...

Նորից աղմուկը նոսրացավ ու յերբ տեսան, զոր նախագահը չի շարունակում իր խօսքը՝ իրենք ըսկեցին:

— Ցես առաջարկում եմ, հընդեր նախագահ, զընանք հսանք որչով, հազիր հավաքվել ենք, մեր ջաղացի արթը շինենք հիմնավոր. թե չե շարաթը մի անգամ գործի վախտը ջաղացը խափան ա ըլում, մեզ բանից գցում:

— Դրի, քարտուղար, եթ առաջարկը:

— Ցես առաջարկում եմ ես պուճուր ձորի վրա մի թեթև կարմունջ շինենք, զոր են զցած տկլոր փետովը գնալիս քանիսն են սլկընացել, տակին տվել:

Եղ «սլկընալու» վրա շատերը ծիծաղեցին, իրան առաջարկողի հետ միասին:

Մի քանիսն ել սրախոսուեցին:

— Անդեր փետը հենց ա խառատի չարխած ըլի:  
— Չարխածը վրբն ա, քյանդրբազը կարալ չի անցկենա վրնովը:

— Ցես ել առաջարկում եմ ըշկոլի մասին, ամեռնագլխավորը:

— Ցես ել՝ աղբըի մասին:

— Հընգեր Սարգիս, գրի բոլորը:

Առաջարկությունները տեղում եյին ամեն կողմից. գյուղը մեծ, պակասությունները շատ...  
Եղ միջոցին պատի տակ շրջանաձև նստոտած ծերերի միջից վեր կացավ մինը, փափախը բարձրոց ցըեց, զոր նկատվի, ու ձայն տվալ.

— Ա՛ նախագա, ա նախագա...

Նրա ցանկությունը նախագահին հասցըին, թե բան առզում ասի: Միպտակ միրուքով ու մաղերով շրջանակված մի հաճելի դեմք եր զա, Մարդուկը զյուղում մեծից ու փոքրից հարգված մի ծերունի, զորը միակն եր՝ հավանող ու գովող ջահեների արածին:

Լսվեց նախագահի ձայնը, զոր լոեցնելով աղմուկը՝ դիմեց նրան:

— Խոսքը քունն ա, Մարդի ապեր, ինչ ունես ասելու:

— Ցանի, ինձ ել ա խոսք համարեմ, ա բալա ջան, թե մենակ ջահեներինն ա խոսքը:

Ծիծաղեցին բոլորը. ինքն ել ծիծաղեց ու ծիծաղելու համար ել ասել եր հենց:

— Առաջարկության համար բոլորն ել խոսք ու իրավունք ունեն, Մարդի ապեր, բալքի քու ասածը ամենից ընդունականն ա, ասա, տեսնենք:

— Յես են եմ ասում, արևներիդ մատաղ, վոր շատ եմ հավանում են խոսքել, թե ամեն տարի գեղի համար մի լավ, մեացական բան շինենք և են ել սաղ ելով, որչով, իրար հետ են, ով վոր ուղում ա միանդամից տասը բան շինի, նա սուտ ա ասում, խարում, հավատաս վոչ, եղածս խաքել են մինչի որս մեր գեղի բոլոր քոյսվա գլափինները. երեսներին եմ ասում, նրանցից շատերը հստեղ կլեն: Այ, սրտն հավատացեք, թե խոսքիս չհավատաք, — բոնեց իր ձյունի պիս ձերմակ միրուքը, — նրանց միջին ա սիալտակել...

— Դրուստ ա...

— Դրուստ ա...

Նետում եյին այս ու այն ափերից, կողմակից ները:

— Թողեք, մին տենանք, ինչ ա ասում, — զժգությամբ նկատում եյին վոչ կողմակիցները:

— ... Հիմա, իմ ասելիքս են ա, վոր, թե վոր ուկում եք գեղի համար մի նշանավոր զործ անեք, ենթավոր զործ, վոր ամեն որ հիշեն ձեզ ու ձեր որն ու արևը ոխնեն՝ շինեցնք Ակորի տան տակը, են «զժոխքը», թե վոր կարաք, թե վոր աչքներդ ուտում ա, վոր կարաք շինեք: Թե հու, աչքներդ ուտում չի մի բանի՝ լավն են ա, վոչ անումը տաք, վոչ ել ըերան բերեք, վոր չասեն, թե «առաջվա նման պարծենում են լավ յերեալու համար, ու, ես ժողով-մողովն ել սուտ բան»...

— Այ, լավ բան, ինչ կասեմ...

Ծոր տվին եստեղից-ենտեղից բազմության մեջ:

— Եղ ա, զորմի հորդ, Մարդի, սաբաք դառար, շինել տվիր, — աչքերը հեգնական ժպտացնելով, դիմեց

Աղունց նեչին, վորի բաղի կողքովն եր անցնում եղ ձամբան:

Կողքի նստածներն ել ծիծաղեցին եղ սրախոսության համար ու ավելացրին իրանց հերթին. Ենդ ձամբան շինողներից շատերին ենք տեսել, թող Մարդին հավատա, զրա խելքն ել նրանց հասակին ա մընացիլ»:

— Մի քիչ ել գնւք հավատացեք, — ուսովը շպըրտեց դեպի նրանց Մարդին, մի կտոր ժպիտ ել ինքն առնելով դեմքին, — սրանք առնողներ են երեւմ, են ա վոր ձեր խելքը չի կտրում:

— Ամեն բանից առաջը դա յա, դրանից մեծ պակասություն չունենք, — շարունակվում եյին բացականչությունները որորվող ժողովականների զանգվածից:

Նախագահությունը մի ըովել շշուկեց. մի քանի գլուխներ մոտեցան իրար ու նորից բռնեցին իրենց տեղերը:

Նախագահը նորից ձգվեց ամբողջ հասակով ու աչքերը սկսեց դեպի ժողովականները:

— Ի՞նչ կասի ժողովը, ես առաջարկություններից վերն ա ընդունելին:

Վհնց վոր վարժեցրած մի դասարան իմբովին պատասխանի ուսուցչի հարցերին՝ մեխեցին ենպես կտոր-կառը, շեշտելով ամեն մի բառը.

— Մարդի ա-պոր մասածը... Դժոխքի ճամբան...

— Դե ով վոր դաբուլ ա, թող ձեռքը բարձրացնի:

Չեռների մի անտառ բազմության վրա:

— ԴԵ, ընկերներ, ուրիշ բան ել ունեք, թե մենակ եղ բավական ե:

— Եղ մինը բոլորին հավասար ա, շատ բավական ա:

— Աւրեմն, ընկերներ, հարցը վճռված է. պետք է շինանք գեղի մէջի ճամբան, Դհոչունց տանից մինչև Ակորի տունը: Մի կամիսիա ջոկենք հիմա, վոր դնա տեսնի, պլանը բաշի, թե վոնց պետք ե անի: Եզուց չե, ելոր, իբեքշարթի որը, ինչ վոր բան ու քլունդ բռնող կա գեղումը, կհավաքվի ևստեղ իրանց քլունդներով, բահերով, լոմերով: Կոմսոմոլներն իրանց կարգին, ամենից առաջ կպահ: Դարու էք:

— Դարու ենք, դարու ենք,—համազարկ տվակ ժողովը:

Կամիսիան ջոկեց հինգ հոգուց: Ժողովը վերջացավ, ժողովուրդը մըջյունների թելեր դառավ ամեն կողմի վրա:

— Հմի յել չի խելքդ կտրմւմ, ինչի, — ժպիան աչքերում հուալ տված, դիմեց Մարդի ապերը տեղից վեր կենալով:

Խեչին շատ լուվ լսեց իրեն ուղղված հարցը և այն խայթոցը, վոր կար դրա մեջ, բայց վոչ ժամաց, վոչ ել պատասխանեց: Հեռացող հասարակությունը մի առանձին հաճույք ու թեթևություն եր տանում իր հետ — վոնց վոր մի հաղթանակ, վոնց վոր մի գյուտ:

Խորհրդայնացումից հետո գյուղում կրոնական ծխակատարության հետ կապված վոչ մի գործողություն այնպիս չեր մնացել իր պատվի ու կոչման վրա՝ ինչպիս զուռնան ու դհոլը: Տերտերների սաղմոսի ու

շարականի ձայնը վաղուց եր կտրվել. զանգակները՝ աեղները փոխել եյին. են ինչ զուռնան ու դհոլը՝ հարդի եյին դեռ, հնչում եյին զել ծոր տալիս հպարտ ու գլխներին հավաքում գյուղի մեծին ու փոքրին:

Յեվ ամեն անգամ ձենը բարձրանալիս՝ հարցնում եյին իրար.

— Տենաս եսոր ինչ կա, վոր զուռնա յեն փշում:

— Յա կինո կլի, յա թատրոն,—պատասխանում եյին հարցնողի կողքին կանգնածները:

Բայց յերեքշարթի որը, նոյեմբերի 7-ին, յերբ զուռնան ծիլ տվակ բայաթի սեֆիլը, ել վոչ վոք վոչ վոքի չհարցրեց, թե ինչն յեն փշում, վորովհետև բոլորը զիտեյին պատճառը: Ամեն տան միայն արագացնում եյին իրենց շարժումները՝ լոմ, քրունկ, բահ ճարելու: Ամեն տան պատրաստություն եյին տեսնում վայդ, վոր չուշանան: Շտապում եյին բոլորը. մեծ, վորքը, հարս, աղջիկ...

Այսպես շտապում եյին մեկ եւ յերբ գյուղը բյանդրբաղ եր գալիս կամ աչքակապուկ: Զուռնան շարունակում եր իր նազանքի ծորը այնքան անուշ ու վոգեորված, վորպիսին պատահում եր զուռնաչի Մաքոյի հազվագյուտ տրամադրության ժամանակ: Նա պարծենում եր իր «սեֆիլով» և իրավ, արժանի յեր պարծանքի: Հիմա հեռվից հասնող նրա նվազը քանգել եր բոլորի համբերությունը խրձիթներում և շտապողների մտքի առաջ կանգնած եր նա, դեմքը կարմիր ու կլոր, բավականությունից աչքերը կիսախուփ: Դհոլը՝ չեր խանգարում զեռ: Կանչում եր այդ ձայնը, վորպես ազգանշան համայնական մի մեծ գործի, անմահաց-

նելու անցած Մեծ Արի այդ որվա փոխը մի մեծ գործով այդ գյուղի համար:

Եեվ գյուղի այն մասը, վոր հրաշքի յեր սպառում «Դժոխքի ճամբան» ուղղելու համար՝ այսոր տեսավ այդ հրաշքը: Դեռ իր հիմքը գյած որից մինչև այդ որը, գյուղը չեր աեսել իրեն այդ որվա նման ի մի հավաքված, այդպես սրտով ու հոգով մեկ, այդքան ուրախ մի գործի գիմելիս բոլորի համար:

Հրաշքը կատարվեց բոլորի աչքի առաջ, որը ցերեկով ու շատ հեշտ:

Ցերթը հանդիսավոր եր: Զուռնա-դհոլից հետո գնում եր գյուղի ամբողջ յերիտասարդությունն ու չափահասությունը՝ զինված քրունգներով, լուսերով ու բահերով: Նրանց վերև կարմրին եր տալիս կոմսոմոլների դրոշակը. բազմությանը շրջապատել եր թամաշավոր յերեխայությունը. կառուներին գույնպատճեն վնաշված եյին թամաշի հարսն ու աղջիկները: Հներն եյին մրթմրթում միայն, հայհոյում եյին կարծյոք իրենց-իրենց ու յետ դառնում տուն:

Թե ինչ կատարվեց այդ որը, գժվար եր մոտիկից լավ դիտել, այնքան խիտ եյին աշխատավորների շարքերն ու նրանց գլխի վերևը կանգնած փոշին: Մի յերկու որ հետո միայն պարզ յերեսում եր մի տեսարան, վորին գժվար եր հավատում ծանօթ աչքը: Կորել, անհետացել եր գյուղի միջից «Դժոխքի ճամբան»: Նրա տեղ ձգված եր մի լայն, ուղիղ փողոց, խճով ու մանրաքարով լցրած բոլոր խորդ ու բորդերը. լայնացել եր այնքան, վոր յերեք սայլ կանցներ այժմ կողք կողքի ու վահ մինի վոչ սոնին, վոչ ել ակը չեր բռնիւ կամ դեմ ընկնիւ այդտեղ քարին ու պատին:

Խեչանի ու Աբրհամի պատերը հեռացել եյին իրարից, լայն գիրկ բացել իրենց միջև: Ել մամուռ չեր յերեսում, վոր պատի յերկու քարը իրար միացներ միննույն գույնով:

Ճամբան շինելու որը Մարդի ապերն ել եր նըրանց մեջ. նա աչք ածեց, ու յերբ վոչ Խեչանին տեսավ, վոչ ել Աբրհամին՝ իրան-իրան ժպտաց:

Ել են ճամբառմը յեղն ու գոմեշ չի թակվում. ել ձմեռը ապրանքը ջուրը տանելիս վոչ մինը չի սայթաքում, ել վոչ ձիավորն ե ձիուց իջնում, վոչ ել կժորը կուժն ուսից ցած բերում. ել դժբախու զեպքերի մասին չեն խոսում այնտեղ ու, վոր զլիավորն ե, նախկին թևավոր հայհոյանքները ել չեն հնչում իրենց պատերի հասցեյին: Մոռացվել հ նախկին անունն ել այդ ճամբի, թեև ենքան շատ ժամանակ չի անցել վրայով ու հիմա բոլորը գիտեն նրա նոր անունը, վոր ցույց ե տալիս եղ ճամբի ափին կանդնած կաղնի սյունը, ճակատին զրված տախտակով՝ «Հոկահմբերյան փողոց»:

# Բ Ա Դ Ա Լ Ը

I

Գյուղացի Սահակն ու իր կին Շողերը յերկար խորհուրդ անելուց հետո վճռեցին՝ իրանց Բաղալին քաղաք տանեն ու մի արհեստի տան:

Սահակը Բաղալին իր յետևիցը գցած ճամբա ընկալ գեպի քաղաք, ու ճամբին նրանց պատահող գյուղացիք վոր հարցնում եյին թե՝

— Ախր, Սհակ, եղա յերեխադ անջաղ բանի հասել ա, ընչի՞ չես թողնում կենա, քեզ ոդնի, քաղքիցն ի՞նչ ոգուտ:

Սահակը նրանց պատասխանում եր.

— Լավ եք ասում, շաքար եք ուտում, ամմա վար ունեցածիս վրա պահեմ. հողիս, թէ ապրանքիս: Մի կտոր հող ունեմ, յերկու տարին մին եմ վարում, մի լուծ յեզը՝ սաղ տարին բեզյառի ճամբին ա ըլում, կարում չենք թէ տարվա ցամաք հացն աշխատենք: Թէ չե՞ սրա նման յերկու Բաղալ ել են են տանը նստած: Տանեմ, փեշակի տամ, — ասում եմ, — մի բան սովորի, մի կտոր հացի տեր դառնա. թէ ինձ կոզնի, լավ, թէ չե՞ հո իրա համար ել ա լավ կիի:

— Լավ ես անում, հավանություն եյին տալիս նրանք ու Սահակը շարունակում եր իր ճամբան:

Բաղաքումը նա, տղան յետեկցը գցած, յերկար պտաեց փողոցից փողոց, բայց մի են տեսակ տեղ չկտավ, վոր հավանեց ու յերեխան թողնեց: Խանութպանները համոզում եյին «աշկերտ» տալ, վոր առուտուր սովորի, մարդ դառնա: Իրանց գեղացիք ել եյին խորհուրդ առաջ այլ, բայց ինքը Սահակը զլուխը շարժում եր բացասական:

— Զե, ախաղեր, ասում եր, յես ու իրան մերը վճռել ենք՝ փեշակի տանք, փեշակը վոր կա, վոսկի յա, մի կտոր հալալ հայ, ծոցումը գրած, վորտեղ սովածանա՝ ենտեղ կհանի կուտի: Առուտուրը — մեր ըանը չի. յես մարդ եմ խաքի, վոր իու տղան մարդ խարեի... Ու յետ եր դառնում, պտամում Մազոյի պատմությունը: — Մեր գեղումը, ասում եր, մի չարչի Մազոյար: Չարչությունով մեծ հարստություն եր կիտել, բոլորը պակաս չափելով ու թեթև քաշելով: Մեռնելիս, ոխտն որ եր, չարչարվում եր: Խալիսը ծիծազում եր, թե են ե չարչի Մազոն հաշիվ ա տալիս:

Հայո ման գալով, հեր ու աղա յեկան կանգնեցին մի գարբնոցի առաջ: Արհեստանոցի գռները կը-ընկի վըա բաց եյին, փողոցից լավ յերկում եր, թե վոնց իրարով անցած աշխատում եյին մրոտ բանվորները: Փուքոը ուռչում եր ու փնչացնում ենպես, վոր կասես թէ կապոտած գոմեշ լիներ: Քուրի բերանից դողդողալով ներս ու դուրս եյին անում կարմիր լեզուները. հետո կաշվե գոգնոցավոր վարպետը արագությամբ դուրս եր քաշում ենտեղից յերկաթը ու համարյա շպրտում, նետում զնզանի վրա: Մեկը մյուսին հասպեհաս ճռճում եյին ոդում ծանր կոանները ու իջնում. յերեքն եր, չորսն եր... աչք ել չեր հաս-

նում, վոր մարդ համարեր: Ասեն մի զարկի հետ մի բուռը վոսկի յեր շպրտում յեռացող յերկաթը զնդանի շուրջը: Կուանափորները վայրկենապես ճպում եյին աշքները. առանց յերեսները թեքելու՝ ճողով վեր ու վար եյին անում նրանց մեջքները կուանների հետ, իսկ վարպետը վարծ ու հմուտ ձեռքով և չափ եր տալիս նրանց, և հատհատ ել հարգվածում յերկաթին այնպես, վոր կողքից նայովը վախում եր, թե, հրես իր մուրճն ել յերկաթի հետ միատեղ պիտի տափակի կուանների տակ, զնդանի վրա:

Վոր յերկար կանգնեցին, թամաշա արին եստեղ՝ նա դարձավ վորդուն.

— Բադալ ջան, ասավ, սրանից լավ փեշակ չի ըլիւ այ վորդի, արի հարցնենք, տեսնենք ի՞նչ մարդ ա սրա խաղեյինը ու սրա մոտ աշկերտ մտի: Փեշակո կոսկորես, վորդի, հետո, վոր քաղաքումն ել չուզենաս մնալ, կզամ մեր գեղը՝ ենքան կացին, ցաքհատ, խոփ, մանգաղ կընես, ենքան գործ կածեն գլխիդ, վոր չես իմանա, թե ինչ անես:

Բադալը, վոր ենքան ել հեշտ շեր բաժմանվել գյուղից, գյուղը վերադառնալու մասին վոր լսեց՝ դուր յեկան հոր խոսքերը, ու նրանք սիրտ արին, մասն արհեստանոցը:

— Ի՞նչ ես ուզում, բիծա, դիմեցին նրան:

— Ես դուքանի խաղեյինը վորն ա, խաղեյինին եմ ուզում, ախպեր:

— Ի՞նչ ես անում խաղեյինին:

— Ուզում եմ ես երեխին աշկերտ տամ, աշկերտ չի վերցնիլ:

— Եստեղ նստեցեք, ես ա կգա:

Քիչ հետո խաղեյինը յեկավ: Սահակը շատ հավանեց նրան, լավ մարդ եր յերեսում նրա աչքում:

— Բիծա, ասաց, յեթե քաղքի լպստած յերեխաներից լիներ, չեյի վերցնիլ, բայց վոր գեղացի յադու յել, տեսնում եմ, խեղճ մարդ ես, քու խաթեր համար կվերցնեմ:

Իրիկունը Սահակն ու Բադալը խաղեյինի հետ միասին տուն յեկան: Չայ իմեցին, պըծան, պայմանավորվեցին, վոր հինգ տարի Բադալը խաղեյինին ծառայի, նրանից հետո խաղեյինը թուղթ տա, վոր նա փեշակը սովորել ա, ուստա յա, Շիսկ յեթե հինգ տարուց հինգ որ պակաս դուրս գա՝ հո վոչ մի թուղթ չի ստանալը—զգուշացրեց Սահակին:

Սահակը վերցրեց պայմանագիրը, գրպանը դրեց, հետո բերավ գյուղը, քյուխվին փեշատել տվավ ու յետ դրէկեց քաղաք:

## II

Ում ձեռքը պարապում եր, Բադալի գլխին եր հասցնում:

— Տն, վոչ ու վուչ, եսպես աման կլվանմն... խփում եր խաղեյինի կինը:

— Տն, զետինը մտած, եսպես վունաման կաըրըն, գլխին եր տալիս կոշիկը, նրա մեծ աղջիկը...

Բադալը համ տան ծառա յեր, համ արհեստանոնցի աշկերտ: Առավուները սամովար եր զնում, շուկայից տուն բերում առած մթերքը ու զնում արհեստանոց: Յերեկոյան՝ շուտ վերադառնում եր տուն՝ անհրաժեշտ գործերն անելու—նորից սամովար, ամաններ լվանալ և այլն:

Ազատ ժամերին կողք-կողքի նստում եյին Բադալն ու Նիկոլը: Մինը գյուղից եր պատմում, մյուսը՝ զբքից: Մեկ ու յերկու անգամ չեյին իջել նրանց թափով ձեռքերը Բադալի գլխին, թե «Նիկոլի գասերը մի խանգարի, թող սովորի», բայց նրանք ելի մնում եյին իրար ընկեր:

Արհեստանոցում ել պակաս չեր ստանում Բադալը: Ով հասնում, գլխին եր գալիս: Մի անգամ ել դանգատվեց խազեյինին, թե՝

— Ինձ ուշունց են աալիս բանվորները, յես ի՞ն եմ արել նրանց:

— Աչքդ ել են հանում,—պատասխանեց խազեյինը, —բա ո՞ւմը պատեն ուշունց տալ, ուստաներին, թե՝ ինձ, աշկերտին մինչև չթափեն, ուշունց չտան, նա փեշակ չի սովորի, կարգը եղ ա. դու գլուխդ կախ, քո գործդ արա:

— Հը՛, կարմա խաթարը զզացնես խազեյինին, լածիրակ, —վրա եյին պրծնում դրանից հետո, յերբ Բադալը մոտենում եր մյուսների զրույցին:

— Այ, թե խաթար կտա, —վրա պրծավ մի անգամ կուանահար Յերվանդը ու դուրս քաշեց քուրայից չիկացած յերկաթը.

— Տեսնում ես, փորդ կկոխեմ, շան լակոտ, թե բերանիցդ բան ես հանել տանը:

Բադալը սոսկաց ու յետ ու յետ գնաց, յերբ տեսավ շիկացած, փայլիլող յերկաթը: Նա յերկակայեց, թե վոնց իրա փորն են կոխում այն կարմրած ձողը ու վոնց թշալով ու ձըլալով խորովում ե իր ներսը: Թե ինչու պետք ե անեյին այդ, նա վոչ հասկացավ, փոչ ել թե համարձակվեց հարցնել: Հետո միայն գլխի

ընկավ, վոր նրանց խոսակցությունը խազեյինի հասցեյին եր:

— Վոր խելքդ գլխիդ պահես, բերանիցդ պինդ լինես, մեղանից ավելի ոգուտ կունենաս, քան թե խազեյինից: Նրա ամաններն ես լվանում, մի փոր կուշտ հաց ել չի տալիս, վոր ուտես. բայց փեշակը, քո մշտական հացը, մենք պետք ն տանք քեզ—ասացին մի ուրիշ անգամ:

Բադալի լեզուն բացվեց եղ որվանից նրանց առաջ. նրանք ել տեսան, վոր սխալված են յեղել Բադալի մասին: Վստահացան մեկ մեկու ու, Բադալն եղ որվանից դառավ բոլորի աչքի լույսը՝ իր շնորհքով, իր բնավորությամբ:

Իսկ հետո համոզվեցին, վոր Բադալն իրենց նման յերկուսին արժի, և նրա արածը վոչ վոք իրենցից չի կարող անել:

Նախկին ատելությունը փոխվեց մի ջերմ ընկերական սիրո, վոր արտահայտվում եր ամեն մի նրանց խոսքի մեջ:

— Զան Բադալ, արնիդ մատադ, պուճուր տղա, քեզ տեսնենք հա...

Ու Բադալը յերբեք չեր կարմրում, յերբեք ամոթով չեր թողնում ընկերներին, յերբ մի հանձնարարություն եր արվում նրան, թեկուզ շատ ծանը ու պատասխանատու:

— Գախիլ միք, սիրա եր տալիս Բադալը ու գըլ խարկն ամրացնելով անհետանում:

Յերեկոները Բաղալի համար ուրիշ շրջան եր սկսվում.

— Բաղալ, արի եստեղ,—կանչում եր խազեյինը խրատելու, — այ վորդի, տեսնում ես, վոր յես քեզ իմ Նիկոլից չեմ ջոկում, սիրում եմ նրան հավասար — այսպիս քաղցր եր խոսում մանավանդ, յերբ նա տուն եր գալիս գինեանից: Ալկոհոլի հոտից Բաղալն ուզում եր շամի, բայց պարտավոր եր լսելու մինչև վերջը:

— Եսոր դու իմ տանը իմ հացն ուտում ես, իմ դործին ել պետք ել լավ մտիկ տաս, թե չե գլխիդ պատիժ կըերի կերածդ աղ ու հացը: Դու տեսար, վոր հորըդ խաթըրը չկոտրեցի, քեզ աշկերտ վերցրի. ասացի խեղճ մարդ ա, թող վորդին ինձ մոտ բան սովորի, մի կտոր հացի տեր դառնաւ: Մըս, նրա խելքովը չընկնեա: Են բոլոր բանվորները, դրուստ ա, իմ հացովն են ապրում ու յերեսիս «խազեյին» են ասում, ամմա քամակիս իմ թշնամիներն են, ուզում են թե քարխանիս քանդեն: Հազար ու մի վատ բան կուլորեցնեն քեզ, վորդի, վոր նրանց ականջ դնեա: Խելոք, խոնարհ կծառայեն մինչև ժամանակդ կլրանա, հետո իմ ձեռովը քեզ ուստա ոխնել կտամ ու, նրանից դենը՝ մաջադ վոսկի յա, վորտեղ չաքումդ խփես՝ ջիրիդ փողն անպակաս ա:

— Յերբ վոր յես քարխանումը չեմ, աշքով պահի, այ վորդի, տեսով ի՞նչ ե խոսում ինձանից ու արի՝ ասա...

Բայց խազեյինն ինչ իմանար, թե պուճուր Բաղալի գլխում իրանից շատ խելք կար. յերրորդ տա-

րին եր, ինչ քաղաքումն եր նա և լավ գիտեր, թե ինչպես պետք ե ընդունի ամեն մեկի խրատն ու խորհուրդը: Խազեյինը հիմա քաղցրացել եր Բաղալի հեա: Զե՞ վոր հիմա նա ավելի յեր պետքական, քան առաջ:

— Բաղալն ինձ համար մի լավ ուստից գլուխ ա, խոստովանում եր նա կնոջ մոտ շատ անգամ: Շան լակոտը, դժարը աշքը մի բան տեսնելն ա, են սհաթը վերցնում ա, ենքան շնորքով ա վոր:

— Վոր շնորհքով չըլի, ենքան գործի արանքումն եղան գիր կսովորի՛: Հազար անգամ զլիին տալիս ենք, գիրը ձեռքիցն առնում, շպրտում, ելի, զնում ես տեսնում կուլինումը կողքին դրած, համ իր գործն ա անում, համ ել՝ կարգում: Մեր Նիկոլին տված ուսումի չեթվերը վոր զրան տային, ով գիտա տասն անգամ նրանից շատ սովորեր:

Յեվ, իսկապես, յեթե Նիկոլի ընկերակցությունը չիներ են տանը՝ Բաղալը շատ վաղուց վախած կլիներ, բայց, նախ գիրը կապեց նրան, հետո ել իրա ընկերները:

Հիմա նրա ձեռքին հաճախ յերեսում եյին նոր ու նոր գրքույկներ, վոր կարդում եյին Նիկոլի հետ միասին, դատում ու վիճում իրար հետ: Մայրը շատ անգամ միջամառում եր, բարկանում, թե «դու ով ես վոր հուջաթ ես տալիս երեխուս հետ. լեզուդ քեզ պահի, թե չե հոր ականջը կցցեմ, կաշիդ կպոկի: Նիկոլը լուեցնում եր մորը միանգամայն հանգիստ տոնով, թե «մենք չենք կովում, մայրիկ, թող»...

Կիրակի որն եր միայն Բաղալի համար փոքր իշտակ ազատ որը, բայց այդ որն ել նա շատ անելիք ներ եր ունենում, վորի մասին տանը վոչ վոքի չեր ասում:

Մի կիրակի որ ել տանից շուտ ծլկվեց Բաղալը:  
Ինչ վոր անհամբերություն եր նկատվում նրա շար-  
ժումների մեջ: Գնաց ու կես որին ել վերադարձակ  
սովորականից ուշ, այլայլված ու գլխաբաց:

— Բաղալ ինչի՞ ուշացար:  
— Եղ ինչի՞ յես սփրթնամա...  
— Գղակդ հեր ա, Բաղալ...

Բաղալը միայն վերջին հարցին պատասխանեց:  
— Կարմունջոմն անց կենալիս, քամին զլխիցո  
տարավ, Քուռը գցեց:

— Կարմունջումը քո զլուխու ծեծողն ո՞վ եր, վոր  
գղակդ ել քամին տանի, Քուռը գցի, — վրա պրծան ա-  
մին կողմից:

Հետեւյալ որը քաղաքի զանազան մասերում, զա-  
նազան ձևերով եյին պատմում կիրակի որվա «բուն-  
տի» մասին: Ասում եյին, վոր ցրւցարաբները հան-  
կարծ մի դադաղով միացել են ինչ վոր քաղմամարդ  
հուղարկավորության ու, յերբ հասել են քաղաքի շու-  
կան՝ վորտեղ ամբոխը ստվարացել ե մի քանի անգամ,  
ընթացքը կանգ ե առել հոգեհանգստի: Ահա այդ ժա-  
մանակ բարձրանում են ամբոխի միջից հերթով ճա-  
ռախոսները: Մեկ ել դադաղը բացվում ե ու հանվում  
կարմիր դրոշակները նրա միջից, և սկսվում — «կեց-  
ցե», «կորչի»... Թռուցիկների դաստաները դուրս  
են գալիս դադաղից ու փոփոալով ցըվում են հազա-  
րանոց ամբոխի գլխին: Ամեն մեկը մեքենայաբար հրե-  
լով կողքինին, ձեռքը մեկնում եր վերցնելու և խլխում  
եյին իբարից: Այս շփոթն ու իբարանցումը տեսում ե

այնքան ժամանակ, մինչև վոր կողակների ձիավոր  
խմբակները զանազան փողոցների բերաններով մտնում  
են եղ հրապարակը:

Խոնդված ամբոխը գեռ հրապարակից չեր քաշվել,  
վոր ձիերի վոտնաձայնը և մտրակների շպղոցը իրա-  
րանցում և զցում մարդկային զանդվածի մեջ, վորի  
թանձր կենարոնից դեռ լսվում եր լի կոկորդներով  
«կորչի... կեցե»...»:

Խառնվում են հրացանի զարկերը: Շփոթը մեծա-  
նում է: Ամբոխի միջից ել հատհատ ատրճանակի պա-  
տասխաններ են լինում, վորից հետո ծեծն ու խուճա-  
պըն ավելի յե ուժեղանում և ամբոխը, իջնող ալիք-  
ների նման, կամաց-կամաց հալվում ե զանազան ուղ-  
ղությամբ: Դատարկ հրապարակում ննում են՝ տեղ-  
տեղ ընկած սպիտակ թերթիկներ, սև-սև զլխարկներ  
և իրենք, ձիավոր կողակներն ու գորողովոյներ՝ սյունե-  
րի պես բած: Բաղակի զլխարկն ել ննաց այդ որը  
ձիերի վոտքերի տակ: Բայց նրա փոխարեն նա ստա-  
ցավ մտրակի մի քանի այնպիսի թափանցող հար-  
գածներ, վորոնք յերթեք չջնջեցին այնուհետև Բա-  
դալի մատաղ հիշողությունից:

— Այդ մտրակները, — ասում եր նա, արդեն շատ  
հետո, — իմ ամենալավ ուսուցիչներս յեղան, վոր յերդ-  
վեցրին ինձ՝ անհաշտ թշնամի մնալ բոլոր բանություն-  
ներին:

## V

Բաղալի զլխարկի պատմությունը գաղտնիք չը-  
մաց իազեյինի համար ու մի որ նրանք խոսեցին  
յերես-յերես:

Մի կիրակի որ ել տանից շուտ ծլկվեց Բաղալը։  
Ինչ վոր անհամբերություն եր նկատվում նրա շար-  
ժումների մեջ։ Գնաց ու կես որին ել վերադարձավ  
սովորականից ուշ, այլայլված ու գլխարաց։

— Բաղալ, ինչի՞ ուշացար։  
— Եղ ինչի՞ յես սփրթնած...

— Դդակդ ուր ա, Բաղալ...

Բաղալը միայն վերջին հարցին պատասխանեց։

— Կարմունջովն անց կենալիս, քամին գլխիցս  
տարավ, Քուռը դցեց։

— Կարմունջովնը քո գլուխդ ծեծողն հիվ եր, վոր  
գդակդ ել քամին տանի, Քուռը դցի, — վրա պրծան ա-  
մեն կողմից։

Հետևյալ որը քաղաքի զանազան մասերում, զա-  
նազան ձևերով եյին պատմում կիրակի որվա «րուն-  
տի» մասին։ Ասում եյին, վոր ցաւցարարները հան-  
կարծ մի դադաղով միացել են ինչ վոր բազմամարդ  
հռւղարկավորության ու, յերբ հասել են քաղաքի շու-  
կան՝ վորտեղ ամրոխը ստվարացել ե մի քանի անգամ,  
ընթացքը կանգ է առել հոգեհանգստի։ Ահա այդ ժա-  
մանակ բարձրանում են ամբոխի միջից հերթով ճա-  
ռախոսները։ Մեկ ել դադաղը բացվում ե ու հանվում  
կարմիր դրոշակները նրա միջից, և սկսվում — «կեց-  
ցե»..., «կորչի»... Թոռուցիկների դաստանները դուրս  
են գալիս դադաղից ու փոփովով ցըվում են հազա-  
րանոց ամբոխի գլխին։ Ամեն մեկը մեքենայաբար հրե-  
լով կողքինին, ձեռքը մեկնում եր վերցնելու և խլխլում  
եյին իրարից։ Այս շփոթն ու իրաբանցումը տեսում է

այնքան ժամանակ, մինչև վոր կողակների ձիավոր  
խմբակները դանազան փողոցների բերաններով մտնում  
են եղ հրապարակը։

Խոնդած ամբոխը դեռ հրապարակից չեր քաշվել  
վոր ձիերի վոտնաձայնը և մտրակների շպղոցը իրա-  
բանցում և զցում մարդկային զանգվածի մեջ, վորի  
թանձր կենարոնից դեռ լսվում եր լի կոկորդներով՝  
«կորչի... կեցցե...»։

Խառնվում են հրացանի զարկերը։ Շփոթը մեծա-  
նում է. Ամբոխի միջից ել հատհատ ատրճանակի պա-  
տասխաններ են լինում, վորից հետո ծեծն ու խուճա-  
պըն ավելի յե ուժեղանում և ամբոխը, իջնող ալիք-  
ների նման, կամաց-կամաց հալվում և զանազան ուղ-  
ղությամբ։ Դատարկ հրապարակում ննում են՝ տեղ-  
տեղ ընկած սպիտակ թերթիկներ, սե-սե գլխարկներ և  
իրենք, ձիավոր կողակներն ու գորոդովոյներ՝ սյունե-  
րի պես բած։ Բաղալի գլխարկն ել նմաց այդ որը  
ձիերի վոտքերի տակ. բայց նրա փոխարեն նա ստա-  
ցավ մտրակի մի քանի այնպիսի թափանցող հար-  
վածներ, վորոնք յերբեք չչնչվեցին այնուհետև Բա-  
դալի մատաղ հիշողությունից։

— Այդ մտրակները, — ասում եր նա, արդեն շատ  
հետո, — իմ ամենալավ ուսուցիչներս յեղան, վոր յերդ-  
վեցրին ինձ՝ անհաշտ թշնամի մեալ բոլոր բռնություն-  
ներին։

## V

Բաղալի գլխարկի պատմությունը գաղտնիք չը-  
մաց խազեյինի համար ու մի որ նրանք խոսեցին  
յերես-յերես։



— Ասում են, անհաշիվ մարդիկ են բռնոտել...  
բանվորներին են բանոտում...

Ավելացնում եր այսպես ամեն մեկը իր զիտեցածը մի անհայտ աղբյուրից:

— Վոր հենց ա, Սահակի տղան ել կլի միջներումը:

— Սահակի տղան. ամոթ չի ըա նրա համար, վոր միջումը չըլի, — հեգնեց Զարչունց Համբոն, զյուղի առաջին հարուստն ու վաշխառուն:

— Աշխարհքի հանդարտ վախտը Սահակի տղան միջումն ա ըլում, բա հիմա միջումը չըլի, զնացեծ աչքալուս տփեք հորը, — ուժ տվալ համբոյի խոսքին նրա նման մի ուրիշը — Մարդակերանց Ասլանը:

— Յավաշ, կարելի չի իմանանք, ինչ պրիմինի յեն բռնոտել յա զակոնը պալազյեցցա անում բոմբ գցելուն — մեջ մտավ Զաղացպանանց Սալդաթը, վոր որենսգետ ու ոռուագետ եր համարվում:

— Են պրիչիննին են բռնոտում, ու աչքներն ել հանում են, վոր Գողողանց Սահակի տղան ու իրա նմանները իմպերատոր թագավորին ուզում են թախտից վեր բերեն, թափաղներին մողլա անեն, աշխարքս հավասարություն գցեն... բորբոքված պատասխանեց դարձյալ Համբոն:

— Վո՞նց հավասարություն գցեն յանի, — հարցրեց անվատահ, պատառուած շինելի տակ կծկված Ղուկասը, վորին աղքատության պատճառով՝ Ղոթուր Ղուկաս ելին տառւ գեղումը:

— Վո՞նց ել անգամը ձենի յա համա... մի նրան տեսեք, նրան: Նհենց հավասարացնեն, Ղոթուր Ղուկաս, վոր ել հարուստ ու աղքատ չըլի. ինչքան յես ունենամ, ենքան ել դու ունենաս — լավ չի ըլի:

— Բա վիս կլի. դե ենա, ասա աղքատի մասին են մտածում ելի, մեր սրտի միջիցը խոսում: Բա վիս կլի, Զաքար, Առաքել, վոր մի տեսակ ապրենք բոլորս, որչով, ելով, խալլսով...

— Վո՞նց մի տեսակ, — վրդովված բղավեց համբոն, խոսքերը ծոմուելով, — յանի թե իմ յերկու լուծյեզս տան Ղոթուրին, յերեք կովս՝ Սալախանա Մուշչին, մի լուծ գոմեշա՝ սոված Ուհանին, Աթոյին... հողերիցս ել Ստեփանին, Խեչոյին, Կարոյին, յես ինչ գիտամ, եղ պատի տակ շարվածներին ելի, եղակն մի... դիտամ:

— Հա, ինչ ա վոր, — հանգիստ պատասխանեց՝ Նալբանդանց Ավանը. — Ղուկասը աղքատ ա, Ղոթուր Նալբանդանց Ավանը. — Ղուկասը աղքատ ա, Ղոթուր Նալբանդանց Ավանը.

— Ինչի չի սազիլ, մթամ քեզ սազիլ չի, վոր իմ հողերիցս մի տասը գեսատին կտրեն, քեզ տան:

— Ինչ ա վոր, ինձ հավասում չես, Համբո. թե դու ինձանից ավելի շատ ես աշխատում: կամ թե քո հերը իմ հորիցը լավ մարդ եր:

— Բա վո՞նց չես աշխատում, Նալբանդի թոռը, չի ըլի, իմանանք, ես տարի դու քանի որավար ես սերմել, յես՝ քանիսը: 35 որավար ցորեն եմ սերմել 15 որավար՝ գարի, դու 2 որավար ունես — ցանած:

— Քեզ ինչի յա եղքան որավար հող ըլում, վոր սերմեն ու մեզ ել անտաղ անես: Ինձ տուր մին եղ հոգերը, Ստեփանին, Ղուկասին ու դու զրադիցը թագերը, թե վո՞նց ենք վարում ու ցանում:

— Զե, չե, Ավան, եղ մի ասիլ, մին հարցրու Զարչունց Համբոյին, թե, եղ վոր որավարների հաշվը զիտաս, 15-ի ու 35-ի անումն ես տալիս, քանի որ ես

մաճ բռնել գութանի յետելից, յա քանի՞ գիշեր՝ յեզը  
պահել հանդի. ելի մեր մեջքովը չի վարվել:

— Տն, հարամզաղա, — վրա պրծավ ու զայրույ-  
թից վեր թռավ համբոն, — դուք ինչացու յեք բա, վոր  
յես յեզը գնամ, յա մաճ բռնեմ. վոր վոտքս ձկած,  
մութաքին կռնած, վարվում ա տափերս, յես ինչի՞ յեմ  
մաճ բռնում: Կարում Ե՞ք, դուք ել եղպես, արեք, թե  
չե, ձեններդ ձեղ քաշեցեք: Աշխարքս դոչաղ տղի  
տեղ ա:

— Բերանդ շաղ մի տալ Զարչունց Ղազարի տղա,  
հարամզաղի ձեն ա դալիս: Եղ դոչաղություն չի, վոր  
դուք կարում եք անեք, մենք՝ չե. եղ գելություն ու  
դաղանություն ա, վոր ում ճանկն ա ընկնում՝ նա յել  
կուլ ա տալիս: Բա, բոմք գցելը գննց անի սրան, գե,  
ենա բռմբը ձեղպեսների համար ա, ելի...

Եստեղ ավելի բարձրացրին ձենները. յերկուսին  
ել կրղմակիցներ դուրս յեկան. զրույցը դառավ՝ աղ-  
մուկ, կոփի, հայնոյանք: Հայնոյանքի մեջ լսվում եր և  
Սահակի ու Բաղդալի անուններն ել. գուցե զուառվ  
բանը դադանակների ել հասներ, բայց համբոն ու  
Ասլանը դգացին իրանց դիմացիների ույժն, ու զայ-  
րույթը ու քաշվեցին հաթեթա տալով կորան մթնի  
մեջ:

— ... եղ ա պաս պահեցեք, վոր Գղողանց Սա-  
հակի տղան ու նրա նմանները մի որ կխլեն մեր հո-  
ղերը ձեղ տան, դուք ել՝ կվարեք, կսերմեք...

— Զե, դուք հանգիստ կացեք, վոր միշա ուրիշ-  
ները կաշխատեն ու դուք ել կուտեք, պողներդ լվըս-  
ուեք: Լավ իմացեք, վոր մի որ ել ձեղպեսների ատամ-  
ները կջարդեն ու ես ճղորտված շինելներում կոլոված

աղաներին կճանաչեք, կճանաչեք, Զարչի Ղազարի  
տղա...

Սրանից հետո բավական ժամանակ անցավ: Բա-  
ղալից ել խաբար չկար. գեղումն ասում եյին՝ նրան  
Սիրիր են տարել կորցրել: Քաղաքի «խառնակություն-  
ներն» ել վերջացել եյին ու գեղերումը դեռ բարձր եյին  
խոսում ու հայնոյում Զարչունց համբոն ու իր նմանները:  
Բայց յերբ սկսվեց մեծ կռիվը, նրանից հետո յել Ռու-  
սաստանի Մեծ Հեղափոխությունը՝ են ժամանակ ելի  
լսվեց Բաղալի անունը: Լրագրներում շուտ-շուտ եր  
գրվում նրա մասին. ու յերբ ենտեղի հեղափոխու-  
թյունը կարմիր Բանակի հետ յեկավ մեզ մոտ՝ բոլորն  
իմացան, վոր առաջվա, գեղացի փոքրիկ Բաղալն ել  
վերադարձել եր եղ քաղաքը, վորպես մեծ մարդ՝ հա-  
սարակական գործիչ:

Գեղումն ել իմացան Բաղալի գալու մասին: Հի-  
մա յել հավաքվում եյին զրույցի, ու ավելի աշխաւյժ  
խոսում Բաղալի վրա, ավելի բարձր...

Գեղը փոխվել եր հիմա. առաջվա գեղի տերերը  
տափին եյին ծծլել, կորել: Հիմա յերեսում եյին նրանք՝  
վորոնք առաջ վախենում եյին ձայն հանել:

— Ո՞ւր ա հիմա Զարչունց Ղազարի տղան, են  
վոր ըստիւը եսքան բաց եր անում, — ասում եր Ղու-  
կասը, կռները յետ տանելով:

— Ո՞ւր ա Մարդակերանց Ասլանը, վոր մեզա-  
նից դոչաղ եր:

— Ո՞ւր են, են 35 ու 50 որավար վարողնե-  
րը, — ասում եր Ուհանը ու քահ-քահ ծիծաղում. Թող  
գան հիմա տեսնեն, թե ով ա վարող տղան:

— Ո՞ւր են ուղաբերը փալմանով կուլ ավողները,  
վոր մեզ ել զեղն ել ուսում եյին քյոխվաների ու  
պրիստամների հետ...

Մոսում եյին եսպես հաճախ, իբար հիշեցնում  
անցած որերից, առաջվա Դոթուր Դուկասը, Սոված  
Ուհանն ու մյուսները, յերբ խոսք եր վեր գալիս Բա-  
դալի վրա, կամ յերբ ժողովի ժամանակ աչքներովն եր  
ընկնում նրա պատկերը, վորպես այդ գյուղի շեֆի,  
վոր կախված եր բարձր ու զարդարում եր գյուղխոր-  
հրդի համեստ սենյակը:

## ԽՐՃԻՇ ՈՒՄ

Զմեռվա իրիկուն եր Բուխարու մեջ աղմուկոի  
վովում ու ճարճատում եր թեժ կրակը—ասես թե  
թոնիր եր վառվում: Բոցը վոստոստում եր ու վազում  
փայտերն ի վեր, նրա հետ ել խրճթի ներսը—թարե-  
քին, պատերին, սյուներին վոստոստում եյին ստվեր-  
ները վեր ու վար... Այդ մեծ լույսի տակ լուսավոր  
վել եր խրճթը ու մոռացվել մըսու ճրագի լույսը, վո-  
րի ստվերը յերերում եր կողքի պատին...

Բուխարու առաջ, յերեսները դեպի կրակը, իբար  
կողքի նստած են մի մի կոճղի վրա հայր ու վորդի—  
Աղալոն ու փոքրիկ Սումբաթը:

Յերկուսն ել լուրջ ու խոհուն, զբաղված են միե-  
նույն զործով. Սումբաթը քիչ առաջ ապրանքն եր  
հանդից բերել, տեղափորել ու հիմա յեր նրա աղատ  
ժամանակը, իսկ Աղալոն՝ նոր եր վերադարձել գրագի-  
տության դպրոցից: Յերկուսն ել եզսի որվա դասերն  
եյին սերտում:

Յեթե մեկը լիներ, վոր նայեր գրանց յերկուսի  
դեմքին՝ կնկատեր, վոր Սումբաթի համար հաճույք եր  
այդ աշխատանքը. նրա դեմքին ժպիտը խաղում եր ու  
մեկ մեկ ել հապարտությամբ նայում եր հոր ու մոր  
կողմը, վոր տեսնի, թե նրանք լսեմ են իրան, վոր  
ինքն ենպես վարժ կարդում ե, թե չե: Են ինչ Աղա-

լո՞ն եր՝ յերեսում եր, վոր դժար տեղն ե. զեմքի կընճիռներն անվերջ մոտենում ու հեռանում եյին իշարից, խոսքերն ել ասելու ժամանակ՝ ավելի յեր կռանում դեպի գիրքը ու յետ քաշվում, բայց հնչյունները դժվար եյին դուրս գալիս ներսից:

... «Փշրել ենք կապանքը գարավոր  
Ու տեր ենք մեր ազատ նոր կյանքին»...

Կարդում եր վարժ ու բարձր ձայնով Սումբաթը:  
— ... «Ու, ու, ուրեւ... յերկարացնում եր Աղալոն, բայց դրանից հետո չեր կարում վրա բերի, հիշի, թե են յերկու մատնանի ցցված գիրն ինչ ե. իսկ եղ ընթացքում Սումբաթն ասես ձիավոր լիներ, յետեից քշած գալիս, իրան տալիս անց եր կենում.

... «Մեր շարքերն են դիմում ամեն որ՝  
Հաղարներ չորս կողմից աշխարհից»:

Թեև չեր նախանձում Աղալոն, վոր իրա Սումբաթը եղպես լավ ե կարդում, բայց ելի մի անհարմարություն եր զգում իրան մեջ, վոր յետ եր մնում ինքը ու, առանց մյուս տառերը ջոկելու՝ մատը արագությամբ շարժում եր ինքնաբերաբար են սկսած առղի ամբողջ յերկարությամբ, վորի բովանդակությունը միան եր մնացել.

... «ու-սումբը ուժ ե, ու-սումբ ուժ ե»:

Այդ միջոցին նորից լսվում եր նրա կողքից Սումբաթի համարձակ ձայնը.

... «Կքանդենք մենք հինը, վոր շինենք

Նոր աշխարհ, նոր ուժով միասին»...

Աղալոն յետ եր դառնում եղ նույն տողի սկիզբը ու նորից կոխ բռնում «ու»-ի հետ.

— «ու, ու, ուրեւ...

... «Ու եղ նոր աշխարհին կտիրենք—  
Քաղաքում բանվորը, զյուղերում  
գյուղացին»..

Վերջացնում եր Սումբաթը:

— Սումբաթ ջան, ես ասոն ինչ կասվի, մտիցս  
ընկափ:

— Վերը, ապի.—մոտենում ե Սմբաթը ու մի կերպ տեղահան անկերով հոր սեղմված մատը, վորի տակ կորել եր ամբողջ բառը ու միանգամից կարդում.

— Ես, ապի, ուստումը ուժ ե»:

Աղա, —ծիծաղում եր Աղալոն, —եղ հո, յես ել գիտեմ, վոր բոլորն իրար հետ կասվի «ուստումն ուժ ե».. դու ես ասա, այ, ես յերկու «ու»-ի արանքինը, ես ե».. վոր հենց ե կոթը կոտրած յեղան ըլի, մատները ցցած,

— Հա, եղ «ս» ա, ապի.

— Վուրեմն «ո՛ւ-սը՛-ո՛ւ».. բա ես շերեփի նըման կոթը կեռն ինչ ա.

— Եղ ել «մ» ա, «ուստում».

— Հա, հմի գլխի ընկա. «ո՛ւ-սը՛-ո՛ւ-մը՛», ուսումն. ես ել, «ո՛ւ»... բա ես մինը, վոր խողի պոչի պես յետ ա ծալված:

— Եղ ծալված «ժ» ա.

— ... «Ու-ժը՛ ե, ուժ ե» վերջացրեց Աղալոն:

— Հա, եղպես ե, ապի, ուստումը ուժ ե:

Նորից ամեն մեկը բռնեց իր տեղը ու ամեն մեկը խորասուղից իր աշխատանքի մեջ—մինը հետ ու արագ, մյուսը՝ ծանր ու բարակ, բայց համառ կամքով:

Բուխարու կրտել առաջիկա նման թեժ եր, վորի միապաղաղ վովոոցը սղոցվում եր Աղալոյի կոկորդային հնչունների յերկարացումով—«ու-ու-ու»...

— Հերիք ա, Սումբաթ ջան, վեր, տեղի մտի,  
մնացածն ել եգուց կկարդաս:

Այ մարդ, դու ել պառկի, մի քիչ աչքդ կպցըրու,  
վոր, ալիր չունենք, ես ա տքլարը կանչի՝ ջաղաց պիտի  
գնվա,—խոսեց Նաթելը, Աղալոյի կինը, վոր կամ  
փետ եր ավելացնում բուխարու կրակին, կամ մենակ  
մոլորված ննջում եր առանց զրուցակցի—որվա հոգ-  
նածությունից—կողքի պատին հենված:

— Եսիկարմատի աղջիկ, մինն ասի, թե դու ին-  
չի յես քունդ կորցնում, տեղդ մտի, քնի, ելի. քու  
դասդ ել հո չի՞ մնացել...

— Հա, դե վոր դու դաս ես առնում, ենա ինձ  
ել ա բոլ քեզ եր, ելի,—պատասխանեց Նաթելը, մար-  
դու նկատողությունից անբավական:

— Դե, ես ա, կտենաս դու, ա կնիկ, թե մի  
տասն որից հետո ջրի պես կարդալու չեմ քո ջգու:

— Ի՞ն, ա մարդ, երնակ ձեր վարժապետին, վոր  
քեզ նմանների համար զլուխ ունի. դու նոր եղ հա-  
սակումը գիր պտես սովորի, վոր բանի պետք դմ:

— Ինչի՞ յես ասում, ա կնիկ, ոխնվի սրա կա-  
ռավարությունն ել ըսհենց ժամանակն ել. աշխարքս  
տենում չես, վոր լուսավորվել ա, մեզ ել են ուզում  
լուսավորեցնեն: Նշանած տարիս, աշունքը, տեր Ապ-  
րըհամին ասի՝ ինչ տամ, տերտեր, մի ձեռք քաշիլ սո-  
վորացնես իմ անումը. թե՛ մի որավար սերմած ցել:  
Վոչ կարացի ցելց տամ, վոչ ել թե՛ սովորեցի: Հիմի  
հո փողերը վեր չենք համբարում. ասում են գործից  
պարապ վախտը յեկեք ձեզ համար գիր սովորեցեք,  
վոր կարդաք, աշխարհքի լավն ու վատը իմանաք:  
Հենց ես իմանում, թե դու չպտես սովորի, Նաթել: Են

առաջ եր, վոր ասում ին՝ դիրն ու ուսումը մեզ համար  
չի. մին հիմա ել հարցըրու մեր վարժապետին, տես  
ինչեր ա ասում: Ասումա ա, հրամայված ա, վոր եր՝  
կու տարուց հետո, ել անդիր մարդ չպիտի ըլի և  
սաղ մեր Ծուսեթա աշխարքումը, բաս... Մհենց չի-  
Սումբաթ ջան:

— Հա, ապի, Լենինն ա ասել, վոր մինչե 1927  
թիվը բոլորը պետք ա գրագետ դառնան:

— Իմացար, Նաթել:

— Իմացա, ամմա, հրետ, դրա ժամանակն ա,  
թող դա կարդա, վոր դեպի լուսն ա գնում: Զանին  
մատաղ, տեսնում ես, վհնց ա զամշի տալիս, ասես  
քոհլան ձի ըլի տակին, գալիս առաջդ ընկնում, քեզ  
թողնում յետկիցը լընվլընգալիս: Դու նոր եղ հասա-  
կումը «այր, բն» ես սովորում, ինչ անես. սովորող  
եյիր, դրա չափ վախտը կսովորեյիր:

— Սրա չափ վախտը՝, հը, հը... քմծիծաղեց  
Աղալոն. են վախտը գնա, վհչ յետ գա:

— Ապի, ըղորդ, ինչի՞ պուճուր վախտդ չես սո-  
վորել վոր հեղա, ըլեր:

— Բայա ջան, դու մի գեռ արի շանց տու ես,  
դասս սովորիմ՝ հետո կպատմեմ եղ մասին: Ես ել սրա-  
նից չի, Սումբաթ ջան:

— Հա, ապի, ել են տառերն են «ու-սում ու-  
նես, ուժ ունես»:

— «Ուսում ունես, ուժ ունես»—ինքն ել կրկնեց  
տղի յետեից, մատը տանելով տողի յերկարությամբ:

— Տեսնում ես, Նաթել, թեքից զլուխը Աղալոն  
դեպի կինը. ասում ա ըուսում ունես, ուժ ունես»: Բա

սուտ ա ասում է. յես մինչև որս ինչի՞ յի պետք, յա  
անուսում մարդը, յա՛ անասունքը...

— Հմի, ետ ա դու ուսումնական դառար—նկա-  
տեց նաթելը. Նրանց հայացքները իրար հանդիպեց ու  
յերկուսն ել ծիծաղեցին:

— Բա չդառա... Միտդ ա հո, նաթել, կափ-  
ուսնց Ոսեփի բարաթը, վոր 20 մանեթը 20 թուման  
եր դառել թղթի միջին. աչքից արտասունքը թու ա-  
նելով, խեղճի յեզներն ու կովերը խլեց, ծախել տվակ  
մօվրով Արշակը որը ցերեկով. սադ գեղը զիտեր, վոր  
նհախ տեղն ա, նա նրան պարտ չեր, ամմա գե վոր  
նրա տեղը ձեռք քաշած ե՞ր... Դե, հմի սհենց ասենք,  
վոր Ոսեփը մի ձեռք քաշել իմանար, մովրով Արշակն  
ել, հարյուր ենտեսակ մովրով ըլեր, կարմը Ոսեփից  
մի մաղ տաներ նհախ: Հիմի քեղ եմ հարցնում, նա-  
թել, կարմ մինը ինձ վրա մի սուտ բարաթ սարքի,  
թե մի կապեկ պարտ ես, վոր իմ ձեռքը չըլի միջին:

— Դե, հալրաթ վոր գիրը լավ բան ա, բա նոր  
ես գիդում, ա մարդ...

Քիչ հետո ընթերցանությունը նորից իր ճամբան  
ընկավ: Նաթելը նորից սկսեց մենակությունից նըս-  
տած տեղը որորվել անջալ: Սումբաթն իր վոտանա-  
վորն եր անդիր անում, իսկ Աղալոն հաղթել եր են  
մի քանի տառերին ու վարժ կրկնում եր յերկու տո-  
ղը: Նա շարունակ ոգնության եր կանչում Սումբա-  
թին ու ամեն մի նոր տառի ընտելանալիս՝ վոնց վոր  
թե թշնամուց մի նոր դիրք ել խլում. զվարթացա ծ  
են հասակավոր մարդը, հազարով, կոկորդը մաքրելով  
բեղերը շփելով կարդում եր, յետ դառնում, նորից  
կարդում, նորից ասում.

— Ես ի՞նչ ա, Սումբաթ ջան, ես դամշու նմանը:  
— Ե՞՞ «լ» ա, ապի:

— Լավ, թող «լը» ըլի, վուրեմն, ես ել կլի «ու-  
սը-ու-մը-ը լըու-սը ե, ուսումը լուս ե»: Այ բերանդ  
ապրի քու, ասող. այ թե ասել ա համ, բաս լուս չի...  
Մերդ տնազ ա անում, Սումբաթ ջան, ասում ա, վոր  
սովորող ի, ինչի՞ քեզ չափ վախտը չի սովորում: Իմ  
քեզ չափ վախտը բա, ժամանակը հս տեսակ ժամա-  
նակ ի՞ր: Դու ետ ա տասնըյերեք տարեկան ես հո, քե-  
զանից ել մի տարով փառը կլեյի գեռ, վոր հերս ել  
մեռավ, մնացի յիթիմ: Անտոն հորողբերս պտեր ինձ  
շկոլ տար. նա իրան մոտ ել չպահեց. «կենում ա, ի՞նչ  
անի, ասում եր, երկու որավար հող ունենք երկու  
աղբորով. մեծանա, մինն ել սա պտի անի ձեռից»,  
թող գնա, մի տեղ իրա համար տպբուստ գտնի, հե-  
ռուսանա ես գեղիցը». ու տարավ նոքար տվակ ինձ:  
Յեկ ել դրուստ վոր, մենք են վախտը երկու որավար  
հող անշաղ ունեյինք—մինը կոլոր տափն եր, մինն  
ել Զորի են զոլինք—մնացածը նոր տվին թափադների  
հողերիցը: Մի քանի տարի սրա նրա մոտ կենալուց  
հետո՝ ընկա վասիլ աղի մոտ: Վասիլ աղի տունը, են  
տունն ա յե, Սումբաթ, վոր հմի մեծ շկոլ ա, իրա բա-  
ղերովը, կովի զավորովը:

— Հա, լսում եր ուշագիր Սումբաթը:

— Վասիլ աղան ել, գե են վախտը մի Վասիլ  
աղա յեր, թրի առաջն ել եր կտրում, քամակն ել. նը-  
րանից առաջ մարդ չկար սահմանումը: Իրեք տղա-  
ուներ, իրեքն ել կարդում ին: Զմեռը գնում ին քա-  
րդաք իրանց գործին, ամառը դալիս ըստեղ, դաչ: Պու-  
դուր աղի անումը Մերու եր, իմ հասակին, իրար հետ

ել լավ ինք: Մի անդամ խնդրեցի, ասեցի, ի՞նչ կլի,  
վոր ինձ համար մի թղթի վրա գրես «այբ, բինը»,  
սովորեմ: Ասեց, լավ կլի: Մի որ ել հետը բալկոնովն  
անցկենալիս, ձեռքիս թուղթը հերը տեսավ.

— Աղա, եղ ի՞նչ ա, ասավ, Աղալո:

— «Այբ, բին», ասի, աղա, ուզում եմ Սերոժիցը  
սովորեմ:

— Վճնց թե, ասավ, աչքերին հուպ տալով: Տն.  
հարամզագա, ասավ, հալա ես մին, վոր նա քեզ հա-  
լմար Սերոժ չի—Սերյոժ աղա յա. մին ել, վոր՝ յես  
քեզ ինչի՞ համար եմ ըերել... Զեռքիցս առավ թուղթը՝  
վոտները տափը թակեց տղի վրա, թե՝

— Սերյոժա, ինչի՞ յես խարար անում, երես  
տալիս, ես շան լսկոտին...

Հետո մոտենալով ինձ, անզանիցս բռնեց, քա-  
շեց, մոտեցրեց բալկոնի մուհաջարին ու մատը մեկնեց  
դեպի ներքի.

— Են ի՞նչ ա, ասավ, Աղալո:

— Գոմեշ ա, ասի, աղա, թելուն:

— Են ի՞նչ ա, ասավ:

— Են ել, ինձոքը, յեզը:

— Ե՞ն:

— Են ել եշն ա:

— Գոմեշն ինչի՞ համար ա:

— Սելի գլխին լծում ենք, խուրձ բերում, աղա,  
ասի:

— Յեզը վորտեղ են լծում:

— Հորիքումն, ասի:

— Լավ, են հեյվանը:

— Նըան ել կժերը վրան են գցում, աանում,  
ջուր բերումլ

— Են չարդախի տակի կապածն ել հո գիտես,  
վոր Վասիլ աղի ձին ա, ուրիշը չի նստում:

— Դիտամ, ասի:

— Դե վոր գիտաս, լավ միտդ պահի, այ վորդի,  
ասաց. պուճուր ես, նրա համար եմ սհենց խոսում  
հետդ, թե չե ուրիշ տեսակ կխոսեին: Տեսնեմ ես, վոր  
նրանք բոլորը անասուններ են, ամմա նրանցից ա-  
մեն մինը իրա տեղն ու պատիվն ունի. վոչ եշը կը-  
լծինք, վոչ թե գոմեշը բարձենք. գարին քոնկան ձիուն  
հնք տուիս ու կտպում չարդախի շվաքումը, ճիպոտը  
ենք վրա կոտրատում ենք, թե վոր դունչը մեկնի դե-  
պի խոտի դեզը, Մարդիկն ել եղ հեյվանների որինա-  
կին են—տեսակ, տեսակ. այ, դու են եշն ես, քալա  
ջան, մեր Սերյոժը՝ են ձին. նրա ախոռը ջոկ ա, քոնը  
ջոկ. նա պետք ա ժամանակով ինձ նման Սերյոժ աղա  
դառնա, Սերգեյ Վասիլիչ. ափիցեր, պրիստավ, յա-  
նաչալնիկ ըլի, են ինչ ա դու՝ մին մուժիկ, մին գյա-  
ղա, նոքար մնաս: Համկացար. դե դնա, ասաց, ես ել  
նրա համար եմ եսպես անում, վոր սիրում եմ քեզ,  
ուզում եմ խրապս միտդ պահես, տեղդ ճանաչես,  
մարդ դառնաս ու շնորհակալ ըլես Վասիլ աղիցը: Ա-  
սաց, Մումբաթ ջան, ու ենպես հլորեց անզանս, շը-  
պրտեց սանդուղքներովը, վոր ասի, անզանս են անի-  
րավի ձեռքին մնաց:

Իմացար հիմի, թե ինչի պուճուր վախտս գիր  
չկարացի սովորեմ: Սիրան վառիցեց. ախ քաշեցի իմ  
մեջ ասի, ենքան մի չմեռնեմ, վոր սրտիս մուռը հա-  
նեմ Վասիլ աղիցը:

Սումբաթը ուշադրությամբ լսում եր հոր պատմությունը, հուղված՝ հորը հասած վիրտվորանքի համար:

— Հետո, ապի, բա դու վոչինչ չարի՛ նրան: հետո:

— Արի, վոնց չարի: Նրանից հետովը են եր, վոր զրանից մի քանի տարի անց, սրանից դուզ 20 տարի առաջ, մեծ խառնակություն ընկավ. խարարը յեկավ, թե քաղցրումը բունտ ա, բոմբեր են զցում զազախների, ափիցերների վրա, թե Մոսկովում մեծ կոփկ կա բանվորների ու սալդաթների մեջ. թագուն մարդիկ յեկան, թե հեղափոխություն ա, իրավունքը ժողովրդի ձեռքին պտի ըլի, թե ել թագաղ չպտի ըլի, կոտորեցեք նրանց, իւլցեք նրանց հողերը, բաժանեցեք ձեր մեջ ու դուք վարեցեք: Յես են վախտը 25 տարեկան ի. մի քանի տղա վեր կալա, առաջ ընկա դեպի վասիլ աղի տունը, Բայց Վասիլ աղան շան պես իմացել եր ու վախել քաղաք, ձեռներս չընկավ: Որերը վոր տաքացան գութաները լծեցինք ու մտանք, ամենքս մի կողմովը, Նրա հողերը, վարեցինք (ես հողերն են և, Սումբաթ ջան, վոր հիմի բաժանել են մեզ վրա): Բայց թե արանքովը շատ ժամանակ չանցավ, քաղքիցը դաշախ բան բերել տվակ մեր գեղի վրա զեկուցիա տվակ մի քանի հոգուս ել բոնոտել տվակ, բերթն ցիա, մեզ մի քանի հոգուս ել բոնոտել տվակ, բերթն ածեց, մեր վարած հողերն ել ինքը սերմեց: Ես ժամանակը նրա ժամանակն եր, համ անում եր, համ պարծենում, ամմա վոր մեր ժամանակն եկավ յես իմ ուզածիս հասա: Ո՞ւզ ա հիմա Վասիլ աղան, իրա աղա լակոտներովը: Բոնոտեցին, ապրած պոպող փաղակուները, տարան բոլորին, մոխիները քամուն վախափորները, տարան բոլորին,

ավին, վոր անջաղ մեր խալիխն հանգստություն եկավ: Ե՞ն ինչ քու ժամանակը ա, տեսնում եմ, ինձ ել են շկոլ տանում, քառասունընհինդ տարեկան մարդուն գիր սովորացնում: իւացար, բալա ջան... Դե կարդա, ժամանակը ձերն ա:

Բուխարու կրակը վեր եր նստել շեղջ դառել: Հիմա Աղալոն ավելի յեր կունստ, մոտենում կրակին, վոր լավ տեսնիր. Սումբաթը անգիրը համարյագիտեր, գիրքը փակած փորձում եր մեկ-մեկ բանալով. իսկ նաթելը, վոր չեր լսում նրանց զրույցը, ամեն անգամ իր ննջից վեր թոչելիս՝ դիմում եր նրանց միշտ նույն խոսքերավ.

— Վեր կացեք, տնաշեն, տեղը մտեք, հրես աքւարը կկանչի...

Յերբ կրոկի լույսի տակ ել կարդալը անկարելի յեր՝ հեր ու աղա վեր կացան, տեղը մտան, դասները սերտած:

Խընիթում զարթուն մարդ չկար, վոր ականջ դներ, թե ինչպես լուսթյան միջ նաթելի միապաղադ խոմփոցի հետ լսում եր ընդհատ-ընդհատ մերթ Սումբաթյի թավ ձայնը՝ ...ու, ու..., լուս... ուսում... մերթ Սումբաթինը՝ ավելի պարզ, ավելի հնչյուն՝

«...Կքանգենք մենք հինը, վոր շինենք  
Նոր աշխարհ ։ ։ ։ ։ միասին...

..... աշխարհիքին կտիրենք,

Քաղաքում բանվորը, դյուղերում  
գյուղացին...»

Նրանք անուշ քնի մեջ եյին:

## ՅՈԹ ՏԱՐԻ ԱՆՑ

Վասոց վոր մի քար թռչի դեպի խիտ հավաքված  
ձնճղուկների կենտրոնը ու պայթեցնի նրանց ճառա-  
գայթաձև՝ այնպես պայթեց գյուղացիների կծիկը,  
յերբ անսպասելի ներս վազեց թամամանց կալը. մի  
կոկ, թեթևաշարժ ու փայլուն ավտո՛ գոռալով, բառա-  
չելով, ասես նախրից շիլ ընկած մի կով,

Ավտոն կալի մեջ շրջանածի թեքվեց ու դեռ  
կանգ չառած՝ վոտքի յելան նրա միջի յերեքը - մի  
կին ու յերկու տղամարդ — բոլորն ել իրար նման ջա-  
կել, առույգ, ասես մի մետաղից, մի գործարանում  
ձուլված, կեպիներն ու կաշվե բաճկոնները միակերպ  
փայլուն, ավտոյի նման:

Դուռը բացվեց ու չրխկոցով փակվեց թափով,  
վորի արանքում ցած թռան նրանք: Շոփերը քիչ հետո  
կանգնեցրեց ի հարկե, մեքենան, իսկ շաղ անցած  
ու անտառացած ամբոխի ծայրերը սկսեցին շարժվե  
դեպի նրանք:

— Բարով, Գրիգոր ապեր: Բարով, Մուխի գայի,  
սանհեր Պարսեղ... — համարյա վազելով առաջ անցակ  
յերեքից մեկը:

— Բարով, բարով...

— Այ բարով, հազար բարի՞ն...

Պատասխանում եյին քիչ շփոթված, քիչ գարմա-  
ցած նրա ձեռքն առնող գյուղացիները, անակնկալի  
յեկած չընանաշելուց:

— Հօր, վոնց եք... (ծխախոտը կպցնելով, ծի-  
ծաղկուտ...)

— Ես ով ա, վոր ըսհենց խոսում ա մեր լեզվո-  
վը, — հարցնում եյին իրար նրանց կողքին, և մին ել  
ասես թե վեր թռան միանդամից.

— Վայ, այ տղա, յես ել ասեմ ես ով ա...

— Բարով, Սիսակ ջան, բարով...

— Դե մին ել բարով...

— Բարով... բարով...

Առաջվա մեքենայորեն «բարով»-ի մեկնված ձեռ-  
քերի հերթը ավելի խտացավ ու Սիսակը, ժպիտը դեմ-  
քին, չեր իմանում իրար խանդարող ձեռքերից վորը  
ազմի:

— Ճանաչում չես, այ տղա, մեր Սանասանց  
Սիսակն ա, — հանդիմանում եյին իրար «մեր» բառը  
առանձնապես ընդգծելով: Սիսակի դեմքի ժպիտը հե-  
տոցինետե հոսում եր գեպի մյուսների յերեսները, և քիչ  
հետո՝ բոլորն ել նույն ախորժանքով, յեթե վոչ ավե-  
լի, ժալուն եյին միակերպ...

Գալիս եյին իրար յետսից շարան կապած՝ բըռ-  
նած դիրքերից ցած իջնելով, ու մեկնում եյին ձեռքները  
Սիսակին, մեկ-մեկ ել կողքին կանգնած ընկերներին:

Հանաք հո չեր. Սիսակին ճանաչում եյին բոլորը:  
Տարիներ առաջ անհետացել եր նա գյուղից մի դիպ-  
վածով. շատերը չփառեյին, թե ուր ե նա, և հիմա  
միանդամից, իրենց առաջին կանգնած, այդու դու-  
րեկան:

Սիսակը հազիվ եր հասցնում իրեն մոտեցողների «բարովներին» պատասխանելը, վոր մին ել աշխուժացան նրա աչքերը ու կենարոնացան մի կետի.

— Ակոր ամի՞ն, քեզ ել բարով...

Ու ճեղքելով արագ՝ իրեն շրջապատող բազմությունը՝ մոտեցավ նա մի սպիտակահեր, բայց առույգ չիրուխավորի:

— Այ հազար բարին քեզ, Սիսակ ջան. այ բարով ես եկել դռւ...

Ակոր ամու աչքերը պզպզացին յերկու առկայծող ձրագների պես, ու նա բերանի ծուխն ու չիրուխը թափելով՝ բռնեց Սիսակի ձեռքը և նրանք յերկար ու պինդ թոթվեցին իրար մտերմական, ժպտալով: Երդապատից ուշ գլխի ընկան շատերը, ու մասնակցեցին նրանց ակնարկին ծիծաղով:

— Հը, Ակոր ամի, փափախս ինչ արիր, փափախս... համմա թե ուշունց տվիր համա,..

— Վայ, յես քեզ մատաղ Սիսակ ջան, միտո ա, հալա: Բա տենում չես ինչ լավ տղա յա դառել...

— Միտո մ՛..., դառնալով ընկերողը, — ծանոթացիր, դրիշա, սա յա, ե, ինձ քաղաք ուղարկողը:

Դրիշան նույնպես ծանոթի մտերմական ժպտով սղմեց Ակոր ամու ձեռքը:

— Զկարացար բանել, ելի, Ակոր բիձա. թե մին կբռնեյիր:

Ակորը նորից ծիծաղեց, գլուխը տարուբերելով:

— Յանի թե Ակոր ամին քեզ ինչ պատեր անի, վոր բռներ, քե մատաղ. մեր բաղի փեշակն ա՝ քաղցելը, ում եմ ինչ արեւ վոր քեզ ինչ անեյի, ընչի փախար նրա խաթեր:

— Փիս արավ, վոր փախավ, — քիչ մնաց չորս կողմից մատները աչքը կոխեյին:

— Հա, ու հալբաթ վոր փիս չարավ...

Երջապատի գրույցն ու խոսակցությունը վարար գետի վշտոցի նման՝ յեկավ ծածկեց նրանց մտերիմ խոսքերը, և Ակոր ամին ել իր խոսքերի զես՝ հալվեց, միացավ բազմության գորշությանը:

Զրույցը, ի հարկե, հաճելի յեր Սիսակի համար նրանցից յուրաքանչյուրի հետ, սակայն նրանք գործով եյին յեկել այստեղ—ասելիք ու աննլիք ունեյին:

Բջիջն ու գյուղխորհուրդը գոտքի եյին: Աշխույժ կտրում եյին նրանք գյուղը ղանազան ուղղությամբ ու շտապ պատվերներ, հանձնարարութներ անում, հայտարարում այդ որվա հավաքութի մասին, յեկած հյուրերի մասին...

Քիչ անց, սկսեց գյուղը քամիկել բոլոր ծայրերից գեպի թամամանց կալը:

«Ես իմ տեսած գյուղն ե, բայց իմ տեսած գյուղացիները չեն» — մտածում եր Սիսակը:

Շուտով հավաքվածների ստվարությունը համոզեց, վոր տներութն այլիս մարդ չի մնացել:

Բացից ժողովը լայն կալի մեջ. որն ել ժպտուն եր նրանց նման: Խոսքը տվին քաղաքից յեկած ընկերներին, վոր տեսնեն, թե ինչ են ասելու, ինչի՞ն համար են յեկել. սրանք ել՝ առաջին հերթը Սիսակին ավին:

Յերբ վոր նա կանգնեց աեղը ու բարձրացավ իր առաջ ծով կապած գլուխներից՝ միկնույն միտքն անցավ յերկուսի մեջ ել՝ թե Սիսակի, վոր բոլորն իրանցավ յերկուսի մեջ ել՝ թե Սիսակի, վոր բոլորն իրան

հանաչում են, և թե բոլորի, վոր Սիսակն իրանց ճանաչում ե: Այս զգացումը ժայխա փռեց բոլորի դեմքին և լավի սպասում յերկուստեք:

— Ընկերներ, — զանգակի սպասվող տուաջին հընչունի պես ցնցեց նրանց լարված լսողությունը Սիսակի առաջին խօսքը, — մենք յեկել ենք այսոր քաղաքից, վոր ընկերական կապ հաստատենք եռ գյուղի և մեր գործարանի միջև: Մի հոգու յերկու ձեռները ջոկ-ջոկ ծափ չեն տալիս, նրանք պիտք ե միասին ինսեն, վոր բան դուրս գա...

— Ապրես..

— Այ խոսքը...

... Գյուղն ու քաղաքը մեր պետության յերկու ձեռներն են, — շարունակեց նա, և նրանք պետք ե իրաք հետ կապված լինեն՝ հաշտ, սիրով ու տմուր...

— Իրուստ ա:

— ... Գեղն իր ունեցածից քաղաքին և տալիս քաղաքը՝ գեղին...

— Զորանաս:

Ու ժպապ նրա առաջ փռված գլուխների հրապարակը, ասես թե Սիսակը ծիծաղ եր շաղ տալիս նրանց վրա:

— ... Այսոր գյուղի տոնն ե, «բերքատվության տոն» և մենք յեկել ենք շնորհավորելու ձեղ և ցանկանալու, վար ամեն տարի, ես որը բերքատվության նոր ու նոր նվաճումներ ցույց տաք...

— Բերանդ ապրի:

Ամբոխի քար լուսության միջից թռչող հատ-հատ բառները, ասես թե բուրկեն ու համեղ վարդեր ու խըն-

չորներ էլին նետվում գեղի Սիսակը՝ ավելի հստակ, ավելի դգացված դարձնում նրա խոսքերը:

— ... Իսկ այդ կանեք, կոլեկտիվներ կազմելով միայն, ձեր ուժն ու աշխատանքը իրար խռովնելով միայն: Մենք շնորհավորում ենք ձեզ, բայց այս շնորհավորելու հետ միաժամանակ, ուղում ենք ավելի առտիկ լինել ձեղ, ավելի հաստատ անել մեր կապը այս գյուղի հետ. սրա համար ել մեր գործարանը առաջարկում ե իր շեֆությունը...

Մը հակա կալ լիքը զլուխներ լսում եյին նրան բուռ ու բերանաբաց և զարմանում, թե եսքան խոսքն ու խելքը սա յի՞րք և վորտեղից սովորեց:

Շուշիկն ու Գրիշան ել եյին հավանում ու իրար ականջի գովում Սիսակի ճառը:

Իր ճառի ընթացքում, յերբ նրա հայացքը սրա կամ նրա ծանոթ դեմքին եր ընկնում՝ նրա զիսում մտապատկերներ եյին վեր կենում, ու քաշում իրենց յնտեկից շարաններ՝ անցած, գնացած որերից:

Ինչքան շուրջ անցան այն յոթը տարին, ու ինչ- քան շատ բաներ... նրա հայացքը սովոր թոշնի պես, ան զիսների, ծովում շուրջ գտնում եր Ակոր ա- մուն, նրա զեմքի դուրեկան ճերմակ շրջանակը, ժան- դուտած բեխերով, վոր Ակոր ամու կարմակոթ չերուխն եր արել: Նրա զիսի տափակած մորթու կտորը, վոր ավելի շուրջ ծառասունկի յեր նման, քան թե փափա- խի և ուղի զիսի գյուղում վորքան սրախոսություններ եր վերցրել — նույնպես դուրեկան եր Սիսակի աշքին այդ սարդու վրա: Նա հիշեց, վոր յոթը տարի տուած, յեր վերջին անգամ յետ նայեց ու թողեց հորիզոնի առհմանի տակ կորչող գյուղը, իր հասակակից ընկեր-

ներին, իր մանկության հիշողությունները՝ այն ժառանակ միայն մի բան եր տանում իր հետատելություն գեղի Ակոր ամին, և նրանից վրեժ առնելուց անկություն, յերբ վոր մեծանար:

Մի պատանի յեր այն ժամանակ Սիսակը, հաշվ ել չեր տալիս, թե ինչո՞ւ յե առում այդ մարդուն և ինչո՞վ եր մեղավոր նա: Սակայն մեղավոր եր Ակոր ամին այնքան, վոր Սիսակը, յերբ տանձը քաղելուց հետո, քեռված, լոք եր տալիս չափարից դուրս՝ անտեր դամբլի ճյուղը պոկեց գլխից իր փափախը ու նետեց գեղի այգու ներսը, վորտեղից մթնի մեջ խըշիցի վրա հայնոյում եր Ակորը...

Նա գիտեր, վոր Ակորի պատճառով թողնում է գյուղը, վոր իր ութ ամսվա զուլլուղի համար Զանթա Ղեանդից կոպեկ չեր ստանալու այլևս, քանի վոր տարին չթամամտծ եր հետանում...

Մազոտ ու փոշոտ գեմքերի բազմությունը, բարձրեց թվում եր Սիսակին, թե անմարմին զուխներ են, տեղավորված մի մեծ թարախում. թարախն ել՝ կալը:

Այդ զլուխներից ամեն մեկը զինված եր մի-մի զույգ աչքերով, վորոնք նայում եյին իրան. իսկ ինքը շարունակում եր իր ճառը:

... Ինչպես վոր մի ձեռքից մյուսն ենք տալիս, այնպես ել՝ գյուղն ու քաղաքն իրար...

Շեշտում եր նա իր ճառի մեջ գալիք նվաճում ների վրա թե գյուղում և թե քաղաքում, հում ու մշակած նյութերի արտադրանքի բարձրացման նշանակության վրա...

Իսկ ներքուստ լուս ու անշաղուկ հետեւում եր նա իր մեջ հոսող մտապատկերներին ու ստուգում մին-մին:

— Վանց արագ անցան,—մտածում եր նա,—եւ Հոյ յերեկ եր, կասես:

Զիերը հանդ աարավ կալից հետո: Այդ մի ոքը Զանթան հանդ ուղարկեց Սիսակին: Սա բացառիկ ոք եր ու յերջանկություն Սիսակի համար—նա կարող եր քննել ամբողջ գիշերը: Այսպես յերբ եր պատահում, վոր Սիսակը գիշերը գործադրի քննելու համար: Նա, սովորաբար, ամբողջ գիշերը կալում չարչարգելուց հետո, թերթերունքները գեռ իրար չտեսած՝ ուղերդվում եր լուսաբացին դեպի հանդ, ձիերը գտնելու, վոր կալը չուշանա:

Բայց հաճախ Ղեանդը բերանը բաց եր անում Սիսակի վրա, յեթե ուշացնում եր սա ձիերը—իսկ զյուղին հայտնի յեր նրա բերանը—և խոսքերի ուղղությամբ ձեռքերն ել եյին գործում, յեթե փոքր եր լինում նրանց իբրից բաժանող տարածությունը:

Վերջին կալն եր մյուս ոքը, և նրանից հետո պետք ե խոտի զնային—սա յեր պատճառը, վոր Ղեանդի վրա Սիսակին ազատեց կալից ու հանդ ուղարկեց:

— Զքնես՝ կորցնես. լուսը չբացած, ևսեղ կը լես, վոր հաշան անենք,—կարգադրեց Ղեանդը, յերբ Սիսակը մեկը հեծած, զուրս քշեց մյուսներին կալից:

Իրիկունը հանդի բոլոր ձիարածների որակարգում միենույն հարցն եր՝ «ում բաղի վրա գնան, վորտեղ ինչը կուտփի»:

Յեվ այս անգամ վիճակը կանգնեց Ղահրունց Ակորի տանձութիւնի վրա, գնացողների մեջ ել Սիսակի մասնակցությունը: Ամեն ինչ կարգին եր ու հաջող-Ակորն ել մեղավոր չեր մինի գուցե, յեթե պատի բե-

բանում բսած դամբլին չքաջեր Սիսակի փափախը կըլ-  
ից: Բերած տանձը, ի հարկե, ընկերները գովեցին  
ու կերան, բայց փափախի դարդը մինչև լուս կըծնց  
Սիսակին: Վճնց յերևար զյուղում եղար. կաշին կրո-  
կեյին կանցելարի դռանը:

Ընկերների տված խորհուրդներից և վհչ մեկը  
նրան հավանական չժիվաց, չհամոզեց... ու պառկեց  
նա, կասես, մի սև ոճ ծոցումը:

Գյուղում քանի եղալիսի փափախ կար, վոր նա  
հրաժարվեր իրանից: Բա տանը: Յեթե ասեր փոխել  
ե, չեյին ասի՞ ում հետ:

— Զե, տղեք ջան, ինձ համար պաս դառնավ  
գեղը: Ու առավոտյան, յերբ մյուսները զյուղ ելին  
քշում ձիերը՝ Սիսակը՝ Աւանդի ձիերը Ռնանի առաջն  
արավ, ինքը մի կարմիր թաշկինակ սղմեց զլիին ու  
ճամբան ծոեց: Ուր: Ինքն ել չգիտեր:

Գյուղից գուրս յեկող ճամբին խառնվելիս՝ պա-  
տահեց Աղաջան ապորը, եղն առաջին, բարձած:

— Բարի լուս, Աղաջան ապեր, տուաջ բարի:

— Թո՞ւ... քաղաք, — արանք տալով պատասխա-  
նեց Աղաջանը:

— Ինձ ել տանես, ի՞նչ կլի:

Թեք նայեց Աղաջանը՝ նրան:

— Վոր խելք ունենաս, կկենտս ես քանդփածումը  
մի որ, այ բալամ: Յեթիմ երեխա յես, սրա նրա դռա-  
նը. դնա քաղաք, վոր մի կտոր հացի տեր դառնաս ե-  
նը: Գախում ես Զանթա Դեանդի ապրանքը պահող  
չըլի:

— Գամ, տար, Աղաջան ապեր:

Աղաջանը մին ել նայեց Սիսակին հարցական.

— Յեկ, տանեմ, բալա ջան, վարձք ա. հերդ լավ  
մարդ եր, Վանեսը, հալալ աշխատավոր:

— Յեկա, ապեր:

Ու Աղաջանը վհչ թի միայն քաղաք հասցընց նրան,  
այլ և իրիկունը տարավ իր դոնաղատեղը՝ խարադ  
Ծառուրի առւն:

Ծառուրի տանն ել մնաց նա ենքան, վոր աշ-  
խատանքի տեսուչը մի պորտֆել կռան տակին, մտավ  
Ծառուրի արհեստանոցը:

— Ես տղան մեմ աշկերտն ա. քանի տարեկան  
ա, որական քանի ժամ ա աշխատում...

Աղդը, անունը, ելի ուրիշ շատ բաներ զրեց ու  
դնաց:

Մին ել յեկավ ու կարգադրեց, վոր նա պետք ե  
ռարոց գնա, ու աշխատանքի ժամերը պետք ե հար-  
մարվեն նրա հասակին ու դարրոցին:

Սիսակն այդ միջոցին մի մնատունի գերում երը  
վարի շուրջը յերկու հոգի առուտուր ելին անում և  
ինքը չեր հասկանում, թե վորն ե իր համար լավը՝  
ծախմիւլը, թե մնալը. հին տերը, թե նորը: Յեկ սպա-  
սում եր, վոր իրականությունը գար և իր պայման-  
ներով համոզեր ու պարզեր այդ անորոշը նրա համար:

Ասենք, գրանից հետո ել նա յերկար չնաց Ծա-  
ռուրի տանը, վոր շարունակ լսեր նրանց նախատին-  
քըն ու հանդիմանությունը՝ իրանից սկսած մինչև  
փոքր աղջիկը:

Շուտով նա լիկիայանում ծանոթացավ Գրիշի  
հետ ու դրանց աստղերը իրար բռնեցին:

Վճնց բանեցին, վոր առաջին իսկ որը կովեցին  
ու խեթ նայեցին իրար: Գրիշան՝ քաղաքի տղա յեր՝

ընկած, դուրս յեկած, համարձակ: Եղ համարձակությունն ել բղիում եր նրանից, վոր նա ուժեղ եր յերեակայում իրեն ու ըմբիշ:

Նրա բռունցքը միշտ պատրաստ եր, և նա չեր խնայում փորձել ամենի ու ամեն ինչի վրա: Յերբ նրա կողքին մարդ չկար՝ նա հարվածում եր սեղանին, աթոռին, ինչ վոր պատահեր—դա միենույն եր նրա համար:

Բայց մի որ ել խոփը քարին դեմ առավ: Անցնում եր նա Սիսակի մոտով և ուզեց իր ույժը նրան ել զգալ տա: Հրեց նրան, վոր տեղից հեռացնի:

— Խելոք կաց,—հանգիստ նկատեց Սիսակը:

— Թե չե ի՞նչ...

— Թե չե, շանց կտամ, վոր յեղը՝ մածնիցն եւ:

— Ու ու ում...—յերկարացրեց Գրիշան, աշքերը չոսած գլուխը թեքելով, հարու տվող աչառի նման, ու միաժամանակ վոլորելով Սիսակի ձեռքը, վոր զգալ տար իր ով լինելը:

Սիսակը հանդարտ գիրքը մի կողմ դրավ, լուս մի ձեռքով գիմադրելով իր վրա գործող ույժին՝ քարձարացավ տեղից, ու թե վճաց նա մյուս ձեռքը հասցրեց Գրիշի ծոծրակին ու վճաց չոքեց—այս աշքի չընկավ—բայց թե հանկարծակի թրմիոցը և Գրիշի մեկնվիւը հարդ հասակի վրա՝ ծիծաղի պայթյուն բարձրացրեց:

— Եղ ա քու Փրանցօւզակի բարբան, տո՞ւ:

— Բա խելքդ մեզ ա գնում...

— Կերպը դրան գեղըցի կատեն...

Վեր կացավ Գրիշան, վոնց վոր մի ծանր յերագից՝ աշքերը կարմրած, գեմքը գունատ, սփրթնած:

Ինկերների ծաղըն ել չլիներ, ելի Գրիշան գրանով բավականացովը չեր: Ռեանց պահանջեց նա հրամայական տոնով:

— Քանի՞ անդամ ես ուզում, — առաջգա հանդարտությամբ ընդունեց նրա հրավերը Սիսակը, ավելի խորացնելով պարտված հերոսի վիրավորանքն իր տոնով:

— Անգամը քեզ ցույց կտամ յես...

Ժպտաց Սիսակը: Ու այս անգամին չչոքեց նա, բայց ուրիշ ձեռով գետնին տվավ Գրիշին: Պարտությունն այնքան ակներեւ եր, վոր վոչ մի տարածայնություն չհարուցեց, բացի միայն ավելի կուտակեւ լուց Գրիշի մեջ յեռացող զայրությը:

— Ուզում ես, մին ել,—ինքն առաջարկեց Սիսակը:

— Անպատճառ, — հեալով պնդեց Գրիշան:

Յերբորդ անգամը թողեցին դասերի վերջը: Յեկասերի վերջը նույն հանդիսավորությամբ, նույն դասերի առաջ նորից նա մեկնեց Գրիշին, հանդիսակաների առաջ նորից նա մեկնեց Գրիշին, չափազանց զարմացնելով նրան յերբորդ անգամը: Սիսակին մեղաղքելու վոչ մի հանգամանք չեր նույն Սիսակին մեղաղքելու վոչ մի հանգամանք չեր նույն Սիսակը՝ համար, և այս եր պատճառը, զուցե, վոր կաշարիշի համար, և այս եր պատճառը, զուցե, վոր կաշարմացկամաց նրա տաելությունը գետի Սիսակը՝ փոխվեց մտերմության:

Նա թողնել ավավ Սիսակին խարազությունն իւ ծատուրի տունն ել:

Հաջողեցրեց, ու նա յել միենույն գործարանը մտավ, վորտեղ ինքն եր: Բնակարանի խնդիրն ավելի հեշտ լուծվեց և Գրիշի մայրը նույն սիրով ընդունեց իր Գրիշի ընկերոջը: Դժվար եր այնուհետև այնքան եր Գրիշի ընկերոջը:

սիրով ուրիշ ընկերների հանդիպել: Գրիշան Սիսակին իր հետ կոլեկտիվ ել տարավ: Զույգ պիտներները զույգ կոմյերիաներ դարձան հետո և լծված աշխատում եյին սինը մյուսից լավ—յերկուսն իրար հավասար: Գործարանի և թշիջի աչքի ընկնող ռկտիվիստներն եյին նրանք:

Հիմա՝ մին ծիծաղելի յեր թվում իրեն, Սիսակին, մին համացունք պատճտում, վոր այդպես հոսքին որերն ու պայմանները: Յոթը տարվա մի ծայրին կանգնած եր ծիծարած, յեթիմ Սիսակը, վոր փախավ գյուղից քաղաք, բազմության առաջ խայտառակ չծեծվելու համար. նույն յոթը տարվա մյուս ծայրին՝ բարձր տեղից ճառ և ասում նույն գյուղացիների առաջ ինքը, կոմյերիտ Սիսակը: Նրա աչքի առաջին և և Ակոր ամին, վորից ուզում եր վրեժ առնել մեծանալուց հետո: Բայց այսոր, ինքն ել չի իմաստում, թե հոգու ինչ զարմանալի որենքով՝ չի ասում նրան, այլ սիրում և բոլորից շատ, ինչպես վոր Գրիշան սիրեց իրեն ատելու փոխարեն: Նա իր ճառի ընթացքում կռիվս և տալիս անցած ու վերադարձող մտապատկերների հետ: Ակոր ամին ու իր չափ փախուր, նրա չափարից թուչելու բոպեն և այսորը, ասես ժամանակի վոչ մի տարածությամբ չեյին բաժանվում իրարից, այլ կողք-կողքի յեն, իրար մոտիկ: Բա լիկ կայմանը. Գրիշայի հետ բռնվիլը...

Յեվ հիմա նույն Գրիշան ել կողքին, յերկուսն ել հմուտ գրագետներ...

Ո՞հ, ում կյանքի միջից այդքան կետեր ու զուգաղիպություններ գալիս են, հագաքվում, ցուցադըրվում... Նրա չարաճճի մտքերը նորից հանգիստ չեն

մնում. Թոշկոտում են իր ճառի միջով ու քիչ և մնում շեղեն, սիալեցնեն Սիսակին... Նա հիմա գործարանի կողմից ներկայացուցիչ և յեկել շեփություն վերցնելու իր հայրենի գյուղի վրա և... աջակցելու նրա կուլտուրական և տնտեսական բարձրացման ձանապահին... այն գյուղի, վոր առաջ քոլսվաներ ուներ՝ կաշառուկեր ու վաշխառու, վորի գաշնակիցը տգիտությունն եր ու տերտերը մեկ ել:

Սիսակը, յերաժշտության ձայնակցողի նման, ճառի համար արտասանելիս իր բարձր հնչյունների տակ, կարողանում եր զեկավարել ու հաշիվ տալ իր լուր մտքերին: Նա կարողանում եր հասկանալ նույնիսկ և այն, թե ինչու այդ նույն Սիսակը մի տեղ բազագոլ եր, ու վոչ մի արգելք չկար, վոր նա ծիառող ել դառնար, իսկ այսոր ակտիվիստ կոմյերիտ և ու պատվավոր ներկայացուցիչ մի պատվավոր հիմնարկի կողմից: Այն, շրջապատճ ու պայմաններն այդպիս ուժեղ կամք ու ձեռք ունեն ամեն կողմ մղելու մարդուն. այս ել եր հասկանում Սիսակը:

Յեվ այսոր Սիսակի աչքի առաջ այդ նույն գյուղն եր, ինչ վոր թողել եր ինքը... Վոչ, նույնանուն նոր գյուղը, առանց քոլսվայի, գյուղիսորհրդով ու կոմքի ջով, ըոլորը ջահել իրեն նման—25-ից ցածր տարիքով:

Գյուղն ել և փոխվել իրեն, Սիսակի նման: Այն նույն շրջապատի ու պայմանների ուժեղ կամքն ու ձեռքը նրան ել և փոխել, թեև վոչ այնպես հիմնովին, ինչպես Սիսակին: Հիմա իրենց գյուղն ավտո յե յեկել՝ միջին վոճակին, վոչ գուբեռնատոր... եկզեկուցիայի համար, այլ քաղաքի մի գործարանի ներկայացուցիչներ—յերեք բանվոր, վորոնցից մինը՝

բանվորուհի Շուշիկը: Սա յել իր ասելիքն ունի թէ  
քնդկանուը ժողովին, և թէ գյուղի կին-բաժնին ա-  
ռանձին:

Ի՞նչ կար անհնարին ու զարմանալի, յեթե Սի-  
ամեկի վառ յերևակայությունը պատկերեր գալիք որերն  
են, և տեսներ իր հայրենի գյուղը... Ո՛, ներողու-  
թյուն... առհասարակ բոլոր գյուղերը. նախ՝ կոլեկ-  
տիվացած, ապա թե սոցիալիզմի շրջանում: Վոչինչ:  
Սիսակը վերջացրեց իր ճառը: Ծերերը գովեցին նրան  
ու հիշեցին հորը՝

— Փառքդ շատ, ենպես անլեզու հորից եսպես ել  
լեզվանի տղմ:

Շուշիկն ու Գրիշան ել խոսեցին. վերջը բերած  
նվերները տվին դյուղին—մի գեղեցիկ կարմիր դրո-  
շակ՝ Կարլ-Մարքսի վոսկեներկ նկարով և պլակատ-  
ներ, լողունգներ, գրականություն:

Ժաղովը ցըվեց մեծ հաճույքի տակ: Յերկու հոգի  
ընտրվեցին, վոր փոխադարձ այցելության զնան  
իրենց շեֆին, վերադարձող ընկերների հետ: Դյուղի  
փոխադարձ նվերներն իրենց բերքի նմուշներն եյին,  
վոր բերին ընկերների ճանապարհ ընկնելուց քիչ  
առաջ և ընդունվեցին խանդավառությամբ: Բայց ավ-  
տոն շարժվելուց առաջ կատարվեց Սիսակի համար  
այն անսպասելին, վոր նրա վառ յերեակայությունն  
անդամ հնարավոր չեր համարել:

Նուր հասարակության մեջ նշարվեց Ակոր ա-  
մին, աջ բռնում չիրխի գլուխը, իսկ ձախ կուռը իրեն  
սղմած, վորից ուսը բարձրացել եր մի քիչ: Յերբ  
ճնշաս բարով ասողների շարքում ներթը նրան հա-  
սավ ու Սիսակը ժպիտն աշքերուս՝ ձեռքը մեկնեց՝

Ակոր ամին նույնակես ժպտաց: Զեռքը փոխս տվավ,  
չիրուխը տվավ ձախին ու, աջով ձախ կոնատակից  
հանեց մի բան: Սիսակի աշքերն այնքան լայնացան  
այդ բողեյին, վոր ասես թե շարունակվելու եյին  
այդպես անվերջ:

— Առ քու ամանաթը, բալա ջան, գիշամ, մըտ-  
քովդ անցկացած կլի, թե Ակոր ամին իրա տղի, յա-  
թոռի գլխին դրած կլի, մաշած...

Սիսակը չիրղեց նա խոսքը վերջացնի, խից նրա  
ձեռից իր յոթը տարի առաջ, մութ գիշերին նրանց  
բաղումը թողած մորթե չալ փափախը:

— Ոճորքումը դրած, պահում ի, վոր քեզ տամ,  
ամմա ուսուա չիր գալիս,—վերջացրեց իր կիսատ խոսքն  
Ակոր ամին:

Զգարմանաք, վոր ասեմ,—հուզվեց Սիսակը, ու  
զրկեց, համբուրեց են վոտից գլուխ անհարմար, ան-  
նշան ծերունուն:

— Սրանից թանգ բան ինձ տալ չեմիր կարող,  
չնորհակալ եմ, Ակոր ամի:

— Վոչինչ, բալա ջան, ի՞նչ եմ արեւ վոր շնոր-  
հակալ ես...

— Զե, Ակոր ամի, քու արտծն ենքան մեծ ա-  
ինձ համար, վոր միշտ յես պարտական եմ զզում քո-  
առաջ: Հիմա յել եսպիսի թանգագին բան: Ասա, դե-  
յմս ինչ ուղարկեմ քեզ համար, վոր տեղը բռնի. սըր-  
տով եմ ասում, մի քաշվիր:

Ակորը ծիծաղեց:

— Ի՞նչ պատես դրկի, արևիդ մատաղ, մին պո-  
զերը գլխին գոմեշ... (ու քմծիծաղեց քթի առաջ իր  
զերը գլխին գոմեշ...)



ասածի վրա)...մին ել վոր գալու ըլես, մին պաշկա մա-  
խորկա կրելես:

Վոր չամաչեր Սիսակը, նորից կհամբռւրեր նրան,  
այդքան մի համեստ ցանկություն համար: Սրադ գըր-  
պանները կոխեց ձեռները և շտապ խուզարկությու-  
նից հետո՝ հանեց ծխախոտի լիքը մի տուփ և կոխեց  
Ակոբի բուռը:

Ծուռ ու մոռու տվավ նու տուփը. չեր ել իմա-  
նուս, թե վոնց բաց անի: բաց արավ մի ճնարքով ու  
նորից ժպատց:

— Վերցրու, քե մատաղ, աս մեր բանը չի, մեզ  
համար ինչքան պրոստոյի ըլի, ենքան բավ: Ու միջից  
2 հատ միայն հանելով՝ մնացածը մեկնեց Սիսակին:

— Պահիր, Ակոբ ամի՞ եղ՝ հեշ. խեկ թե կնտե-  
ղից ինչ կողարկեմ քեզ համար՝ եղ՝ ել իմ գործն աւ  
Ավտոն բառաշեց ու գլորվեց: Սիսակի, Գոփին ու  
Շուշիկի կողքին ուրիշ յերկու հոգի յել տեղավորվե-  
ցին ավտոյում: Դրանք գյուղի ներկայացուցիչներն  
եյին:

Յերկու կողմից ել գլխարկներ բարձրացան՝ թէ  
ավտոյից և թե կանգնած ամբոխից: Մի յերկու ան-  
դամ ծուխ արձակեց ավտոն, մի յերկու անդամ՝ ճիշ-  
ու ծածկվեց դիմացի թմբի յնտեն ինքն եւ իր միջի  
մարդիկն ել:


~~~~~


## Բայակայ անդքարու

|                   |       |    |
|-------------------|-------|----|
| 1. Անդքայի Տեք.   | ----- | 3  |
| 2. Վասիլ աղայ     | ----- | 25 |
| 3. Զորակայակ      | ----- | 38 |
| 4. "Դժիկի Զամքան" | ----- | 47 |
| 5. Ջաղաշօ         | ----- | 68 |
| 6. Կոր Ֆիջոս      | ----- | 85 |
| 7. Ճործ ջայր աղայ | ----- | 96 |

Բ. Ական  
1/ii 79

Ժ. Երևան





ՀՀ Ազգային գրադարան



NL0358250

43584

891.99

U-64